

Լ. Գ. ՏԵՐԵԽՈՎԱ. ՅԵՎ. Վ. Գ. ԵՐԻԿԵԼԻ

# ԱՇԽԱՐՀԱԳՐԻԹՅՈՒՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԴԱՍԱԳԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՐՈՑԻ  
ԶՈՐՈՐԴ ՀԱՍՏԱՏԻ ՀԱՄԱՐ



ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936

Հ. Գ. ՏԵՐԵՆՈՎԱ ՅԵՎ. Վ. Գ. ԵՐԴԵԼԻ 10 NOV 2011

91(075)

S-39

մե

# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## ՅԵՐԿՐՈԴ ՄԱՍ


ԴԱՍՏԳԻՐՔ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՔ  
ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍՏՐԱՆԻ ՀԱՄԱՐԸ

Ծերող իրատակություն

Հաստատված և Ռ-ՍՖԻՀ Լուսժողկոմատի կողմից

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ 1936



# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## I. ԽՍՀՄ-Ի ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ) գտնվում է արևելյան կիսազնդում, յերկու աշխարհամասերում՝ Յեվրոպայում և Ասիայում։

Գլոբուսի և կիսազնդերի քարտեզի վրան գտեք Յեվրոպա և Ասիա աշխարհամասերը։ Նայեցեք, ԽՍՀՄ-ն Յեվրոպայի և Ասիայի վա՞ր մասերում և գտնվում։



Նկ. 1. ԽՍՀՄ տարածության վրա ազատ կերպով կարող են տեղափոխել գլխավոր կապիտալիստական պետությունները

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միունիունը յերկազնդի ամենամեծ պետություններից մեկն է:

ԽՍՀՄ-ն բռնում է ամբողջ բնակված ցամաքի վեցերորդ մասը: Արևմուտքից դեպի արևելք նա ձգվում է 10 հազար կիլոմետր, իսկ հարավից դեպի հյուսիս՝  $4\frac{1}{2}$  հազար կիլոմետր յերկարությամբ:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա Միության արևմտյան սահմանի մոտ գտնեք Մինսկ քաղաքը. նույն քարտեզի վրա արևելյան սահմանի մոտ, Յավոննական ծովի ափին, դուք վաղիվոսողի քաղաքը: Ցույց տվեք այն յերկաթուղին, վոր միացնում է այդ յերկու քաղաքներն իրար հետ: Արագընթաց դնացքն այդ առածությունն անցնում է 13 որում:

ԽՍՀՄ-ի Յելբուգական և Ասիական մասերն իրարից բաժանվում են Աւրայշան լեռներով, Ռելալ գետով, Կասպից ծովով և Կովկասյան լեռներով:

Քարտեզի վրա դուք ԽՍՀՄ-ի Յելբուգական և Ասիական մասերի միջև յեղած սահմանը:

## ԽՍՀՄ-ի ԾՈՎԱՅԻՆ ՍՍՀՄԱՆՆԵՐԻ


Նայեցեք քարտեզին:

Մեր Միության ափերը զանազան կողմերից վողողվում են ծովերով: ԽՍՀՄ-ն այդ ծովերի վրայով առևտուր և անում ուժ բեր յերկրների հետ:

Հյուսիսային կողմից Միության ափերը հազարալոր կիլոմետր տարածության վրա վողողում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը: Ինչպես գիտեք, այդ ովկիանոսը ցուրտ գտնում է գտնվում: Նրա մի զգալի մասը ծածկված է սառուցյներով վոչ միայն ձմեռը, այլև ամառը: Սառուցյները խանգարում են նաև վագնացությունը Սառուցյալ ովկիանոսում:

Միայն արևմտյան մասում՝ Կոլա թերակղզու և Նոր Յերկիր կղզիների միջև Սառուցյալ ովկիանոսի մի մասն աղատ և սառուցյներից: Դա Բարենցի ծովն է: Առլանտյան ովկիանոսից անցնում է այստեղ Գոլֆարոմ տաք հոսանքը: Առ տաքացնում է Բարենցի ծովը, և ամառը սառուցյները քաշվում են հեռու դեպի Հյուսիս:

Բարենցի ծովը Կոլա թերակղզու ափերի մոտ չի սառչում. նույն ձմեռը:



Նկ. 2. Բարենցի ծով


Բարենցի ծովից դեպի հարավ ցամաքի մեջ է մտնում Սպիտակ ծովը: Այստեղից անցնում է ծովային կարճ ճանապարհը դեպի Արևմտյան Յելբուգայի յերկրները՝ Գերմանիա, Անդլիա, Ֆրանսիա: Շատ չոգենավեր մտնում են Ֆիննական ծոցը. Նրանք բերում են արտասահմանյան ապրանքներ և տանում են մեր ապրանքները:

Միության Յելբուգական մասի հարավային կողմը գտնվում է Սև ծովը: Սա տաք, չսառչող ծով է, զբանով մեր հարավային նավահանգիստները կատվում են արտասահմանի հետ:

Հյուսիսից Սև ծովի մեջ է մտնում Ղրիմի քերակղզին, վորը Սև ծովը բաժանում է վոչ այնքան խոր Ազովի ծովից:

Միության արևելյան ծովային սահմանը կազմում են Մեծ Կամ Խաղաղ ովկիանոսի ծովերը՝ Բերինգյան, Ոլսուտյան և Ճապոնական: Բերինգյան և Ոլսուտյան ծովերն իրարից բաժանվում են Կամչատկա թերակղզով: Սառուցյները դժվարացնում են նաև վագնացությունն այդ ծովերում: Ոլսուտյան և Ճապոնական ծովերի միջև գտնվում է Սախալին կղզին: Սախալինի հյուսիսային կեսը պատկանում է Խորհրդային Միությանը, իսկ հար-

վային կեսը՝ ձապոնիային։ Այդ ծովերից ամենատարեսը ձապոնական ծովն է։ Նրա միջոցով մենք կապվում ենք Մեծ ովկիանոսի հետ։



Նկ. 3. Սև ծով

Վարժություններ. 1. ԽՍՀՄ-ի կոնսուրային քարտեզի վրա ծովային սահմանների վրայով կապույտ գիծ քաշեցեք և ապա իրենց տեղերում զրեցեք Միության վերը բերած ծովերը, կղզիները և թերակղզիները։ Հեշեցեք գրանց անունները և դիբքը քարտեզի վրա։

2. Քարտեզի վրա ցույց տվեք այն ծովային հանապարհը, վոր Ֆիննական ծոցից տանում և Անդիխ։

3. Քարտեզի վրա ցույց տվեք Սև ծովից Ֆրանսիա, Վլամիվոստոկից ձապոնով տանող ծովային հանապարհները։

### ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻ (Սահմանակից պետությունները)

Խորհրդային Միության մերձականոր Հարեւաններն են արևմուռքամբ՝ Ֆինլանդիան, Սատանիան, Լատվիան, Լիետավան,

Ուսմինիան. Հարավում՝ Թյուրքիան, Իրանը (առաջ Պարսկաստան եր կոչվում), Ավղանստանը, Չինաստանը, Տուվինյան ժողովրդական հանրապետությունը, Մոնղոլիան և ձապոնիայի գերիշմանության տակ գտնվող Մանչուրիան և Կորեան, Սախալին կղզու վրա՝ ձապոնիան։

Գտեք այդ պետությունները քարտեզի վրա։

ԽՍՀՄ-ն միակ պետությունն է ամբողջ աշխարհում, վորտեղ իշխանությունը պատկանում է բանվոր գասակարգին և աշխատավոր գյուղացիությանը։

Խորհրդային Միության բանվորա-գյուղացիական իշխանությունը միաև իշխանությունն է ամբողջ յերկրագնդի վրա, վորը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ պայքարում է յերկրագնդի բոլոր ծովովուրդների միջև խաղաղություն հաստատելու համար։

Խորհրդային Միության ժողովուրդները պատերազմ չեն ցանկանում, բայց նրանք ամեն մի բոլեք պատրաստ են պաշտպանելու իրենց սոցիալիստական պետությունը։ Կարմիր բանակն արթուն պահպանում է Միության սահմանները։

Վարժություն. Միության կոնսուրային քարտեզի վրա ցամաքային սահմանների վրայով կարմիր գիծ քաշեցեք և ապա գրեցնեք սահմանակից պետությունների անունները։

### ԽՍՀՄ-Ի ՄԱԿԵՐԵՎՈՒՅՑԹԸ

Դիտեցեք ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզը։

Քարտեզի մեծ մասը ներկված է կանաչ գույնով։ Դա ցույց է տալիս, վոր ԽՍՀՄ-ի մեջ ցածրադիր հարթություններ չափանիկան։

Քարտեզի վրա նշանակված են յերեք մեծ դաշտավայր՝ Արևելյան-Յելլովուրական, Արևմտյան-Միքրիական և Թուրքանի։

Քարտեզի կանաչ գույնի մեջ տեղ-տեղ յերկում են բաց գեղագուն բծեր։ Դրանք բարձրություններն են։ ԽՍՀՄ-ի Յելլովական մասում գտնվում են Միջին-ուստական և Մերձուգյան բարձրությունները, Ասիական մասում՝ Արևելյան-Միքրիական բարձրությունը։



Նկ. 4. Հարքություն


ԽՍՀՄ-ի համարյա սոմբողջ հարտվային և արևելյան սահմանի յերկարությամբ, ինչպես և ԽՍՀՄ-ի Ասիական և Յեվրոպական մասերի միջև պարզ յերկում են դարչնադույն շերտեր—գրանք լեռները են: ԽՍՀՄ-ի Յեվրոպական մասում գտնվում են Ղրիմի լեռները, ԽՍՀՄ-ի Յեվրոպական և Ասիական մասերի միջև ձգվում են Ուրալյան և Կովկասյան լեռները: Ավշանստանի և Զինաստանի սահմանամերձ շրջաններում բարձրանում են Պամիր լեռնաշխարհը և Տյան-Շան լեռները, Զինաստանի և Մոնղոլիայի սահմանամերձ շրջանում—Ալտայան լեռները:

Վարժույքուններ. 1. ԽՍՀՄ-ի Փիզիկական քարտեզի վրա ցույց տվեք և հիշեցեք վերը բերած գաշտավայրերը, բարձրությունները և լեռները:

2. ԽՍՀՄ-ի Փիզիկական քարտեզի վրա դիտեցեք «ամենաբարձր զագաթները» նկարը և ապա դաշեք այդ զագաթները քարտեզի վրա:

### ԽՍՀՄ-ի Գլխավոր Դեմքերն ՈՒ ԼՃԵՐԸ

ԽՍՀՄ-ում մեծ գետեր շատ կան: Նրանցից մի մասը սկիզբն է առնում բարձրություններից, մի մասն ել բարձր լեռներից:



Նկ. 5. Բայկալ լիճ

Քարտեզից յերեսում ե, վոր Խորհրդային Միության գետերը հոսում են գանաղան ուղղությամբ, դեպի նրա ափերը վողողող բոլոր ծովերը:


Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսն են թափվում հետեւյալ մեծ գետերը՝ Հյուսիսային Դվինա, Պեչորա, Որ, Յենիսեյ և Կենա:

Ուսույն ծովն ե թափվում ջրառաս Ամուրը:

Դնեպրը թափվում է Սև ծովի մեջ, այս գետի վրա կառուցված և Դնեպրյան ելեկտրակայանը:

Դնեպրից գետի արեւելք Ալովի ծովն ե թափվում Դոն գետը: Նա ամառն այնքան է բարակում, վոր առաջ են գալիս ծանծառուտներ: Մանծաղուտները խանդադարում են նավագնացությունը:

Կոստրից ծովն ե թափվում Վոլգան, վոր Միության Յեվրոպական մասի ամենամեծ նավագնաց գետն է: Նրա մեջ շատ



Նկ. 6. Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում

ըստ Խորհրդային Միությանն են պատկանում: Նրան են պատկանում նաև այն բոլոր կղզիները, վորոնք գտնվում են Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի Միության կից մասում:

Դա ԽՍՀՄ-ի ամենահյուսիսային մասն է, Միության քեռուային զոնան է:

Դաժան և բնեուային զննայի բնությունը: Զմեռը մի քանի ամիս չարունակ արեն այս աշխարհում բոլորովին չի ծագում, իշխում ե քեռուային զիշերը: Կոլա թերակղզու հյուսիսային ափերում այդ քեռուային զիշերը տեսում ե 2 ամիս, նոր Յերկիր կղզում՝ 4 ամիս, իսկ հյուսիսային քեռուայի կես տարի:

Ամառը, ընդհակառակը, արեք բոլորովին մայր չի մտնում քեռուային ցերեկ և լինում:

Բայց արեք կեսորին շատ չի բարձրանում և այդ պատճառով թույլ ե առաջանալ:

**Զմեռը:** Դեպի ամեն կողմ տարածվում է սառցե անսահման անապատը: Հսկայական սառցալաշտերը պատել են ովկիանոսը: Նրանք չարժվում են իրար ճնշելով: Ճայթյունով ու գղրղոցով ջարդվում են սառուցյները և կուտակվելով սառցակույտեր՝ «տորոսներ» առաջ բերում:

Սուկալի սառնամանիքներ են. ճյունախառն վաթորիկը, բուք ու բորանը կատաղի յեն:

Արդեն մի ամբողջ ամիս ե, վոր ամեն ինչ պատաժ ե բեկուային զիշերվա խավարով: Կյանքը կանդ և առել: Բոլոր կենդանի եակները թաղնվել են: Սառցե անապատով յերեմն միայն անյնում ե սպիտակ արջը:

Յերեմն յերկնեքը որպես լուսավորվում ե աստղերի վայրով և լուսնի լույսով: Յերեմն ել յերկնակամարի վրա շողջողում ե հյուսիսափայլը:

**Ամառը:** Արեւ մի քանի ամիս չարունակ լուսավորում ե և բոլորովին մայր չի մտնում: Ովկիանոսի մակերեսութի վրա սառուցյն սկսում ե հալլել: Սառցալաշտերը կոտրասկում, ջարդվում են: Նրանք հալլում են շատ դանդաղ, և ամբողջ մասվա լնթացքում լողում են ովկիանոսում:

Սառուցյների վրա տաքանում են փոկերը: Յերեսում են խըմբերով անհաշիվ տառեիներ, ծողաձկներ ու այլ ձկներ:

Նոր Յերկիր կղզիների ժայռոտ ափերի մոտ յերեսում են ծովացույերի մեծ հոտեր: Խոկ Ասիայի ափերի մոտ՝ կետեր:


Առաջադրություն. 1. Կիսագնդերի քարտեղի վրա զտեք Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի այն մասը, զոր պատկանում ե Խորհրդային Միությանը:  
2. Գտեք հետեւյալ ծովերը՝ Բարենցի, Սպիտակ և Կարայի:

### ԲԵՎԵՌԱՅԻՆ ԿՂՋԻՆԵՐ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի սառցապատ մակերեսույթից բարձրանում են բաղմաթիվ մեծ ու փոքր կղզիներ:

Բևեռային կղզիներում տարվա մեծ մասը ձմեռ և ընում է կղզիներն ովկիանոսի հետ միասին պատաժ են սառուցյներով ու ծածկված են ճյունով:

Բնությունն այստեղ կենդանում է միայն 2—3 ամսվա ընթացքում : Զյունը և սառուցները հարվում են : Քարաժայռերը մերկանում են : Տեղտեղ յերեսում է աղքատ բուսականություն՝ գույնզգույն քուեր, մամուռների կանաչ բարձեր (իսկ մամուռի մեջ փոքրիկ ծաղիկներ), բանային կակաչներ, անմոռուկներ, զանգակիկներ :



Նկ. 7. Թուչնի շուկա

Կղզիների ծովափնյա ժայռերի վրա հալաքվում են բաղմաթուներ : Այստեղ բուն շինելու և ձագեր հանելու համար հարավից չվում են այդերուկները, սուզահավերը, վորուները : Յերեմն սրանց բների շարքը տարածվում է մի քանի կիլոմետր : Թուչնների յերամներն ամպերի պես սնցնում են ժայռերի վրայով : Թուչնների աղմուկը լցնում է ողը : Զուր չե, վոր այդ տեղերն անվանում են քոչնի շուկա :

Բայց ամառն այդ բևեռային կղզիների վրա կարճառուե է : Դեռ ձյունն ու սառուցնը բուլրովին չհալված, նորից գալիս են ցրտերը : Թուչնները թռչում են գեղի հարավ և ձմեռը կրկնու վերադառնում են :

Դաժան և բևեռային կղզիների բնությունը : Մարդիկ միայն վերջերս են սկսել բնակչություն հաստատել նրանց վրա :

### ՆՈՐ ՅԵՐԿՐՈՒՄ

Առաջին բնակիչները : Վաթսուն տարի առաջ Նոր Յերկիր կղզիների ափին մոտեցավ մի նավ, վորի վրա գտնվում եյին նենց արգյունաբերողներ—Ֆոմա Վիլկան իր ընտանիքով և ընկերներով :

40/17  
40/24/


ԽՍՀՄ-ի քարտեզի վրա դտեք Նոր Յերկիր կղզիները :

Նրանք ափ իջան, բարձրացան ժայռերը : Վիլկան նայեց իր շուրջը : Աև ժայռոտ լեռներ, տեղ-տեղ ծածկված ձյունով, մեկ ել ծերպերում մամուռ... Վո՛չ մի շունչ... Վո՛չ մի ձայն : Մարսափը պատեց նրանց :

Մատօռմ եյին վերադառնալ տուն, բայց յերբ ծովափին մի կիսախարխու խրճիթ դտան, վորոշեցին մնալ : Տեղը նրանց արգյունաբերության համար բավական հարմար եր՝ հեռու տեղերից գալիս եյին այստեղ փոկերի մեծ հոտեր, լիսներում թափառում եյին յեղջերուներ :

Վորսորդները շատ գաղանեցին և սկսեցին հայրենիք վերադառնալու պատրաստություն տեսնել : Բայց Վիլկան չցանկացավ տուն վերադառնալ, նա իր կնոջ, յերեխաների և մի ընկերոջ հետ մնաց այս կղզում : Խըճիթ շինեցին : Մթերքների և վառողի բավականաչափ պաշար ունեյին :

Յեկավ ձմեռը : Ծովը ծածկեց սառուցյով : Արեւ թաղնվեց, քամիներն աղմկեցին : Սուլաց փոթորկիը : Ամեն ինչ ծածկեց ձյունով : Ծանր եր ձմեռը : Տնակը համարյա ամբողջապես թաղվել եր խոր ձյունի մեջ . ստիպված եյին լինում ծխնելույզով դուրս զալ : Արջերը շատ անդամ մոտեցան տնակին ուտելու րան ճարելու համար : Բայց ամենից ծանրը մթությունն ու ցուրտն եր : Վիլկայի ընկերն այնպես ել գարնան արև չտեսավ—մեռավ :



Բայց ահա յերեաց արելը : Յեկավ գարունը : Սասույցը շարժակեց դեպի ծովը : Սառույցների վրա յերեացին փոկեր : Յեկան թուչունները : Լեռներից աղմկելով ցած հոսեցին հեղեղները : Վելկան շատ ծովային գաղաններ ու թուչուններ խփեց :

Բայց նա կարոտել եր մարդկանց : Նա նավով պառւյտ կատարեց նոր Յերկրի շուրջը, վորպեսզի մի վորեե մարդ գտնի : Սակայն վոչ վոքի չհանդիպեց :

Չմեռը յեկավ ու կրիին անցավ : Հետեւալ գարնանը նա հանդիպեց արդյունաբերողների, վորոնք առնդրայից եյին յեկել—Վիլկան իր ամբողջ վորով վաճառեց արդյունաբերողներին և փոխարենը ձեռք բերեց վառող, հրացան և մթերքներ : Արդյունաբերողները վերադարձան տուն և պատմեցին, վոր նոր Յերկրում առատ վորս կա և վոր այնտեղ ապրում ե և վորսորդությամբ ու ձենորսությամբ ե զբաղվում Վիլկան :


Այն ժամանակ տունդրայից չքաղլոր նենեցներն սկսեցին նոր Յերկրի փոխադրովել : Այսպես հիմնվեց առաջին բնակավայրը նոր Յերկրում :

Նոր բնակիչներն արտել կազմեցին և Վիլկային ել ավտք ընտրեցին : Ծանր եր նոր Յերկրի առաջին բնակիչների կյանքը : Շատերը նրանցից մեռան, վորը լնդախտից ու սովից մեռավ, վորը ծովում խեղզվեց, վորը սառույցների տակն ընկավ, ջարդվեց, կամ սառույցը նրան բաց ծով տարավ, կորցրեց :

Ինչպես փոխվեց կյանքը նոր Յերկրում : Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կյանքը մեծ փոփոխության յևնթարկվեց նոր Յերկրում :

Նոր Յերկրում այժմ չորս գյուղ կա . բնակիչների թիվը հասնում է 300-ի : Նենեցները կազմել են վորսորդական արտելներ : Ծովային գաղաններ խփելու համար նրանք այժմ մոտորային նավակով են ծով գուրս զալիս : Նրանք ձեռք են բերում մեծ քանակությամբ բևեռային աղբեսի, արջի մորթի :

Տարին յերկու անգամ նոր Յերկրի են ուղեռվում շողենավեր, վորոնք նենեցների համար փոխադրում են զանազան աղբանքներ, վառող, զենք, իսկ դրանց փոխարեն նենեցներից ստանում են մորթի, ճարպ :



Նկ. 8. Նոր Յերկրում


Կառուցվել ե գպրոց, յերկու հիվանդանոց, յերկու ուստիույան, կազմակերպված ե հետազոտական կայան, արդտեղ կայնում ուսումնասիրում են նոր Յերկրի բնությունը :

Նոր Յերկրում կա նորհուրդ, վորը կարգավորում է նոր Յերկրի բնակիչների կյանքը : Առօրդիկ նախագահը Վիլկայի աղջից է :

ԲԵՎԵՌԱՅԻՆ ՎՈՐՍԱՐԴՅՈՒՄԵՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Շատ ծովային գաղաններ, ձկներ ու թուչուններ կան իԱՀ Միության բեկուային գոտում :

Այս հարստություններն ողտագործելու համար խորհրդային կառավարությունն այսեղ կազմակերպում է բեկուային վորսարդյունաբերական տնտեսություն : Կազմվում են ձկնորսական և վորսորդական կուեկտիվ տնտեսություններ, հիմնվում են ձըկնորսական բաղաններ :



Նկ. 9. Փոկերի վորս

Յուրաքանչյուր բազա տասնյակներով վորսորդական ու ձըկ-նորսական նավեր ունի:

Վորսորդներին և ձկնորսներին ողնում են սառցահատ նա-վերը, սալառնակները և ռադիսն:

#### ՓՈԿԵՐԻ ՎՈՐՍԼ ՍԱՌՅԱՀԱՏՈՎ

Գարնանային արեի տաք ճառագայթների տակ թափանցիկ, կապտավուն սառուցների վրա տաքանում են փոկերը: Նրանք հաղարներ են: Տաքանալով նրանք ժամերով նիրհում են, յեր-բեմն միայն կողքից-կողք դառնում:

Զի քնում միայն ծեր, փորձված փոկը—պահակը:

Յերկնքում յերեաց մի սալառնակ: Դա հետախույզ՝ և բարձրացել սառցահատից և փոկերի հոտ և փնտռում: Ողաչուն տեսավ փոկերի հանգստի տեղը և ռադիսոյով հաղորդեց սառցա-հատին:

Շուտով հեռվում յերեում և սառցահատը: Վորպեսղի փոկե-րը չփախենան ու փախչեն, նա կանդ և առնում փոկերից բավա-կան հեռու: Վորսորդները հազնում են սպիտակ խալաթներ և իջ-

նում սառույցի վրա: Նրանք հրացանները ձեռքներին կամաց մոտենում են փոկերին: Ամենալավ հրացանաձիգը դնում է առ-ջեկց: Անշեղ հարվածով սպանում է պահապան փոկին:

Սկսվում է արագ կրակոց և կարճ ժամանակամիջոցում սպանվում են հարյուրից ավելի փոկեր: Հրացանաձիգներն առաջ են դնում:

Հրացանաձիգներին հետեւում են քերթողները: Նրանք ունեն մեծ, սուր դահակներ: Նրանք սպանված փոկերից հանում են կաշին և ճարպը:

Գալիս և սառցահատը, բարձում է վորսը և շարժվում դեպի փոկերի նոր հանգստավայրը. ողաչուն այդ մոտին արդին ու-դիոյով իմաց և տվել:

#### ԶԿՆՈՐՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Կուա թերակղզու հյուսիսային ափին, այստեղ-այնտեղ ցըր-ված են ձկնորսական կայտններ, ձկնորսական բազաներ:

ԽՍՀՄ-ի քարտեզի վրա զտեք Կուա թերակղզին:


Հաճախ դալիս են այստեղ առաջատային և մոտորային նավեր և ծովածոցում խարիսխ ձգում: Վոմանք ձուկ են բե-րում, իսկ վոմանք, վերցնելով պաշար, սարք և խայծեր, գնում: Են վորսի:

Յերբ ձկան վորսն սկսվում է, նավերն անընդհատ ձուկ են կրում: Զուկը նավահանգստում դատարկում են, դարսում տա-կառների մեջ, վրան աղ ցանում և չողենավերով վոխալբում պահեստները:

Չողաճուկը սովորաբար ծովափերին մոտենում է խիտ շեր-տով, վոր ունենում է մի քանի կիլոմետր յերկարություն և լայ-նություն: Նույնպիսի խիտ և մեծ շերտով և շարժվում նաև տա-ռեիրը: Սա կանգ և առնում ափերի մոտ և մտնում է խաղաղ ծո-վախորչերը: Հենց այստեղ ել նրան ուռկաններով փակում են և վորսում մեծ շերեփներով, պարկերով և դույլերով:

Զուկն աղ են դնում, չորացնում, ձուխ տալիս:

Մեծ քանակությամբ ձուկ վորսում են մանավանդ տրաս-



Նկ. 10. Զկան վորս տրասուերամ

լերներով։ Խորհրդային նոր տրասուերը մի տմբողջ լողացող գործարան է։

Նա վոչ միայն ձողածուկ և վորսում, այլև այդ ձուկը մշակության և յենթարկում և դարձնում տրասուառի մթերք։

Հենց վոր տրասուերը ծովի և դուրս գալիս, նրա վրա գոնը վող սաղինուկայանն սկսում և իր աշխատանքը։ Մաղիսուը կապվում և այն բոլոր տրասուերների հետ, վորոնք այդ ժամանակ դանիվում են ծովում։ և, ձեան շարժման մասն ստացած տեղեկությունների հիման վրա, նախագետը նշում և վորսի տեղուածությունը առաջանում է։

Տրասուերն ուղեկորզում և զեղի նշած կետը։ Տրալլ (հատուեկ ցանց) իջեցնում են ծով։ Նամիւ շարժման մասն և վորսի տեղուածությունը առաջանում է։

Մի ժամեց հետո տրալլը հանում են, ճախարակի միջոցով բարձրացնում և ձուկը մասնայորեն «հոսում ե» տախտակամածի վրա։ Տրալլը ժամը մեկ բարձրանում և և ամեն անդամ իր հետ բերում մօտ հաղար կիլոդրամ ձուկ։

Սկսվում է ձեան մշակուամը։ Զկնորս-հայլաստիները կազմուակերպում են կենդանի կոնվեյեր։ Մեկը մեծ պատառաքաղով բոնում է ձողածուկը և դնուամ յերկաթե թիթեղով պատած մաքուր սեղանի վրա։ Յերկրորդ նախաստին կացնի ճարպակածով կտրում է ձեան գլուխսը։ և գլխատած ձուկն սկսում է սողալ սեղանի հարթ, փայլուն մակերեսույթով, այստեղ ճարպիկ ձեռքերը բոնում են ձուկը, սուր դանարկով փորը ձեղքում։

Ձուկը ձեռքից ձեռք և անցնում։ Հանում են նրա մաշկը, սուր դանարկով նրան յերկարությամբ յերկու մասի յեն բաժանում և հանում վողնաշարը։ Զկան փափուկ մասերն աղ և դնում և տրյում տեղափոխում։

Հենց այստեղ ել, տրասուերի վրա վոսկորներից վոսկորային ալյուր են պատրաստում, իսկ ձողածկան լյարդից ձեան յուղ են հանում, վորը գործ և ածվում վորսես բժշկական միջոց և սննդարար նյութ։

### ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՐՎԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մեր Միության հեռավոր հյուսիսում բնական շատ հարբատություններ կան։ Լայն շերտով հազարավոր կիլոմետր տարածության վրա ձգվում են գարավոր անտառներ, այդ անտառներում շատ թանգարժեք մուշտակավոր գաղաններ կան։ Զանազան տեղերում գտնվել են ածուխ, նաևլթ, գրաֆիտ և ուրիշ սուսակար հանածոններ։

Բայց ի՞նչ ճանապարհով գուրս բերել այդ հարստությունները—տայգայի և տունդրայի ընդարձակ զժվարանցանելի տարածությունների վրայով։

Նայեցեք Խորհրդային Միության քարտեզին։ Բնդարձակ ջրառատ գետերը շատ տեղերում կտրում են Միության ամբողջ հյուսիսային մասը և իրենց ջերեր տանում գեղի Հյուսիսային Սառուցյալ ովկիանոս։ Այդ ովկիանոսով ամառը կարելի յե գնաւ Միության հյուսիսային ծովափի վորեւե կետը, ինչպես և ուրիշ յերկրներ։

Բայց Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսում նորվով ճանապարհովերը շատ վտանգավոր ե։ Սառուցյաներից շատ նավեր են


Խորտակվել այդ ովկիանոսում։ Խորհրդային կառավարությունը  
վորոշել և հետազոտել Հյուսիսային Սառուցյալ սվկիանոսը և  
բացել անվտանգ ծովային ճանապարհ Միության ամբողջ հյու-  
սիսային ափի յերկարությամբ։

Այս նպատակով ամեն տարի ուղարկվում են հղոր սառցահատներից և սպառնակներից բաղկացած գիտարշավներ. Նրանք ըստումնասիրում են բնեուային ծովերը:

Կղղիների վրա շինված են մի շարք բեկուային կայսններ, վորոնք շարունակ դիտում են յեղանակը և բեկուային սառուց-ների շարժումը։ Նրանք իրենց դիտողությունները ուղիղոյն հաղորդում են այն բոլոր նավերին, վորոնք լողում են բեկուային ծովերում։

Վերջին տարիներում խորհրդային սառցահատները կարայի ծովով ոտար չափ նավեր են անցկացնում:

Վերջին խորհրդային գիտարշավակները մի ամառվա ընթացքում կարողացան անցնել Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսը մեր Միության հյուսիսային ափերի մոտ :



Նկ. 11. Հյուսիսային ծովային նախապարհով կատարված  
ելսպեղիցիաների քարտեզը

Քորուսեղի վրա ցույց տվեք Սէրբոյակով, Զելյուսկին, Լիտկերի գիտաբշտիկների ճանապահների:

Բայց բենուային ծովերը դեռ լավ ուսումնասիրված չեն և նավելլ շատ տեղերում դեռևս շատ վտանգավոր են: Այդ պատճառով ել հյուսիսային բենուային ծովերի հետազոտությունը դեռ շարունակվում է: Կազմակերպվում են նոր դիտարշավիներ: Զանազան տեղերում կառուցվում են բնեուային նոր կայաններ:

Գաժան և կյանքը թեհուային կայաններում։ Մանը են նաև լուս պայմանները բեկուային ծովի սառուցյաների մեջ։ մեծ հաստատակամություն, տոկունություն և խիզախություն ունեն այն հարյուրափոր՝ խորհրդային աշխատավորները՝ ծովագնացներն ու դիտնականները, վորոնք կովի յեն բանվել Սառուցյալ ովկիանոսի գաժան բնության հետ Հյուսիսային մեծ ճանապարհի համար, մեր բեկուային ղոնայի յուրացման համար։

Աշխատանք արտադպյան ժամանակ, լըսպըների միջոցով հետեւյք թէ  
ինչ ճանապարհներով են անցնում այս տարվա զիտարշովները: Քարտեզի վրա  
փոքրիկ դրույակներով նշանակեցէք այդ նախերի անցած ճանապարհը:

«ԶԵՂՅՈՒՄԿԻՒԻ» ՅԵՐԱԾ

Այս հազարամյակում կարդալիս պետք է չարունակ հետեւ քարտեղին:

1933թ. ողոսառուին Մուրմանսկից գուրս յեկավ «Զելյուս-  
լին» բնեսային մեծ շոգենավը: «Զելյուսկինը» տանում եր գի-  
տարչավ Հյուսիսային Ծովային մանալարհն ուսումնասիրելու  
համար:

Գիտաբավի պետն եր հայտնի դիմուկան և բեռային հետազոտող Ռ. Յու. Շմիդտը; Շողենավը վարում եր փորձված սկզբանին կապիտան Վլարնինը:

Առաջին սառույցները: Առաջին յերկու որը «ԶԵՂՄՈՒՍԿԻՒԾ»  
անում եր Բարենցի ծովով:

Առաջարկ էր : Տաք : Միկ-մեկ պատահում ելին ձինորսական  
խոչը նավեր : Յերբեմն, ճեղքելով ջուրը, ծովի մակերեսույթի  
մրս յերկում ե կետի մեջքը :

ՅԵՐՈՐԴ որը շողենակը մոտենաւմ է Նոր Յերկրի ձյունապատ ժայռոտ ափերին և կդպիների միջև դանվող նեղուցով զուրացալիս կարածի ծովը:

կարայի ծովում շղենարիլը հանդիպում և հսկայական սա-

սույցների : Շուտով «ԶԵԼՈՒՍԿԻԲՆ» ընկնում ե անընդհատ, միապաղակ սառույցների մեջ : Սասույցները հսկայական ուժով դարձվում են չողենավի կողերին : Կապիտան Վարսնինը շաբունակ փոխելով նավի ուղղությունը, աշխատում ե թուլացնել հարժածները : Բայց դա քիչ է ոգնում : Մեծ սառույցների հետ ունեցած հենց առաջին ընդհարման ժամանակ «ԶԵԼՈՒՍԿԻԲՆ» ճեղքածք սահացավ : Գետք եր նորոգել նավը :

Վերջապես սառույցները դառնում են անանցանելի : «ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ» ստիպված ե կանդ առնել : Ռադիոյով ողնության են կանչում «Կրասին» սառցարարը, վորը հանում ե նրան ծանր սառույցների միջով : Շոգենավը շարսնակում ե իր ճանապարհը : Նրա վրա վոչ մի բողեք չի ընդհատվում կազմակերպված աշխատանքային կյանքը : Կատիպանն իր կոմբը չակից աշալուրջ հետեւմ ե ծովին : Գիշեր-ցերեկ լովում ե շտուրմանի հրամանը : Գիշեր-ցերեկ կանգնած են մեքենանալարները չողենավի կաթաների մոտ : Ցուրաքանչյուր չորս ժամը մեկ փոխվում ե նավատիների պահնորդությունը : Գիտական աշխատավորներն անընդհատ դրապված են հետազոտությամբ :

Շոգենավը դանդաղորեն առաջ ե զնում կարայի ծովով : Սառույցներից նա ընկնում ե մութ մառախուղների մեջ : Մասնաւորներից հաղիկ աղատվելով նա կրկին չըջապատվում ե սառույցներով :

Վերջապես, 17-րդ որը չողենավը մոտենում ե ԶԵԼՈՒՍԿԻԲՆ Հրմանդանին : Յեկ ի՞նչ ուրախություն : Այսուղ նա հանդիպում է Խորհրդային Միության բեենությին հինգ լավ նավերի :

«ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ» Զուկույան ծովի սառցե գերության մեջ : ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ հրվանդանից հետո չողենավին ամբողջ 10 որ զնում ե դեպի Բերինդյան նեղուցը, չհանդիպելով վօրհե արգելքի :

Արդեն հեռու չե վրահղելի կղզին, իսկ նրանից հետո մնում ե վերջին Զուկույան ծովը : Բայց աս ճանապարհի ամենադժվար մասն ե : «ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ» կրկին ծանր սառույցների մեջ ե լնինում :

Մասենում ե ճմեռը : Սառույցներն սկսում են իրար հետ միահար, սառչել : Շոգենավն ավելի ու ավելի դանդաղ է առաջ չարժվում : Յերբեմն սառույցներն այնպիսի մեջ ուժնում :

շում չողենավը, վոր նա շարժվում ե նրանց ճնշման ուժով : Ահա, վերջապես, Բերինդյան նեղուցը :

Բայց հանկարծ, բարորավին անսպասելի կերպով, սառույցները ճնշում են չողենավը դեպի հետ և նրան կրկին Զուկույան ծովը տանում :

Գալիս ե ճմեռը և սառույցները չփայտում են ծովը : Շոգենավը սառած մնում ե հսկայական սառցագաշտի մեջ... Ստիպված են ճմեռել սառույցների մեջ : Շոգեկաթսայի կրակարանները հանգնում են, վորպեսպի վառելիքը ինայիլի :

Բայց չելյուսկինցիները չեն վհատվում : Գիտական աշխատավորներն ավելի մեծ յեռանգով շարունակում են իրենց աշխատանքները : Բոլորն սկսում են ամենայն լրջությունը սովորել :

«ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ» ճմեռում ե Զուկույան ծովի սառույցների մեջ : Հսկայական սառցագաշտի հետ միասին նա թափառում ե ծովում :

Ծովը ծածկած սառցագաշտերն սեղմում են իրար : Սառույցները զզրպոցով և ճայթյունով կուրտավում, փշրվում են և իրար վրա կուտակվում : Անցնում ե գեկտեմբերը, հունվարը : Ահա արգեն փետրվարի 13-ն ե :

«ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ» վրա կյանքն ընթանում ե ինչպես միշտ, թեպետ այժմ ավելի հաճախ են լովում կուրտավու սառույցների հարվածներ ու ճարճատյուններ : Բայց բոլորն բնտելացել են դրան : Միայն նտի հրամանատարական կազմը Շմիդտի և Վոդրոնինի գլխավորությամբ աշալուրջ հետեւմ են սառույցներին և իդուր չեն հետեւում :


Հանկարծ ցերեկված ժամը 2-ին լսվում ե շշմեցնող հարված և սառցե վիթխարի պատը շարժվում ե դեպի «ԶԵԼՅՈՒՍԿԻԲՆ» : Սառույցների զարկեց նավի կողքում մեծ ճեղքվածք ե առաջանում :

Հրամայվում ե անմիջապես նավը դատարկել, անհրաժեշտ պաշարն իջեցնել սառույցների վրա : Մի քանի վայրկյանից հետո բոլորն իրենց տեղերումն են և նավը դատարկվամ ե : Վոչ մի իրարանցում, վոչ մի աղմուկ :

Սառույցները նորից ճնշում են չողենավը : Յեկ մեկո մրուի

Հետեւից արաքվում են շրջածածկի յերկաթե թերթերը։ Շողենասի ձախ կողքը պատռված է։ Զուրն սկսում է նավի մեջ հոսուել։ «Զելյուսկինը» սուզվում է։ Բայց վոչ ճիչ, վոչ հուսահատություն։ Աշխատանքը շարունակվում է։ Շուտով բոլոր անհրաժեշտ պաշարը, դիտական գործիքները և նյութերը սառցի վրա յեն։ Բայց ահա նավի քիթն սկսում է թեքվել։ Տախտակամածը ծածկվում է ջրով։ Լսվում է հրաման՝ «Թողնել նավը»։

Շողենավի քիթն արագորեն ջրի տակ է անցնում։



Նկ. 12. «Զելյուսկինի» խորտակումը

Այսենից վերջը շոգենավը թողնում են դիտարշավի պետ Շմիդտը և կասկածան Վորոնինը։ Մի քանի վայրկյան ևս և «Զելյուսկին» անհետանում է սառույցների տակ։

Ճամբար սառույցի վրա։ Շողենավը խորտակվեց, և մարդիկ մնացին անոթեան սառցե անազատի մեջ։

Մթություն է։ Փոթորիկ։ Սաստիկ սառնամանիք։

Շտափ կանդնեցնում են սաղիոկայմը, վրաններ են դնում։ աշխատելը սոսկուի ծանրը է։ դործիքներ չկան, սառնամանիքից

մատները չեն ծալվում, քամին գլորում է նրանց, փոթորիկը կուրացնում է աչքերը։ Վերջապես ուժասպառ, Երջված, սառած մանում են վրանները, քնում ծանր քնով։

Առավոտը նրանց ուրախ, հուսադրով լուր և թերում։ Աւելնի սաղիոկայանը (Զուկոտյան թերակղզու վրա) լսում է չելյուսկինցիներին։ Շմիդտը սաղիոյով հաղորդում է Մոսկվա շուգենավի խորտակման մասին։

Կաղատեն... Պետք է միայն դիմանալ, մտածում է ամեն մեկը։ Աստիճանաբար կյանքը կարգի յեւ ընկնում։ Ճամբարի վրա ծածանվում է խորհրդային կարմիր դրոշակը։

Թաղիոյով լուր են ստանում, վոր Մոսկվայից ոգնության են գալիս սավառնակներ, դիրիժարլներ և «Կրասին» սասցահատը։ Բոլորի տրամադրությունն ավելի ևս բարձրանում է։ Սկսում են վնասել և մաքրել հրամարակներ սավառնակների վայրեջքի համար։

Բայց այն սասցադաշտը, վորի վրա գտնվում է ճամբարը, շարունակ շարժվում է։ Այստեղ-այնտեղ յերեան են գալիս մեծ ճեղքեր, սառույցները կուտակվելով իրար վրա հսկայական թրմրեր են առաջ բերում։ Մեկը մյուսի հսկեալ կուտրատվում են և աերողբուժները։ Սասցակույտը քանդում է խոհանոցը, իսկ մի ուրիշ անդամ՝ հանրակացարնը։ Մի անդամ քիչ մնաց սասցիտակ անցներ սաղիոկայմը։ Ճամբարն ամեն մի բոպե վասնդի մեջ է։ Իսկ ոգնություն դեռ չկա։ Խանդարում են բուքը և մասհիուղները։ Արդեն մոտ մեկ ամիս թափառում է ծովում լողացող ճամբար։ Բայց չելյուսկինցիները չեն վատավում։ Նրանք առջեկիական համառությամբ կովում են սառույցների դեմ, շարունակում են հետարուել Զուկոտյան ծովը։ Կոմունիստները և կոմյերիտականներն ամեն տեղ, ամենածանր և պատասխանառ մեջ կանգնած են առաջին շարքերում։

Աշխատյժ տրամադրություն պահպանելու համար կազմակերպում են ընթերցանություն, խաղեր, յերգեցողություն, լույս են ընծայում պատի թերթ՝ «Անձնատուր չենք լինի»։

Վերջապես, մեկ անդամ ճամբարի վրա յերեաց սաղառնակը, վորը ճեղքել անցել եր մասկուլի և փոթորկի միջով։ Զելյուսկինցիների առաջին խումբն աղատված է։

Բայց մասախուղն ու փոթորիկը սաստկանում են: Ստիպ-  
ված են դարձյալ սպասել:

Մի ամբողջ ամիս գեռ շարունակվում ե համառ կոիվը ստ-  
ռույցների գեմ լողացող ճամբարում:

Ամբողջ Խորհրդային Միությունը լրագրերի միջոցով, լար-  
ված հետեւմ ե, թե ինչ է կատարվում հեռավոր հյուսիս-արե-  
մելքում: Բոլորն անհամբեր սպասում եյին պարզ ու խաղաղ ո-  
րերի Զուկոտյան ծովում:

Վերջապես, ապրիլի սկզբին գալիս են այդպիսի որեր: Ստ-  
յառնակները մեկը մյուսի հետեւց իշխում են սառույցների վրա  
և տանում չելյուսկինցիներին: Ապրիլի 13-ին թուչում են վերջին  
մարդիկ: Բոլորն ել աղասիված են:

Ուրախությամբ ու հոգաբությամբ դիմավորում ե չելյուս-  
կինցիներին ու նրանց աղասող հերոսներին տմբողջ յերկիրը:

«Չելյուսկին» չողենավի խորտակվելլ չկանգնեցրեց Հյուսի-  
սային ծովային ճանապարհի հետազոտությունը: Հինգ ամիս հե-  
տո «Լիտկե» սառցահատը Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսով  
անցալ այդ ծովային ճանապարհը՝ Բերինդյան նեղուցից մինչև  
Մուրմանսկ:


Քարտեղի վրա ցույց տվեք «Չելյուսկինի» խորտակման տեղը և «Լիտկեյի»  
ճանապարհը Վլատիվոսակից մինչև Մուրմանսկ:

### ԲԵՎԵՌԱՅՑԻՆ ԿԱՅԱՆՈՒՄ

Ծանր են բենոային կայաններում ձմեռողների կյանքի պայ-  
մանները: Բայց նրանք լավ են հասկանում, թե վորքան մեծ  
նշանակություն ունի բենոային ծովերի հետազոտությունը. ա-  
րիաբար տանում են կյանքի բոլոր դժվարությունները բենոա-  
յին սառույցների մեջ, և բենոային գիշերվա խալարի մեջ բոլոր  
աշխատանքները կատարում են հարվածային կարգով:

Ահա թե ռազիոյով ինչ ե պատմում Ֆրանց Հովսեփի յերկիրը  
բենոային կայանի կյանքի մասին այդ կայանում ձմեռողներից  
մեկը:

«Լոեցեք, լոեցեք: Խոսում ե Ֆրանց Հովսեփի Յերկիրը: Այս  
բողեյիս բենոային գիշեր ե: Արգեն յերկու ամիս ե, ինչ տեսում



Նկ. 13. Բենոային կայան

Ե նա: Տունը շրջապատված ե հոկայական ձյունակույտերով:  
Ձյունը ծածկում է գոներն ու պատուհանները: Ամեն որ ստիպ-  
ված ենք մաքրել այդ ձյունը, վորպեսզի նրանք բացվեն: Մեկ-  
մեկ այնպիսի քամի յերածքանում, վոր սարցնող ցուրտը թա-  
փանցում ե տան բոլոր անկյունները:

Ձյունի մեջ բացված աստիճաններով, լապտերը ձեռքներիս  
բարձրանում ենք ձյունակույտի զնուխը, վորպեսզի այնտեղից  
իջնենք պահեստը վառելիք բերելու համար:

Ինչ յեղանակ ել լինի, կայանի աշխատանքները կանգ չեն  
տանում: Դիտողն իր ժամանակին, փոքրիկ լապտերը ձեռքին,  
համարյա աննկատելի բենոային դիշերվա խալարի մեջ, ուղե-  
վորվում ե յեղանակի դիտողությունների համար պատրաստած  
հրապարակը: Մի ուրիշ դիտող նույնողիսի լապտերով յուրաքան-  
չյուր ժամը մեկ անգամ զնում ե սառցի վրա հաստաված գոր-  
ծիքի մոտ, վորով չափվում ե մակընթացությունը և տեղատվու-  
թյունը:

Սուր, սատը քամին շունչներս կտրում եր և ձյունի փոշին ածում մեղ վրա:

Ջմեռային կարձ ցերեկը կամ ավելի ճիշտ ձմեռային աղջամուղջն արագ անցավ: Գիշերը մոտենում եր: Մշուշը խտանում եր:

Քամին մի ակնթարթ դադարեց, բայց հետո սկսեց մռնչալ նոր ուժով:

Հանկարծ ձյունի հսկայական զանդվածներ թափվեցին մեղ վրա: Զյունե մրրիկը սպիտակ միապալաղ չերտով պատվում եր մեր շուրջը: Մի բոպիյում դոյացան հսկայական ձյունակույտեր: Սահնակները մերթ ծանրացած դանդաղորեն բարձրանում եյին ձյունաթմբի դլուխը, մերթ արագորեն ցած սահում: Զյունե մրրիկը տեսեց մի քանի ժամ, բոլորովին չթուլանալով:

Մենք մի քանի անդամ կանգ առանք յեղջերուներին հանգըստացնելու համար: Վերջապես նրանք բոլորովին ուժասպառ յեղան և կանգ առան:

Մենք սահնակներից հանեցինք մորթիներ, պատրաստեցինք վրանի նման մի բան: Մինչդեռ մենք դրազված եյինք, ձյունը մեղ բոլորովին ծածկեց:

Մենք թաղվեցինք ձյունի տակ, կտրվելով ամբողջ աշխարհից:

Զյունը ծածկեց մեղ, ձյան չերտը բարձրանում եր վեր ու վեր:

Մոտ 4 ժամ մնացինք ձյանի տակ պառկած:

Յերբ ձյունաթմբի տակից դուրս յեկանք, մնացինք զարմացած: Կարծես ձյունի մրրիկ բոլորովին չեր ել յեղել: Մեր շուրջը հեղեղված եր բևեռային շողջողուն լույսով: Զյունի հարթությունը կայծին եր տալիս և ծխածանի բոլոր դույներով փայլվելում:


Մենք յեղջերուները լծեցինք և առաջ գնացինք: Յեղջերուները յերկար հանգստից հետո կրկին սկսեցին վազել արագ և համասար քայլով:

Սկսեց լուսանալ: Շուտով յերեացին յերեք վրան (չում):

Չորս ամիս հետո մենք նույն ճանապարհով հետ եյինք դառնում: Ամառ եր: Տունդրան չեր կարելի ճանաչել: Նա այժմ ամռողջապես ծածկված էր կանաչ ու զորչ մամուռներով, մոխրագույն քոսերով-յագելով:

Մամուռի միջից կարմրին եյին տալիս զույն քոսերով-յագելով: Մեղական ճականամորութիւնը, կառուամբուկի պառուղները, նայում եյին ճականամորութիւնը, կառույթո հապալաւաները: Տեղական աչքի եյին ընկնում անմոռուկ-ների, բևեռային կակաչների և դեղին ականիտանի ծաղիկների ների, բևեռային կակաչների և դեղին պատճաճ՝ կեչիներ և ուղարկում:

Վոր կողմն ել նայում ենք, ամենուրեք մեր առաջ փայլում են անհամար լճեր: Բարձր տեղից նբանք կառույց, փայլուն հայշելիների եյին նմանվում:



Նկ. 15. Ամրանք տունդրայում

Սրեն ամեններն մայր չեր մտնում: Տունդրայում կյանք ուժքով որբ յեռում եր: Միլիոնակոր սագեր, բաղեր, կորառ

ներ և ուրիշ թուչուններ ծածկում ելին լճերը և թուչում ելին ո-  
դում : Գիշեր-ցերեկ լճերի վրա աղմկում ելին թուչունները :

Մենք հանգստանում ելինք լճի ափին : Այստեղ մի փոքրիկ  
բլրի վրա ելին նենցների վրանները : Նենցներն ամբողջ ուրը  
փորսում ելին թուչուններ, բոնում ելին ձկներ, հետո նրանց  
ծխահարում, չորացնում և ձմեռվա համար պաշար պատրաս-  
տում :

Ամառային արեղակը լուսավորում եր և տաքացնում : Մարդ-  
կանց և յեղջերուների համար առատ սնունդ կար : Բայց մոծակ-  
ները թունավորում ելին նրանց կյանքը : Նրանք մեծ խմբերով  
թուչում ելին ողում մշուշի նման շրջապատելով ամեն մի կեն-  
դանի եյակ : Նրանք այնքան շատ ելին, վոր մարդիկ հաղիվ ելին  
կարողանում չնչել : Յեղջերուների հոտերը խելագարի պես վա-  
զում ելին բաց տեղեր, վորտեղ մոծակ քիչ և լինում, վորովհե-  
տեւ բաց տեղերում հնչում ե քամի և քչում մոծակներին :

### ՏԱԻՆԴՐԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-ի Փեղիկական քարտեզի վրա դտեք տունդրայի դոտին :

Տունդրայի մակերեսույթը : Համարյա ամբողջ տարածությու-  
նը, վոր բռնված է տունդրայով, ներկված է կանաչ գույնով :  
Այդ նշանակում ե, վոր տունդրայի մակերեսույթը հարթ է :

Մի քանի տեղերում տունդրայում բլուրներ կան : Պատա-  
հում ե և լեռնոտ տունդրա :

Դիտեցեք քարտեզը և ցույց տվեք այն տեղերը, վորտեղ  
լեռները կտրում են տունդրան :

Կիման : Տունդրայի համարյա ամբողջ դոտին գտնվում ե  
թեկուային շրջանից հյուսիս, վորտեղ արեղակը ձմեռը մի քանի  
որ և նույնիսկ մի քանի ամիս շարունակ բալորովին չի յերեսում  
յերկնակամարի վրա : Տունդրայի ափերը վողողում են ցուրտ  
ծովեր, վորոնց մեջ ամառվա ընթացքում անդամ լողում են մեծ  
քանակությամբ սառուցներ : Այդ պատճառով ել տունդրայի  
լլիման խիստ է : Զմեռն այստեղ տեսամ և 8—9 ամիս : Հաճախ  
լինում են սոսկալի սառնամանիքներ և փոթորիկ . հաճախ փչում

են ցուրտ և չոր քամիներ : Զյուն քիչ ե գալիս, և դեռինը սառ-  
չում և բավական հաստ չերառվ :

Ամառը տունդրայում կարձատե և : Արեն որեր և ամիսներ  
շարունակ մայր չի մտնում : Բայց նա կեսորին անդամ շատ չի  
բարձրանում և յերկերը քիչ ե տաքացնում : Այդ պատճառով ել  
տունդրայում 50—100 սանտիմետր խորության մեջ գտնվում և  
հավերժական սառածության չերս :

Տունդրայի գետերն ու լիները : Հավերժական սառածության  
շերտը թույլ չի տալիս, վոր հալված ձյունի ջերեն անցնեն գետ-  
նի խորքերը : Այդ պատճառով տունդրան հարուստ և լճերով :  
Քիչ չեն և ջրառատ գետերը, վորոնք կարում են տունդրան :  
Այդ գետերի մեծ մասն սկսվում է հեռու հարավում : Տունդրա-  
յում նրանք հոսում են վորքը տարածության վրա և թափվում  
են բնեսային ծովերը :

ԽՍՀՄ-ի Փեղիկական քարտեղի վրա դտեք հետեյալ գետերի  
գետաբերանները՝ Պեչորա, Որ, Յենիսեյ, Լենա :

Բունականությունը : Տունդրայի բուսականությունը հա-  
բուստ չե : Յածրագիր տեղերում աճում են մամուսներ, բարձ-  
րուստ չե : Յածրագիր տեղերում աճում են մամուսներ, բարձ-  
րուստ չե : Քոսկեմն պատահում են գետնի վրա փողող մանր  
և յազելը : Յերբեմն պատահում են գետնի վրա փողող մանր  
ծառեր՝ գաճաճ կեչի, ուռի, սոճի : Մամուսների մեջ շատ կան  
ծառեր՝ գաճաճ կեչի, ուռի, սոճի : Մամուսների մեջ շատ կան  
պալաս, հավամրդի :


Միայն ցուրտ քամիներից պաշտպանված տեղերում աճում  
են խոտեր, գույնդղույյն, վառ ծաղիկներով :

Տունդրան անտառաղուրկ տարածություն է, ծածկված մա-  
մուսով և քոսերով :

Տունդրայի կենդանական բնակչությունը շատ բաղմաղան չե,  
բայց բազմաթիվ ե :

Բներում ապրում են թեկուային անթիվ մկներ, վորոնք կե-  
րակրվում են քոսերով և տունդրայի ուրիշ բույսերով :

Բազմաթիվ լճերի ափերը ծածկված են չլող թունդրայով  
բաղկանով, սաղերով, կարապներով : Այստեղ նրանք գտնում են  
առատ սնունդ՝ ջրային բույսեր, մանր ձկներ և ջրային ուրիշ  
կենդանիներ : Գետերում և լճերում բազմաթիվ ձկներ կան :



Նկ. 16. Բնեոային աղվես

Նկ. 17. Բնեոային բու

Տունդրայում շատ կան նաև բնեոային աղվեսներ (ուսուց) և բեհոային բվեր, վորոնք կերակրվում են մկներով և չփող թռչուններով: Պատահում են հաճախ և դայլեր: Ամառը տունդրայի սղը լցում է մոծակների բրդոցով: Նրանք ամպերի աղես ինստ հետազնդում են ամեն մի կենդանի եյակի:

### ՏՈՒՆԴՐԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԸ

Տունդրան յերկու անշտմ՝ տվելի մեծ տեղ է բռնում, քան Անդիան, Ֆրանսիան և Գերմանիան միասին վերցրած: Այս հոկայական տարածության վրա շատ նոր է բնակչությունը:

Տունդրայում ապրում են հետեյալ ժողովուրդները՝ նենցները, լոպարները, չուկչաները, կամչադալները: Մուսներն ապրում են տունդրայում դանուղ սակավաթիվ քաղաքներում և գետափերին:

Քարտեղի վրա ցույց տվելք այն տեղերը վորտեղ ապրում են այլ ժողովուրդները:

Համարյա այդ բոլոր ժողովուրդները դրազվում են վորությամբ, ձկնորսությամբ և բազմացնում են յեղերուների հոռեր: Համարյա բոլորն ել ապրում են վոչ թե քաղաքներում ու գյուղերում, այլ քոչում են տեղից-տեղ, վորոնելով սնունդ թե՛ իրենց և թե՛ յեղերուների համար:

Տունդրայի վաչկատուն բնակչության կյանքը մինչև վերջին

ժամանակներս մեծ կախում ուներ նրան շրջապատող դաժան բնությունից:

Յեթե շրջակայքում առատ կեր կա յեղերուների համար, վորսն առատ ե, տունդրայի բնակիչն ել լավ և ապրում: Բայց ահա գետինը սառսւցի բարակ չերտով ծածկվեց, յեղերուն այլք կեր չունի. նա նիհարում ե և սատկում: Գաղանները հետահանում են ուրիշ տեղ և վորսը վերանում ե: Նենցի ապրուստը գժվարանում ե. տարածվում են սովոր, հիվանդությունները և պղքատությունը:

Տունդրայի բնակիչները գեռ տգետ են և սնահավատ:

Խորհրդային իշխանությունը համառ պայքար և տանում առողջապահությունը կամաց ապահով էլու համար:

### ՆԵՆԵՑՆԵՐԸ

Նենցները—յեղերվագաներ են: Նրանց ամբողջ կյանքը յեղերուների հետ և կապված: Ամբողջ տարին նրանք ապրում յեղերուների հեղեղակած են յեղերվի մորթով: Քնում են վրաններում, վորոնք ծածկված են յեղերվի մորթով: Քնում են յեղերվի մորթով վրա, կերակրվում են ձկներով և յեղերվի մսով, խմում են յեղերվի արյունը, յեղերվի մորթուց շոր են կարում (նկ. 18):


Յեղերուները կերակրվում են մոխրագույն քոսերով—յաղելով, վորով ծածկված են տունդրայի ընդարձակ տարածություններ: Յերբ յեղերուներն ուսում, վերջացնում են յաղելը այն ժամանակ նենցները քոչում են նոր արոտատեղեր:

Նենցների համար մեծ նշանակություն ունի աղվամտղ և ծովային գաղանի վորսը: Խվում են բնեոային աղվեսներ, զայդալային գաղանի վորսը, արջեր, ծովացուլեր և փոկեր: Աղվամտղ գաղանի վորսը սկսվում է հենց ձմռան սկզբնեց:

Ամառն զբաղվում են ծովային գաղանի վորսով, ձկնուսությամբ, թռչնորսությամբ և ձկեր հավաքելով:

Զմեռը նենցները քոչում են դեպի հարավ, ավելի մոտ անտառներին, իոկ ամառը շարժվում են դեպի ընկային ծովերը ամիերը:

Սառնամանիքի, վոթորիկի, մառախուղի և բենային դիշերվա խավազի մեջ տունդրայի ձյունապատ լուս տարածությունների, ահծարութեան հարթության վրա թառնառում են նենցները:



Նկ. 18. Նենցները վերադարձել են ֆակտորիայից

Հենց վոր սառած գետինը հարլում ե, բենային ծովերի ափերը կենդանանում են, նենցներն ամեն ամառ գալիս են այստեղ: Ծովային քամին յեղջերուների վրայից քչում, հեռացնում ե մոծակներին ու բոռերին:

Բայց բենային կարճատե ամառը շուտ և անցնում: Ծովափերը ծածկվում են խիտ մասախուղով: Զյունն ալելի ու ալելի հաճախ ե գալիս, սուլում և վոռնում ե քամին: Թռչուները չվում են, գաղանները հեռանում են, մարդիկ ել քոչում են տունդրայի խորքերը, ալելի մոռ անտառներին:

### ԶՈՒԿՉԱՆԵՐ

Չուկչաներն ապրում են Չուկոտյան թերակղում, Ասիայի հեռոտլոր հյուսիսարևելքում:

ԽՍՀՄ-ի Փիզիկական քարտեզի վրա դաեք Չուկոտյան թերակղուն:

Չուկչաների մի մասը—«ծովափնյաները»—ապրում են ծովին և զբաղվում են ծովային վորսով: Մյուս մասը—«յեղջերվագահա՛տն» չուկչաները—նենցների նման յեղջերվագահությամբ են զբաղվում և իրենց յեղջերուների հետ քոչում են չուկոտյան տունդրայում:

Ծովափնյա չուկչաների դիմավոր վորսը ներպան ե (փոկը), վորի մորթուց չուկչաները չոր են կարում, միան ուտում են, իսկ ճարալը դործ են ածում վորպես վառելանյութ և լուսավորելու համար:

Վորսի հաջողությունից ե կտիաված ծովակնյա չուկչաների ամբողջ կյանքը: Յերբ ծովի վրա վոթորիկը յերկարում ե—վորսն ել յերկար ժամանակով դաշտաբում ե: Չուկչաներն, այդ ժամանակ, սպառելով ունեցած պաշարը, նստում են բնակարաններում առանց սննդի և առանց ջերմանալու:

Ծովափնյա չուկչաների գյուղերը ցրված են ծովափին: Նրանք բաղկացած են 20—30 վրանից:

Չուկոտյան վրանը մեծ և և բաղկացած ե մի քանի բաժանմունքներից: Ներքին բաժանմունքի մեջ կա ոջախ, բացի այդ կան լաստերներ, վորսնց մեջ այրվում ե փոկի ճարպը: Զմեռը, նույնիսկ 45°-ի սառնամանիքներին, վլանի մեջ շատ տաք և լինում: Միայն թե փոկի ճարպն անսպակաս լինի:

Շներն անհրաժեշտ կենդանիներ են ծովափնյա չուկչաների համար: Նրանք փոխարինում են յեղջերուներին: Յերբ չուկչան ցանկանում և ձմեռը գնալ ծովը վորսի կամ ապրանքներ գնել, կամ գաղան բոներու համար թակարդ լարել, նա չները լծում և սահնակին և հաջող չների վոհմակն սկսում ե վազել առանց սահնձի, դեկտիվարվելով չուկչայի ձայնով միայն:

ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՎԵՐԱԿԱՐԱՒՅՈՒՆ  
ՏՈՒՆԴՐԱՅԻ ՎԵՐԱԿԱՐԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՅՈՒՆԵՐԻ ԿՑԱՆՔԻ

ԽՈՐՃՈՒՐԴՅՈՒՆԵՐ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՆ

Յարի ժամանակ իրավագուրի՝ տունդրայի վաչկառուն ժողովուրդները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո դար-

Համ Խորհրդային Միության համահավասար քաղաքացիներ :

Խորհրդային որենքներով նըանք ունեն իրենց տունդրային Կորհուրդները : Քոչում է տունդրայի բնակչությունը, դրա հետ քոչում է տունդրայի խորհրդային իշխանությունը—ամառը դեպի հյուսիս, ծովափը, իսկ ձմեռը, սառնամանիքներին՝ դեպի հարավ, անտառների հովանալորության տակ ձմեռելու համար :

### ԳԻՇԱՏԻՉ-ՎԱՃԱԹԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱԲԵՆ ՖԱԿՏՈՐԻԱՆՆԵՐ

Յարական իշխանության որով տունդրայի ժողովուրուները տղետ եյին և անպաշտպան :

Տունդրա յեկող վաճառականները հեշտությամբ խարում եյին տունդրայի անսահման տարածությունների մեջ մենակ ընկած քոչորին : Այդ վաճառականները բերում եյին վոչ միայն տունդրայի բնակիչների համար անհրաժեշտ ապրանքներ—լորսորդական պարագաներ, ալյուր, աղ, լուցի, այլ ողի : Նըանք հարդացնում եյին տունդրայի բնակիչներին, չնչին գներով զնում եյին յեղերուների հոտեր և թանգարժեք մորթի ու հարստացած վերաբառնում :

Իսկ մութ, անողնական քոչվորները տարեց-տարի աղքատանում եյին :

Խորհրդային իշխանությունը քշեց տունդրայից զիշտակչ վաճառականներին : Ամբողջ տունդրայում բացվեցին բազմաթիվ պետական առևտրական դրասենյակներ—Փակտորիաներ : Այստեղ զնում են մորթիներ թե՛ փողով և թե՛ ապրանքներով :

Նենեցների ամառային իջևանավայրից վոչ հետու տեղալորդել և Պետառի Փակտորիան :

Յերկու մեծ ամբար լցված են զանազան ապրանքներով : Մեկի մեջ պարկեր են լցված ալյուրով, ձալարով և աղով : Մյուսի մեջ՝ վասող, մանրագնդակ, կապար, յուղ, թեյ, շաքար, կանֆետներ : Ամաններ ել շատ կան, կան շորեր, զբքեր, պլակատներ :

Ֆակտորիայում մեծ կենդանություն է : Մեկը մյուսի հետեւ գալիս են մորթեղենին հանձնողներ : Վորսն առատ եր —

ապրանքը բերում են հա բերում : Սեղանների, պատուհանների, ուղղակի հատակի վրա—ամեն տեղ թափված են բեկուային աղվեսի մորթիներ :

Աշխատողներն ուժասպառ են լինում : Վոմանք նայում, զըննում են մորթին, վոմանք հաշվում են, վոմանք ել տալիս են մթերքներ ու ապրանքներ :

Մորթեղները հանձնելուց հետո, նենեցները թեյ են խմում և սղասում, վոր հաշվներն ստանան :

Ստանալով բարոր անհրաժեշտ ապրանքներն ու մթերքները և սահնակի վրա տեղավորելով, նենեցները տուն են վերադառնում :

### ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Տունդրայում կուլտուրական մեծ աշխատանք ե տարվում քոչվորների հետ այն տեղերում, վորտեղ նրանք ձմեռում են : Այստեղ հիմնում են կուլտուրականներ, նբանցից յուրաքանչյուրի մեջ կառուցում են դպրոց, հիմանդանոց, ուղիուկայան, սոցիալիստական կուլտուրայի տուն, կոոպերատուլում : Տունդրայի հարյուրավոր բնակիչներ վոտքով, յեղերուների կամ չների սահնակներով գալիս են կուլտուրականները :

Կազմակերպում են նաև շարժական վրաներ : Յեղերուներով, չներով քոչում են տեղից-տեղ ուսուցիչը և բուժակը, իսկ նրանց հետ և կինոն, ուղիոն, գրագարանը, գեղատունը : Շարժական վրաները թափանցում են տունդրայի ամենախուլ անկյունները, տեղափոխում են տեղից-տեղ և տարածում խորչըրդային կուլտուրան :

Տունդրայի համարյա բոլոր յերեխանները սովորում են գըղբոցներում : Մինչեւ ամենավերջին ժամանակները տունդրայի քոչվոր ժողովուրդները սեփական գիր չունեյին : Այժմ մշակված ե այրուբեն և հբատարակված են այրենարաններ նենեցերեն և չուկուերեն լեզուներով :

Մեծ նշանակություն ունեն այն գոլոցները, վորոնց կից կան համբակացարաններ : Նբանք քոչվորների յերեխաններին սովորեցնում են կուլտուրական կյանքի :


ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀԻՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՅԹՅՈՒՄ  
ՏՈՒՆԴՐԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՂԵՐՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՒՆԴՐԱՅԻՄ

ՅԵՂԵՐՎԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՆԴՐԱՅԻ անտեսության հիմնական ճյուղն է :

ՅԵՂԵՐԾՈՒՆ չի սպասարկում միայն քոչվորին : Նրա միսը դնում է պահածոների գործարանը, կաշին կարեռ հումք և արդյունաբերության համար : Մինչդեռ յեղերտները սաստիկ տառապում են առողջայի գաֆան բնությունից :

Ամբողջ հոտեր վոչնչանում են սառուցից ու սաստիկ ձնաբուքերից : Նբանք, մանալանդ ջահել յեղերտները, հաճախ բեկեռային գիշերները զոհ են գնում վայրենի գաղաններին, տառապում են խայթող միջատներից՝ բռուերից, մժեղներից, մոծակներից, կոտորվում են համաճարակից, տարափոխիկ հիվանդություններից :



Նկ. 19. ՅԵՂԵՐՎԱՊԱՀԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՄՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային իշխանությունն այժմ ամեն միջոց զործ է չնում, վորակեսղի բարձրացնի տունդրայի յեղերվապահությունը : Հիմնվել է յեղերվարուժական կայան, վորտեղ մասնագետ-

ներն ուսումնասիրում են յեղերվին և նրա հիվանդությունները : Հիմնում են յեղերվապահական ցուցադրական խորհրդային տնտեսություններ :

Բացվել է յեղերվապահական տեխնիկում :

Կաղմակերպվում են յեղերվապահական կուհկտիվ տնտեսություններ :

ՄՈՒՆԴՐԱԿԱՐՈՐ ԳԱԶԱՆՆԵՐԻ ՎԱՐՍԼ

Տունդրայում շատ մեծ նշանակություն ունի մուշտակավոր գաղանների, մանավանդ բևեռավեն աղվեսների վորսը :

Շատ յերկրներ մորթեղենի մեծ կարիք ունեն : Նբանք մեր մորթիներն ուրախությամբ են զնում : Մորթեղենից Խորհրդային Միությունն ստանում է վոսկի, վորով մենք արտասահմանում, դնում ենք մի քանի տեսակ մեքենաներ մեր գործարանների համար : Մենք պետք ե աշխատենք դարդացնել մուշտակավոր զաղանների վորսորդությունը և մեծացնենք մորթու արտահանումն ուրիշ յերկրներ :

Տունդրայում կաղմատկերպվում են վորսորդական արտելներ :

Հիմնվում են զաղանային Փերմաներ, վորտեղ տունդրայի աղելի արժեքավոր գաղանները բարձացվում են, ինչպես ընտանի կենդանիներ :


ՏՈՒՆԴՐԱՅԻ ՈՐԴԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԵՏԱԽԱՌ ԶՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տունդրայի յերկրային ընդերքը դեռ քիչ ե ուսումնասիրված : Բայց արգեն այժմ ել սպարզ ե, վոր տունդրան ԽՍՀՄ-ի սոցիալիստական շինարարության համար շատ կարեռ ողտակար հանածոներ կարող ե տալ : Ամենից լավ ուսումնասիրված են կուաթերակղուտ տունդրաների ողտակար հանածոները :

Անտառային ճահիճների և լճերի մեջ բարձրանում են այնքան ել վոչ բարձր Խիթինյան լեռները : Ներքեում աճում ե սոճու անտառ : Ավելի բարձր՝ յեղենի և կեչի : Իսկ հետո լեռնային տունդրայի մամուռները և քոսերը,

Քարտեզի վրա ցույց տվեք Խերինյան լևոները. Նրանք դասվում են Կոլո  
թերակղում:

Աժայի և անմարդաբնակ Եյին այս տեղերը մի քանի տարի  
առաջ: Գյունականներն ամբողջ չորս տարի աշխատում եյին այս-  
տեղ: Նրանք հետազոտում եյին Խիբինյան լեռների հանածո հա-  
րստությունները: Շատ արժեքավոր ովտակար հանածոներ  
վտան նրանք մամուռներով ու քսերով ծածկված վայրենի,  
մամարդաբնակ ժայռերի մեջ: Առանձնապես մեծ արժեք ունեցավ  
Խիբինյան ապատիտը, վորից շատ լավ սարարտանյութ և ստաց-  
իում հողի համար:



Կ. 20. Կիրովսկ քաղաքը

Անցաւ մի քանի տարի և Խիբինյան վայրի տունդրան կեն-  
թանացաւ: Ապատիտի հանքերում գիշեցերեկ աշխատանքը

յեռում է: Բանվորների թիվը հազարների յէ հասնում: Խուլ  
գորգում են սլայթյունները: Պողանջում են շողեջակները: Աշ-  
խատում են հորատիչ մեքենաները:

Լեռների թեք լանջերի միջև, վճիտ լճի սփին նոր քաղաք  
գցվեց: Քաղաքն աճեց ընկ. Կիրովի անսասան եներդիայի և բու-  
շեիլյան անհողղողով կամքի չնորհին և նրա անունով ել կոչվեց  
կլիրովիլ:

Քարտեզի վրա դաշտ Կիրովսկ քաղաքը:

Կիրովսկ քաղաքի հիմնադրությունից ընդամենը հինգ տարի  
յէ անցել, բայց այսուեղ այժմ արդեն կան մի քանի գործարան-  
ներ, քարե շենքեր, մի քանի հիվանդանոցներ, դպրոցներ, ա-  
կումբներ, գրադարաններ և մեծ հնչուն կինո:

Կիրովսկի փողոցով անցնում են ավտոմոբիլներ ու ավտո-  
բուսներ: Նրա մեջ ապրում ե 30 հազարից ավելի մարդ: Քաղա-  
քից քիչ հեռու չինված ե ելեկտրակայան, վոր ելեկտրական հո-  
սանք և տալիս քաղաքին և հանքերին:

Այսպես փոխվեց Խիբինյան վայրենի տունդրան: Կանցնի մի  
քանի տարի և շինարարությունը կծավալվի նաև տունդրայի ու-  
րիշ շատ տեղերում:

### ՏՈՒՆԴՐԱՅԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻ

Տունդրայի բնակիչները հաճախ սովոր եյին մատնվում: Նրանց կերակուրը միատեսակ եր և վատառողջ—ձուկ, յեղինի  
միս և ծովային դաղանների միս: Վոչ հաց, վոչ բանջարեղեն: Միայն խորհրդային կոոպերացիան եր, վոր սկսեց տունդրան ներ-  
մուծել ալյուր, աղ: Նրանք չգիտեյին, թե ինչ բան ե բանջա-  
րեղենը: Զկային վոչ արտեր, վոչ բանջարանոցներ:

Մի՞թե սառած հողի, ճահիճի վրա կարող են հացահատիկ-  
ներ աճել—այսպես եյին մտածում բոլորը: Փորձեր կատարեցին  
և պարզվեց, վոր կարող են: Այժմ Կոլա թերակղում հիմնված  
ե մի փորձնական գյուղատնտեսական կայսոն, վորտեղ աճեցնում  
են վոչ միայն կարտոֆիլ ու կաղամբ, այլև յելադ: Փորձակա-  
յանն ապացուցեց, վոր տունդրայում կարելի յէ զբաղվել բան-  
ջարարությամբ, գյուղատնտեսությամբ:

## ՀԱՂԲՐԴԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏՈՒՆԴՐԱՅՈՒՄ

Նայեցեք քարտեղին: Յերկաթուղին կտրում ե տունդրան միայն արևմտյան մասում: Դա Մուլժանի յերկաթգիծն է:

Տունդրայում ել ուրիշ յերկաթուղի չկա:

Հաղորդակցությունը տունդրայի տարրեր կետերի միջև գլխավորապես յեղինը ու չներով ե կատարվում:

Տունդրայի համար կարեռը նշանակություն ունի զետային հաղորդակցությունը:

Քեռուային ծովերի ավելի մի քանի խոշոր ծովային նախահանդիսաներ կան: Դրանց վրայով մեր Միությունն առևտուր ե անում զանազան պետությունների հետ:

Դրանցից կարեռներն են՝ Մուրմանսկը, Արխանգելսկը, Իգարկան: Մուրմանսկն ամենահարմարն է: Նա ամբողջ տարին չի սառչում, վորովհետեւ նրա մոտով հոսում ե տաք հոսանքը:

Վարժուրյուն. Կոնտուրային քարտեղի վրա տունդրայի շուրջը մատիտով դժեցեք: Գրեցեք տունդրան կորող գլխավոր գետերը: Կոնտուրային քարտեղի վրա նշանակեցեք թե վո'բան են ապրում լոպարները, նենցները, չուկաները և կամչալաները:

Նշանակեցեք կիրովսկը և հյուսիսային կարեռը նախահանդիսաները՝ Մուրմանսկը, Արխանգելսկը:

Գտնեք, թե վո'բան կողմից ե մտնում Բարենցի ծովը Գոլֆուրում տաք հոսանքը:

Աշխատանք արտադասյան ժամանակ. Կաղմեցեք մի ալբոմ «Տունդրայի գոտին» թեմայով:

### 3. ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՈՒԱ

Տունդրայից հարավ ամբողջ ԽՍՀՄ-ի վրայով նրա արևմտյան սահմանից մինչև Խաղաղ ովկիանոսը տարածվում են անտառներ:

Տունդրայի և անտառների միջև վոչ մի տեղ վորոշ սահման չկա: Տունդրան փոխվում է անտառների աստիճանաբար:


Սկզբում տունդրայում յերեռում են առանձին վտիտ, ցածլիկ ծառեր չորացած գաղաթներով: Դա անտառատունդրան է: Ավելի գեղի հարավ ծառերը դառնում են ավելի խոշոր, ավելի

ուժեղ: Նրանց թիվը հետզհետեւ աճում է. վերջապես տունդրան անհետանում է և տեղի տալիս անտառների:

«Բնական գոտիներ» քարտեղի վրա գտնեք անտառատունդրան:

Անտառները բոնում են շատ ավելի մեծ տարածություն, քան թե տունդրան: Տասնեռութ այնպիսի պետություն, ինչպիսին Ֆրանսիան է, կարող ելին տեղավորվել անտառների գոտում:

Այդ անտառների մեծ մասը բաղկացած է վշատերև ծառե-



Նկ. 21. Անտառատունդրա

բեց և կազմում է վայրենի, անանցանելի տայգա:

Այն անտառները, վորոնք գտնվում են անտառային գոնայի հարավ-արևմտյան մասում, բաղկացած են թե՛ վշատերև և թե՛ սաղարթավոր տեսակներից. Վրա համար ել նրանք կոչվում են խառն անտառներ:

«Բնական գոտիներ» քարտեղի վրա ցույց տվեք անտառատունդրան, տայգան և խառն անտառները:

## ՏԱՅԳԱՅԻ ԶՈՆԱ

ՏԱՅԳԱՅԻ ՎՐԱ ՅԵԿ ՏԱՅԳԱՅԻ ՄԵԶ

Սալառնակը բարձրացավ Կրտսնոյարսկ քաղաքից և Յենի-  
սկի գետի վրայով թռավ դեղի հյուսիս :

Գտեք Յենիսեյ՝ գետի վրա Կրտսնոյարսկ քողաքը :

Ներքեռմ սկին եր տալիս փշատերե անտառը : Տայղան տա-  
րածվում եր դեղի ամեն կողմ—դեղի հյուսիս, հարավ, արեւը  
և արեմուտք :



Նկ. 22 ա. Տայգայում

Միայն գետի արձաթափայլ ժապավենն եր կտրում արդ ան-  
տառները, մնրթ դալարվելով, մերթ ուղղվելով : Տեղ-տեղ գե-  
տի մոտ, սեղմիած խիստ անտառների մեջ, պատսպարվել են գյու-  
ղեր . յերեւն-յերեմն ծփում եյին փայտի գործարանները :

Մոտ հաղար կիլոմետր թռանք Յենիսեյի վրայով և մեր

շուրջը, վորքան աչքներու կտրում եր, դեղի ամեն կողմ ձգվում  
եր անտառման տայգան :

Յերբ սալառնակն իջակ, յես մի նեղ, հաղիվ նկատելի արա-  
ճետով մատ տայգան : Հաղիվ մի կիլոմետր չանցած, յես ընկա  
անանցանելի թափուտի մեջ :

Միապաղաղ պատի պես ամեն կողմից շրջապատեցին ինձ  
թրդում կեղերը, բարձր յեղանիները և մայրիները :

Չնայելով, վոր որն արևոտ եր, անտառի մեջ այնքան խա-  
լար եր, վոր կարծես դիշերը վրա յե հասնում :

Ամեն անդ կուտակված եյին արմատախիլ յեղած ծառեր,  
չոր-չոր փայտեր, քարակոչեր և այս բոլորը պատած եյին մա-  
շուռով և քսերով : Մեռելային լոռություն եր :

Յես վախուցա մոլորվել և շաապեցի գեղի սալառնակը :

## ՏԱՅԳԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերեսույթը : Նայեցեք ԽՍՀՄ-ի Փիոֆիկական քարտեզին :  
Տայգայի բննած տարածության մեծ մասը քարտեզի վրա ներկ-  
ված և կանաչ գույնով—դա դաշտավայրեր են : Համարյա մեջ—  
տեղում այդ դաշտավայրերը կորվում են Ուրալյան լեռներով :  
Յենիսեյից սկսվում և Արեւելյան-Սիրիական բարձրավանդակը :  
Զանազան ուղղությամբ նոր կորսվում և լեռներով :

Կիմա : Տայգայի գոտին դանվում և տունդրայից հարավ :  
Այդ պատճառով արեգակն այսուեղ ավելի յե բարձրանում և ա-  
վելի յե տաքացնում, քան տունդրայում : Գետենը հարվում և  
մեծ խորությամբ :

Զմեռը տայգայում յերկարատե և ցուրտ ե, բայց ավելի  
կարճ ե, քան թե տունդրայում (6—8 ամիս) :

Տայգայի կլիման նոր տարբեր մասերում միատեսակ չե :  
Տայգայի արևմտյան (յելրուպական) մասում կլիման ավելի  
մեղմ ե, տայգայի այս մասն ավելի մոտ ե Ասուանյան տաք  
ուլկիանոսին : Տայգայի ասիսկարն մասն ավելի դաժան կլիմա ու-  
նի : Ատլանտյան ոլկիանոսի կողմից այստեղ չեն համում տաք  
և խոնավ քամիներ, իսկ հյուսիսային ափերը վողողվում են բե-  
զեռային ցուրտ ծովերով :

Զմեռն այստեղ լինում են  $40^{\circ}$  և  $50^{\circ}$  սառնամանիքներ: Իսկ վերխոյանսկ քաղաքում սառնամանիքները հասնում են մինչև  $70^{\circ}$ —սա ամենացուրտ տեղն է ամբողջ յերկրագնդի վրա («ցըրտության բենո»): Այսպիսի սառնամանիքների ժամանակի սննդիք է, յերկաթը դառնում է փխրուն, ծառերը ճայթյունով ճաքում են, թռչունները թռչելիս սառնում են ու ընկնում դետին:

Քարտեղի վրա դաեք Վերխոյանսկ քաղաքը:

Գետեր: Տայգան կտրում են մեծ ու ջրառատ դետեր: Նրանք սկսվում են հեռավոր հարավում, մեծ մասամբ լեռներից, անցնում են տայգայի և տունդրայի միջով և թունիքում ըստեային ցուրտ ծովերը: Գետերի հովաններով տարածվում են հրաշալի վողողվող մարդագետիններ:

Քարտեղի վրա դաեք Հյուսիսային Դվինա, Գեզորա, Որ, Յենիսեյ և Լենա գետերը:

Բուսականություն: Տայգայի տարբեր մասերում նրա մակերեսութը և կլիման միատեսակ չեն, միատեսակ չեն և բուսականությունը:

Եելրոպական տայգան բաղկացած է սոնի և յեղենի ծառերից, վորոնց հետ խառն աճում է նաև կեչին, կաղամախին:

Ասիական տայգայում, վորտեղ կլիման ավելի խիստ է, ուրիշ ծառեր են աճում, այն ե՝ կեդր, խիժու փինի, յեղենի:

Մութ ե տայգան. նրա վշատերեւ խիտ ծառերի միջով քիչ լույս և թափանցում: Այստեղ միշտ կիսախալար է, թաց և խոնավ: Յեղենիների մութ ծածկոցի տակ լավ աճում են միայն մամուռներ, քսուր և սունկեր:

Փշատերեւ անտառի մեջ հողը միշտ ծածկված է լինում թափած վուշ-տերեներով:

Շատ տեղ տայգան անանցանելի յեւ. սմենուրեք ընկած են ծառեր, կուտակված են քարակոշտեր, հաճախ պատահում են ճահիճներ:

Մույլ ե ու լուռ տայգան: Նրա մեջ չի լովում թռչունների ուրախ ծլվոցը: Կենդանիները հաղաղեղ են պատահում. նրանք

բոլորն աշխատում են հեռու մնալ տայգայի արահետներից: Միայն փոթորկի ժամանակ խուլ աղմուկը լցնում է տայգան, յերեամն այդ աղմուկը փոխլում է վոռնոցի, կարծես վոռնում: Կատաղած ու անհանգստացած դաղանը:

Տայգան նոսրանում ու հետ է քաշվում միայն այստեղ, վորտեղ հոսում են զետեր կամ տարածվում են մեծ ճահիճներ, վորտեղ կառուցվում են քաղաքներ և գյուղեր:

Ճողեր: Տայգայում հողերը ծածկված են մամուռի և թափած վուշ-տերեների խոնավ ծածկոցով: Այս ծածկոցը պահպահ նում է այն խոնավությունը, վորը հողի միջով ծծվում է դեպի նուր հողից հեռացնում է սննդարար նյութերը: Այդ պատցած: Զուրը հողից հեռացնում է սննդարար նյութերը: Նրանք սահառով տայգայում առաջանում են մոխրահողեր. նրանք կամ արգավանդ են — պարունակում են փոքր քանակությամբ սննդարար նյութեր:

Կենդանական աշխարհ: Տայգայի կենդանական աշխարհը հարուստ է ու բաղմաղան: Թռչուններից տայգայի մեջ մշտակերում են՝ ցախաքլորը, մայրեհավը և սալամրը: Նրանք պես անպրում են՝ ցատապառներով, ձմեռը՝ սերկերակվում են տերեներով և հատապառներով, ձմեռը՝ սերկերով և բողբոշներով: Տայգայի մշտական բնակիչ է նաև կաղամախը: Իր սուր ճանկերով նա կպչում է ծառերի կեղեկն, կացահարը: Սուր կտուցով ծակում կեղեկ և այստեղից ճիճուններ հանում:

Անտառային խոշոր կենդանիներից այստեղ ապրում է իշայ-ծյամը: Նա ամառը կերակրվում է խոտով, իսկ ձմեռը կրծում է բնիկերը և ծառերի ճյուղերը:

Հեշտությամբ ծառից-ծառ և ցատկում սկյուռը: Նրան այդ բանում ողնում է իր յերկար ու բրդոտ պոչը: Ակյուռը կերակրմում է վշտուերեւ ծառերի սերմերով և բողբոշներով:

Տայգայում շատ գիշատիչներ կան: Գիշերները թռչուններին ու սկյուռներին հետեւում են կղաքիսը, ժանտաքիսը, սամույլը: Համարյա առանց աղմուկի թռչում են բլերն ու բվեճները: Մանը կենդանիներին ու թռչուններին վորսում է աղվեները: Մատերի վրայից նույնիսկ խոշոր կենդանիների (իշայծյամների) վրա յեւ հարձակվում լուսանը:

Անտառի ծայրամասում ապրում են գայլերը: Զմեռը նրանք վոհմակներ են կաղմում և հարձակում դործում նույնիսկ շատ խոշոր կենդանիների վրա:

Թավ անտառուի մեջ ապրում ե մուգ դարչնազույն տրծու:  
Նա կերպակովում ե բույսերով, հաստապտուղներով և կենդանիներով: Զմեռն անց ե կացնում վորջում կիսաքուն վիճակում:

Առաջադրություն: Ինչո՞վ ե տարբերվում տայզայի կլիման տունդրայի կլիմայից: Ի՞նչ տարբերություն կա արևմայան և արեւելյան տայզայի կլիմայի մեջ: Ինչո՞վ ե տարբերվում արեւելյան տայզայի բուսականությունը արևմայան տայզայի բուսականությունից: Ի՞նչ կենդանիներ են ապրում տայզայում և ինչո՞վ են նրանք տարբերվում տունդրայի կենդանիներից:

### ՏԱՅԳԱՅՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տայզայի զոնայում ապրում են եվենկները (տունդրումները), յակուտները, կարեները, կոմի, ոռուները:

Եվենկներն զբաղվում են վորսորդությամբ, յեղմերվառաշությամբ և ձկնորսությամբ:

Նստակյաց և կիսանստակյաց յակուտներն զբաղվում են յերկրագործությամբ, անասնապահությամբ և վորսորդությամբ:

Կարեները, կոմի և ոռուները նստակյաց են և զբաղվում են դյուզատեսությամբ և մուշտակավոր զաղանների վորսով: Նրանք ապրում են դվաալորապես գետերի և յերկաթուղիների մոտ:

Գետերն ու գետակներն պուած միակ ճանապարհներն եյին անտառի խորքերում: Գետերով մարդը թափանցնում էր տայզայի մեջ, կացինն ու հրացանը ձեռքին: Գետակների ափերին, բարձրագիր թմբերի վրա, մուլթ անտառների մեջ մարդիկ հիմնում եյին գյուղեր, կարատելով և այլելով չըջակայի անտառները մարելահողերի համար:

Բնակավայրերն անտառի խորքերն են թափանցում այնտեղ, վորտեղ մարդիկ կաղմակերպված հարձակում են գործում տայզայի վրա—դա անտառի և գանապան ողտակար հանածոնների շահագործման տեղերն են: Ներկայումս արդեն բավական շատ քաղաքներ են տայզայում: Համարյա բոլոր քաղաքները գտնվում են տայզայի հարավային ծայրամասում կամ յերկաթուղիների, կամ գետերի յերկարությամբ:

Վարժություն: Գտեք (192 էջ) քարտեղի վրա, թե յեղուպական տայզայի

վոր տեղումն են ապրում կարեները և կոմին, ասկական տայզայի վոր մաս մերումն են ապրում յակուտները և եվենկները, տայզայի վոր մասերում են ապրում ոսները:

Ի՞նչպես ե լավաններ ՏԱՅԳԱՅՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ ԽՈՐՀՐԴՅԱՅԻ ԻՇԿԱՄՆԱԽՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Յարական ժամանակ եվենկները և մյուս ժողովուրդները, վորոնք տայզայում վորսորդությամբ եյին զբաղվում, կարված կուլտուրական կենտրոններից և իրենց ամբողջ կյանքն անց եյին կացնում սրայքարելով գտան բնության դեմ: Վատ զին-եյին կացնում իրայքարելով գագան պայմանների հետ թափառում եյին տայզած, նրանք իրենց յեղմերուների գետ թափառում եյին տայ-

զայում՝ վորոնքով մուշտակալոր դաշտաններ: Մորթեղներ չընդունուի մասնակալոր դաշտանների վաճառականների կուլտուրականներին կեղեքիչ վաճառականների վեկան գետառությամբ: Կոմին վոր եյին կեղեքիչ մեծագորդ վաճառականներին: Նրանք ամբողջապես կախված եյին այդ վաճառականներից:

Տայզայի քոչվորների և վորսորդների մի մասը դեռ մինչ հայավայությունն ոկտեց անցնել նստակյաց կյանքի և զբաղվել հեղափոխությունն ոկտեց անցնել նստակյաց կյանքի և զբաղվել: Կեղեքիչ վաճառականների վորսարեն յեկան Պետառի վորսարեն: Հիմնվում են հաստատուն բնակավայրեր, կուլտուրական բաղաներ, դպրոցներ, կոոպերատիվներ:


Մորթեղային իշխանությունը վճռականորեն սկսեց վերականգնությունը:

### ԵՎԵՆԿՆԵՐԸ ՎՈՐՍՈՐԴԴՆԵՐ ԵՆ

Հենց վոր տայզան ծածկվում և ձյունով, սաստիկ սառնամանիք և, սկսվում և վորսը, եվենկների անտառային յեռուն աշխատանքը: Մի քանի որ շարունակ նրանք վորսում են իրենց ֆիւնատեղի շրջակայրում: Յերբ բոլոր սկյուռներին կոտրում են, նրանք անցնում են տայզայի խորքը:

Տայզայի մեջ կորած մի գետակի ափին փուլել են եվենկ-

Ների վրանները։ Ծուխը քուլա-քուլա բարձրանում է վրաններից։ Քիչ հեռու արածում են յեղջերուները։ Վրանից դուրս յեկալ վորսորդը։



Նկ. 22թ. Եվենիլը վորս անելիս

Գնում է նա տայզայում գետակից գետակ, գաղաթից գաղաթ աչքերը սրած, ականջները լարած։ Նա լսով գիտե, թե վորտեղ և թաղնվում սրաքիթ ալիվեր, տեսնում ե, թե ուր զնաց փոքրիկ խորամանկ կնդումը, լսում ե, թե վորտեղ ե ցատ'ում անհոգ սկյուռը… Սպիտակ ձյան վրա նա կարդում է անհասկանալի, հաղիլ յերեացող նշաններ։ Վորսորդի հետ զնում ե և չունը։ Յերեմն շունը կանգ է առնում վորեւ ծառի մոտ։ Բնդհատ-ընդհատ հաջում ե և ճանկերով կեղել ճանդուտում։

Վորսորդը նստում է, հրացան ուղղում, կրակում և դնում առաջ։ Գոտուց մի սկյուռ ևս կախվեց։

ՅԵՐԵԿԱՆ ՎՈՐՍՈՐԴԻՆ ԱՅՍՈՐ ԴԱՌՆՈՒՄ Ե ԲԱՆԱՈՐ

Զմեռվա վերջն է։ Ժամանակն է տայզայից զնալ գետակը ձուկ վորսալու։ Մի մառախոլապատ առավոտ եվենկ Պյոտր Մի-

րան իր վորդու հետ ուղեռովկեց դեպի Յենիսեյ դետը։

Մնացել էր անցնելու կեսորվա ճանապարհ։

Ծանոթ առուներ, ճահիճներ, ծառեր… բայց այս ի՞նչ պատահեց յեղջերուների հետ։ Նրանք կանգ են առնում, այս ու այն կողմն են ընկնում, համառում են, առաջ չեն գնում։ «Յերեկի արջի բներ կան գետափին», մտածում ե Միրան, քչելով վերվեր թռչող յեղջերուներին։

Հանկարծ յեղջերուները կանգ առան։ Տայզայում լսվեց ինչ վոր սարսափելի վոռնոց՝ «ու-դու-դու-ո՛ւ»։

Կելգան, Միրայի վորդին, հրացանը վերցրեց, շվիացրեց շանը և մտավ տայդա։ «Այդ ինչ չար վոդի յե, պետք ե տեսնել», մտածում էր Կելգան։ Նա յեկալ այն տեղը, վորտեղ անցյալ տարի կանգ եյին առել և չճանաչեց այդ տեղը։ Գետի վրա մեկը մյուսի հետեւց կանդնան են փայտե լաստեր։ Յերկաթե ճանկերը բանում են գերանը, նետում վեր և գերանները մեկը մյուսի հետեւց թաղնվում են չողենավերի ահուելի յերախներում։ Մարդիկ ծառերը տապալում են, դեմքինը փորում, տներ շինում։ Գետափին արդեն շինել են մի մեծ տուն, վորի մեջ կարող ե հարյուր վրան տեղավորվել։

Կելգան հոր հետ տայդա չվերադարձավ։ Նա մնաց տշխատելու գործարանում։

Յերեկլա քոչվորը բանվոր դարձավ։

Յերեք տարուց հետո այդուղեղ բարձրացավ մի նոր քարտաք-իդարկա։

ՅԱԿՈՒՏՆԵՐՆ ԱՆԱՍՆԱՊԱՀ ՈՒ ՅԵՐԿՐԱԳՈՐԾ ԵՆ

Լենա գետի միջին և ստորին հոսանքների յերկու կողմերում ընդարձակ տարածության վրա ապրում են յակուտները։ Այս յերկերը կարտված ե լեռնաշղթաներով (տե՛ս Փիղիկական քարտեղը), ծածկված ե անտառներով ու ճահիճներով։ Այնացուրտ ձմեռներն ամբողջ աշխարհում լինում են այստեղ։ Բնակչությունը չատ նոսր է։

Յակուտներն զրադվում են անասնապահությամբ և մասամբ ել յերկրագործությամբ։

Գետահովիտներում, լեռների անանցանելի անտառների և ճահիճների մեջ իբրարից հեռու ցըլված են յակուտների փոքր բնակալայրերը։ Երջակայրում արածում են անտառները՝ կովերը, ձիերը։ Կանայք խնամում են անտառներին։ Տղամարդիկները են հարում։ Ամբողջ որը համարյա առանց հանգստանալու աշխատում են նրանք։ Հյուսիսային ամառը կարճատէ ե, պետք ե խոտի պաշար հավաքել յերկարատև և խիստ ձմեռվահամար։

Յակուտական փոքրիկ գյուղերում դեռ մնացել են յակուտական հին վրանները (յուրտաները)։ Նրանք շինվում են փայտից և դրաից ծեփվում կալով, ձմեռն ապակու փոխարեն պատուհանի մեջ սառցի կտորներ եյին դնում, տանիքը շինվում էր ձողերից, հատակը՝ հողից։ Յուրտի մեջտեղն ոջախն և ծընանելուց հետո կարակի շուրջը շինված եյին թախտեր։ Նրանց վրա և աշխատում եյին և քնում։

Կոլեկտիվ տնտեսության զարգացման հետ արագորեն լավանում ե յակուտների կյանքը։ Շինվում են նոր տներ, հիմնվում են դպրոցներ, հիմնադանոցներ, արկումքներ և կուլտուրական ուրիշ հիմնարկներ։

Զարգացնում են անտառների ավելի կաթնատու ցեղեր։ Յերեան են գալիս խոտ հարող մեքենաներ։ Կազմակերպվում են խորհրդային տնտեսություններ, վորտեղ յակուտները սովորում են, թե ինչպես պետք ե պահել և ինամել անտառներին։

Յակուտիայի հարավային մասում սկսել ե ուժեղ կերպով զարգանալ յերկրագործությունը։ Մինչեւ հեղուկիուությունը միայն հարուստներն եյին հացահատիկ ցանում։ Զքավորները վոչ պարեւահող ունեյին, վոչ ել գործիքներ։ Հացը յերրիք չեր բավականանում, չքավորներն ալյուրի հետ ծառի կեղև եյին խառնում։


Այժմ գյուղատնտեսությունն արագորեն բարեւավելում է։ Խորհրդային տնտեսություններում ստանում են ցըտին դիմացող հացահատիկների տեսակներ։ Դաշտերում յերեացին արակտորներ։ Այժմ յակուտ գյուղացին ուսում ե բավականաչափ քաղաքականությունը հաց, իսկ լանջարեղենը գարձել ե նրա սովորական ուսուելիքը։

Արագորեն զարգանում ե բանջարարությունը։ Նույնիսկ վերիսոյանսկ քաղաքում մշտկում են բանջարեղեն։

### ԱՆՏԱՐԱԿՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միություն մեջ տայգան շատ մեծ տարածություն ե բոնում։ Անտառի այսչափ մեծ տարածություն վոչ մի պետություն չունի ամբողջ աշխարհում։

Մեր անտառը միշտ դրավել ե ոտարազդի վաճառականների ուշադրությունը։ Շատ փայտ ինքներս ենք գործածում, բացի այդ, մեծ քանակությամբ փայտ արտահանում ենք ուրիշ յերկրներ և ստացած վոսկով այնաեղ զնում մեղ համար անհրաժեշտ մեքենաներ։



Նկ. 23. Անտառակառում


Յական փայտարդյունաբերող վաճառականներն անխնակերպով վոչնչացնում եյին անտառի ընդարձակ տարածություններ։ Նրանք միայն շահույթի մասին եյին մտածում։ Նրանք բոլորովին չեյին հետաքրքրվում անտառային տնտեսության զարգացմամբ։ Անտառը կտրատում եյին այնպիսի տեղերում, վոր-

տեղից կայտը հեշտ էր տեղափոխել, այն ե՛ գետափերին, տայ-  
դայի ծալքամասերում, այսինքն՝ հենց այն տեղերում, վորտեղ  
պետք էր պահպանել անտառը:

Իսպառ կտրատելով, վոչնչացնելով անտառը, նրանք բոլո-  
րովին չելին մտածում նրա վերականգնման մասին:

Աշխատանքներն անտառում տարվում ելին ամենահասարակ  
ձևով: Փայտամթերման վրա աշխատող մարդկանց մասին ար-  
դյունաբերող վաճառականները չելին ել մտածում:

Խորհրդային Միության մեջ անտառային անտեսությունը  
կառուցվում ե սոցիալիստական հիմունքներով: Կազմակերպված



Նկ. 24. Գետով անտառամյուր են տեղափոխում

են անտառային արդյունաբերական անտեսություններ: Նախկին  
«ձմեռային» վորչերի փոխարեն, վորտեղ ապրում ելին անտա-  
ռահատները, այժմ փայտառթերման տեղերում շինվում են լու-


սալոր հանրակացարաններ, աներ: Բանվորներն աշխատում են  
բրիդաղներով:

Անտառային անտեսությունն այժմ ունի իր մշտական բան-  
վորները: Աշխատանքը մեքենայացվում է, գործադրվում են մե-  
խանիկական սղոցներ: Փայտը գուրս են բերում անտառից տրակ-  
տորներով:

Անց են կացնում նոր ճանապարհներ, շինում են առանձին  
սառցե ճանապարհներ, վորոնց վրայով հեշտությամբ սահում են  
գերանների ծանր բեռ ունեցող սահնակները, մաքրում են գետա-  
յին ճանապարհները, վորոնցով լողարկում են փայտ:

Այսուղի, վորտեղ առաջ վոչ մի մարդ չկար, և տեր ու տնօ-  
րեն արջն եր, այժմ աճում են փայտահատների բնակավայրեր,  
վորտեղ հիմնվում են կոռոկրատիվներ, դպրոց և հիվանդանոց:

Փայտը գործ ե ածվում շենքերի համար, բացի այդ՝ նա  
հում նյութ ե հանգիսանում մի շարք արտադրությունների հա-  
մար: Փայտից պատրաստում են զանազան շինանյութեր, թուղթ  
և քիմիական նյութեր:



Նկ. 25. Թորի փարրիկան տայգայում

Այդ հումքն ավելի ձեռնուու յե վերամշակության յինթար-  
կել տեղում, քան թե անմշակ ձևով տեղափոխել զանազան տե-  
ղեր և այդ փոխադրության վրա ծախսեր անել:

Զեռնտուր յե նույնալես ոտար յերկրների վաճառել պատրաստի շնանյութեր և փայտամշակման ուրիշ նյութեր, քան թե հում, սոնշմակ փայտ:

Յերկ տհա մութ, անանցանելի տայգայում կառուցվում են և արդեն աշխատում են սղոցաբաններ, թղթի Փարբիկաներ և քեմիական դործաբաններ:

### ՄՈՐԹԵՂԵՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ուստի շնինի տնտեսությունը տայգայում չատ ե լինկել: Վորսորդներն անխնա կոտրում եյին դաղաններին, վոչնչացնելով տայգայի մուշտակեղենին հարստությունը. թանգարժեք դաղանների քանակի հետղետե քչանում եր: Մուշտակեղենին հարստությունը կորստից աղանելու և մորթեղենի արդյունաբերությունը բարձրացնելու համար, Խորհրդային իշխանությունը սահմանում է մուշտակալոր դաղանների արգելավայրեր: Այդ արգելավայրերում բոլորսին արդերքած և դաղանի վորոր: Դա արվում է այն նպաստակառ, վոր մուշտակալոր դաղանները բաղդանան:

Հիմնվում են նույնակես դաղանաբուծական ֆերմաներ, վորտեղ սպահում են առենահաղիքագյուտ դաղանները՝ սամույները, կղաքաները, կղղումները, սև դարչնազույն աղվեսները: Բնաւըրջում են առանձնապես արժեք ունեցող ցեղեր: Նրանց լավինամում են և կանոնավոր կերպում: Նրանց վրա կատարում են դիտական դիտողություններ և փորձեր:

Կարգակիրակվում են վորսորդական կոլեկտիվ տնտեսություններ:

### ՏԱՅԴԱՅԻ ՀԱՆԱԾՈՒՅԹՅՈՒՆՆԵՐԻ

Տայդայի սղտակար հանածոները մինչև վերջին որերս քիչ եյին ուսումնասիրված: Վերջին տարիների հետազոտությունները ցույց տվին, վոր տայդայի ընդերքում չատ հարստությունը ներ են թաղնած՝ վոսկի, արծաք, կապարի և ցինկի հանքեր, ֆարածուլս, աղ, գրաֆիտ:


Շատ մեծ նշանակություն ունի կուղնեցկի ավազանի քարածուխը: Կուղնեցկը գանվում է նովոսիբիրսկից զեզի հարավարեւելք: Հետախուզումները ցույց տվին, վոր կուղնեցկի ավազանում չափաղանց չատ առաջնակարգ ածուխ և գտնվում:

Վերջին տարիներում մեծ չափերի յե հասել կուղնեցկի ածուխի արդյունաբերությունը: Կուղնեցկի ավազանի ածուխը բացառուկի նշանակություն ունի մեր արդյունաբերության զարգացման համար:

Առաջադրություն: ԽՍՀՄ-ի քարտեզի վրա գտեք թե տայգայի վոր աշրում ևն տարածված հետեւալ ողակար հանածոները՝ քարածուխ—կուղնեցկի ավազան (Նովսովիրսկից գեղի հարավարեւելք), նավթ (Գեղորայի վասկի վրա և Արտայան լեռների արևմտյան լանջում), վոսկի (Լենա գետի և Ալչան վասկի վրա):

### ԲԵՐԵՁՆԻԿԻ

Ուրալից արեմուտք կառմայի ձախ ափին գետնի տակ փըռում է գանագան աղերի խալ, վորի հաստությունը հասնում է



Նկ. 26. Բերեզնիկի

500 ժետրի: Աղերից վոմանք գործ են ածվում կերակրի մեջ—  
դա մեր սովորական, կերակրի աղն ե: Մյուսները հրաշալի ոլա-  
րաբանյութեր են վարելահողերի համար—դրանք կալիումի ա-  
ղերն են:

Աղերի այդ հարուստ չերտերից վոչ հեռու գտնվում են քա-  
րածիի և ֆոսֆորիտների չերտեր: Յարական իշխանության ո-  
րով այդ հակայտական հարստությունները շատ քիչ եյին շահա-  
գործվում:

Ներկայումս այստեղ կառուցված է ամենամեծ քիմիական  
կոմբինատն ամբողջ աշխարհում՝ Բերեզնիկին: Սա բաղկացած  
է մի քանի խոշոր գործարաններից, վորոնք այստեղ արդյունա-  
հանող ոգտակար հանածոններից պատրաստում են զանազան ոլա-  
րաբանյութեր: Յերեկոները մի քանի տասնյակ կիլոմետր հե-  
ռավուղությունից կարելի յե տեսնել կոմբինատի բազմաթիվ շեն-  
քերը, վորոնք հեղեղված են ելեկտրական լույսով:

Այստեղից պարարտանյութեր կամա գետով տեղափոխում  
են ԽՍՀՄ-ի զանազան տեղերը, կողեկտիվ և խորհրդային տնտե-  
սությունների անձայրածիր դաշտերը:

Քարտեղի վրա ցույց տվեք Բերեզնիկին:

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱՅԳԱՅՈՒՄ

Անտառի շահագործումը և մուշտակեղենի արդյունաբերու-  
թյունը կազմում են տայդայի գոտու տնտեսության հիմնական  
ճյուղերը և բնակչության հիմնական զբաղմունքը:

Բայց տայդայի բնակչությունը զանազան սննդամթերքների  
կարիք ունի: Նրան պետք են հաց, բանջարեղեն, կաթնեղին,  
միս: Այս բոլորը հեռվից բերելը դժվար է և ձեռնտու չե: Այդ  
պատճառով անհրաժեշտ ե, վոր սննդամթերքներից ինչ վոր  
հնարանոր և տեղն ու տեղն արտադրի:

Տայդայի բնական սլայմանները գյուղատնտեսությամբ  
զբաղելու համար նպաստավոր չեն. այստեղ հողերն արդա-  
վանդ չեն, լինում են ցուրտ զարուճներ և վաղահառ սառնամա-  
վանդ չեն: Սակայն փորձերը ցույց տվեն, վոր չնայելով այդ

բնական դժվարություններին, տնտեսությունը կանոնավոր տա-  
նելու դեպքում, այստեղ կարող են զարգանալ և յերկրագործու-  
թյունը, և անասնապահությունը:

Այստեղ կարող են հասնել գյուղատնտեսական բույսերից  
շատերը, վորոնք մինչ վերջին ժամանակներն աճում եյին միայն  
ավելի հարավ ընկած վայրերում:

Մշակվում են այդ բույսերից այնպիսի տեսակներ, վորոնք  
կարողանում են ցրտին գիմանալ:

Կաթնատու անասունները կարող են ավելի առատ կաթ տալ,  
յեթե նրանց լավ խնամեն և ընտրեն ցրտին գիմացող տեսակ-  
ներ:

Խորհրդային իշխանությունը վորոշել է բարձրացնել տայ-  
դայի զոնայի գյուղատնտեսությունը:

Կազմակերպվում են խորհրդային և կոլեկտիվ տնտեսու-  
թյուններ: Խորհրդային տնտեսություններն իրենց որբնակով  
ցույց են տալիս, թե ինչպես պետք է վարել յերկրագործությու-  
նը, բանջարաբուծությունը, ինչպես պետք է խնամել անասուն-  
ներին:

Խորհրդային իշխանությունն առանձնապես մեծ ուշադրու-  
թյուն դարձրեց տայդայի զոնայում կաթնատու անասունների  
բարձրացման վրա, վորովհետեւ այստեղ գետերի հովիտներում  
լավ մարդագետիններ կան:

### ՔԱՂԱՔՆԵՐԻ ԿԱՌԱՒՅՈՒՄՆԵՐ ՏԱՅԳԱՅՈՒՄ


Տայդայում արագորեն առաջ և գնում քաղաքների կառու-  
ցումը:

Ցերկուս և կես տարվա ընթացքում հեռալոր արևելյան  
տայդայում աճեց մի նոր քաղաք՝ կուսանոլսկը՝ Ամուր գետի  
վրա:

Դա ԽՍՀՄ-ի ամենանոր քաղաքներից մեկն է:

Խորհրդային Միության զանազան քաղաքներից տայդա յե-  
կան կոմյերիտականները, կտրաեցին տայդայի մի հողակտորի  
ծառերը, չորացրին ճահիճները և Ամուր գետի ափին բարձրա-

բազությամբ իրագործեց խորհրդային իշխանությունը՝ 20 ամսավա ընթացքում շինվեց աշխարհում ամենամեծ՝ Ստալինի անվան ՍՊԻՏԱԿ-ԲԱԼԹԻԿԸՆՎՅԱՆ ԶՐԱՆՑՔԸ, վորի յերկարությունն է 200 կիլոմետր :



Նկ. 28. Բալթիկ ծովից դեպի Սպիտակ ծով հանապարհի ովտեման


Այդ ջրանցքն Ոնեփայի լիճը միացնում է Սպիտակ ծովի հետ : Նրանով կարելի յէ 5—6 որում Լենինգրադից հասնել Սպիտակի ծով : Առաջ այդպիսի ճանապարհորդության համար 17 որեր պետք, վարովհետև պետք եր պտավիլ Յելբուպայի հյուսիսային ափերի շուրջը :

Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքը մեծ նշանակություն ունի ամբողջ Խորհրդային Միության համար :

Այդ ջրանցքով հյուսիսից Խորհրդային Միության գանձանառեղեն ուղարկվում են՝ փայտ, ձուկ, մորթի, պարարտանյութեր, շինանյութեր, իսկ գեղի հյուսիս փոխադրվում են՝ հաց, նամիթ, աղ, լայն գործածության զանազան ապրանքներ :

Ջրանցքի յերկարությամբ կառուցվում են ելեկտրական կա-

յաններ, Փարբիկաններ և գործարաններ : Ելեկտրական պայմանույթը հեղեղում է նախկին «չվախեցող թռչունների յերկիրը» : Բաղմաթիվ Փարբիկաններում և գործարաններում պատրաստվում են տախտակներ, Փաներներ, թռողթ, փայտի թափթփուկներից՝ շաքար, սիրոս, քացախ, սպիրտ : Անտառների անանցանելի թա-



Նկ. 29. Տայգան Սպիտակ-Բալթիկ ծովյան ջրանցքի վոտ :

վուտներով կանցնեն խճուղիներ, կուանան ելեկտրական գնացքներ :

Չորացած ճահիճներում հացահատիկները հասկ կղցեն, կերպախոտերը կանաչին կտան : Յել այստեղ, վորտեղ դեռևս քառաջ թափառում եր «անտառների բրդոտ տերը»—արջը, կրուպանան մեծ բնակալայրեր ու քաղաքներ :

#### ԱՐԵԱՆԴԵԼԾԿ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏԸ


Քարտեզի վրա գտեք Արխանգելսկ նավահանդիսութ:

Յածրագիր ճահճոտ ափերի միջև փուլել և Հյուսիսային Զմինայի լայն գետաբերանը : Յերկնակամարը ծածկվել և մուշ

ամպերով, մոտյլ են Դվինայի կատաղի ալեքները։ Բայց այդ ափերի կյանքն ուրախացնում է մարդուն։ Վոր կողմն ել նայում ես—ամենուրեք փայտի անլերջ պահեստներ։ Իրար վրա դարսված են հաստ դերաններ, սղոցած տախտակները թիթե տանիքների տակ իրար վրա դարսված են բարձր կիտակածքներով։

Վերամբարձ մեջենաները ջրից զանդաղորեն հանում են, բարձրացնում վերև և ասկա կանոնավոր կերպով իրար վրա դարսում ամբողջ ծառեր, վորոնք բերվել են լաստերով։

Վաղում են ելեկտրոֆարշի վագոնները, շաչում են սղոցարանի սուլիչները, սուլում են շոգենավերը։ Հարյուրավոր յելուրը բանվորներ տուղրակներն ու սղոցները մեջքներին լցվում են նավահանդիսութեան։



Նկ. 30. Սղոցագործարան

Հաղարավոր ոտար շողենավեր յեկել են Արխանգելսկ բարձելու տախտակ և գերան։ Նրանց բարձր կայմերն ու դույնը գույն զբաշակները ծածկել են գետը։

Այդ շողենավերը մեր փայտը տեղափոխում են աշխարհի բոլոր ծայրերով։

Անցնում են մեր սուսական ձկնորսանավերը, մարդատար շողենավերը, վորոնք բանվորներ են տեղափոխում։ Բայց նրանք կրչում են փայտանյութի մասսայի մեջ։ ամենուրեք փայտե տախտակներն ու գերանները բռնել են Դվինայի ափերը, փայտը բարձր կիտակածքով դարսված և ոտար նավերի վրա։ Նավահանգ գիտաներում բարձում են գերաններ և տախտակներ։

### ԻԳԱՐԿԱՆ—ԲԵՎԵՌԱՅԻՆ ՆԱՎԱՀԱՆԳԻՒՄ

Քարտեղի վրա գտեք իդարկա նավահանգիստը։

Յենիսեյի աջ ափին վերջին տարիներում աճեց նոր նավահանգիստ իգարկան։

Դեռևս քիչ առաջ իգարկայի կառուցողներն առանց խա-



Նկ. 31. Իգարկա նավահանգիստը

բույկների և պահապանների չեյին կարողանում քնել։ արջերը միշտ կարող եյին գիշերով նրանց վրա հարձակվել։

Նորածին քաղաքի առաջին բնակիչները կտրված եյին ամբողջ աշխարհից, սննդամթերքների մեծ նեղություն եյին կրում, համառորեն պայքարում եյին տայգայի և բնեռային ցրտերի դեմ:

Յերկու տարվա մեջ բնեռային ըլջաններից դեպի հյուսիս առաջացավ արդյունաբերական մի նոր քաղաք և նավահանդիսաւ: Փայտի համար այստեղ դալիս են ոտար շողենավեր: Բարձումը կատարվում է համարյա անընդհատ գիշեր-ցերեկ:

Միում են գործարաններին ծինելույղները: Այստեղ յերեք աղոցարան փայտ են՝ սղոցում Յեկլուպա և Ամերիկա արտահանելու համար: Նրանց կողքին մի քանի ուրիշ գործարաններ պատրաստում են ֆաներա և փայտանյութի մասսա, վորից կարելի յե պատրաստել թուղթ և արհեստական մետաքս: Այստում են պահածոների գործարանները: Քաղաքի դիմաց գտնվող կղզու վրա տրակառներով մշակում են հողը: Բանջարանոցներում աճում են կարտոֆիլ, կաղամբ, սոխ և ուրիշ բանջարեղիններ:

Մարդադեմիններում արածում են աղնվացեղ կաթնատու անասուններ: Քաղաքի մեջ կան շատ տներ, լայն փողոցներ, սյուներ՝ ելեկտրական լարերով: Աշխատում ե ելեկտրակայանը: Խոսում ե ռադիոն: Կառուցել են կինո, բացել դպրոցներ, հիմանդանոցներ, տունական: Ակումբում կարդում են դասախոսություններ, զեկուցումներ, կազմակերպվում են յերեկույթներ:

Վարդուրյուն 1. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք տայգայի գոտին:

2. Գրեցեք տայգայով հոսող գետերի անունները:


3. Կոնտուրային քարտեզի վրա նշանակեցեք Վերիոյանակ, Յակուտակ, Ֆերդինիկի, Արխանգելսկ, Մուրմանսկ, Իդարկա քաղաքները:

Աշխատանք արտադայան ժամանակ: Կազմեցեք ալբոմ «Տայգայի գոտի» թեմայով:

## ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՈՒՄ

Խառն անտառների զոնան գտնվում է տայգայից դեպի հարավ-արևմուտք: Տայգայի և խառն անտառների միջի ստհմանն անցնում է մոտավորապես Լենինգրադ—Կաղան դօով: Հարավում սահմանն անցնում է կաղանից մինչև Կիեվ:

Քարտեզի վրա գտեք խառն անտառների գոտին:



Նկ. 32. Խառն անտառների գոնայում

## ՍԱՎԱԲՆԱԿԻ ՎՐԱՅՑԻՑ

Այս հողվածը կարդալիս հետեւցեք քարտեզին:

Սավառնակը մի կողմը թողեց Վիչնի Վոլոչեկ քաղաքը և բանեց Մոսկվայի ուղղությունը: Ամեն ուղղությամբ տարածվում են ընդարձակ անտառներ: Նրանք հաճախ ընդհատվում են կտրտած անտառատեղերով և ճահճիճներով: Յերկիրը հարթ և, բայց նրա վրա տեղ-տեղ յերեսում են բլուրներ: Ներքեսում նըշմարվում են գետերի արծաթավայլ թելեր և բազմաթիվ դյուռ զեր շրջապատված վարելահողերով և բանջարանոցներով:

Վորքան առաջ ենք գնում, այնքան ավելի հաճախ ենք հանդիպում կտրտալած անտառատեղերի, վարելահողերն ավելի յեն ընդարձակվում, գյուղերն ավելի շուտ-շուտ են պատահում:

Ահա յերեսում ե վուշի զմբուխտե մեծ դաշտը: Մեկը, մյուսը... Սրանք վուշի կոլեկտիվ անտեսությունների ցանքերն են:

Կալինին քաղաքի մոտ ընկած և տորֆի ճահճիճների ընդարձակ տարածություն: Ծխում են կալինինի գործարանների և Փարբեկանների ծինելույղները:

Սավառնակը կտրում է Վոլգայի գալարվող փայլուն ժապանները և զարձյալ ներքում անտառների ծածկոց, միայն ավելի նոսր, քան հյուսիսում: Յեկանք այժմ խողի մաղի պես բիզ-բիզ չեն կանգնած—նրանց ուրվադերն ավելի քնքույշ է: Այս անտառներում սաղարթավոր ծառերն ավելի շատ են:

Դարձյալ մի հարյուր կիլոմետր ևս և սավառնակը կլինի Մոսկվայում: Մեկը մյուսի հետեից արագորեն անցան գյուղեր, լանվորական նոր ավաններ: Յերեացին գործարաններ և ֆաբրիկաներ: Անտառներն ավելի ես նոսրացան: Միայն առանձին չկտրոված անտառի մնացորդներով կարելի յե դաղակիար կաղմել, վոր մի ժամանակ այստեղ նույնակես անտառ և յեղել:

Բնությունը նահանջել և մարդու կամքի առաջ, շինարարության առաջ:

Ահա և Մոսկվան... Սոճու, կեչու և բարդու անտառի փոխարեն—գործարանային ծխնելույղների անտառ և քարե շենքերի զանգված:

**Ի՞նքո՞ւ Ե ՓՈԽՎԵԼ ԽԱՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԴԱՏԱՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՔԸ**


Հին ժամանակ խառն անտառների ամբողջ զոտին ծածկված եր անանցանելի մութ անտառներով:

Այս տեղերը հարմար եյին մարդկային հին բնակատեղերի համար: Անտառը պաշտպանում եր թշնամիների հանկարծակի հարձակումներից: Դեպի ամեն կողմն ցրվող գետերը հաղորդակցության լավ ճանապարհներ եյին անանցանելի անտառներում: Մարդը կացինը ձեռքին հարձակվեց անտառի վրա: Նա կորեց ծառերը, մաքրեց բացուտը ցանքի և բնակարանի համար:

Մութ անտառները հետզհետե վոչնչանում եյին, նոսրանում: Նրանց փոխարեն յերեան եյին դալիս վարելահողեր, մարդագետիներ, առաջ եյին դալիս գյուղեր:

Անցան դարեր, և մարդկանց շատ սերունդների աշխատանքից խառն անտառների գոտին բոլորվին անձանաշելի դարձավ:

Անտառի ահաղի՝ տարածություններն անհետացան: Նո-



Նկ. 33. Թաքրիկաներն ու գործարանները խառն անտառների գոտում

պահպանովեց միայն քիչ տեղերում: Չորացվել են հաղարավոց հեկտար ճահճիններ:

Անհետացած անտառների փոխարեն առաջացան գյուղեր, քաղաքներ, գործարաններ և ֆաբրիկաներ, ամեն ուղղությամբ տարածվեց յերկաթուղինների ցանցը: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո փովեցին կուեկտիվ, խորհրդային անտեսություններ: Աճեցին նոր հսկա գործարաններ: Անտառների ու այդիների կանաչի մեջ կառուցվել են նոր քաղաքներ: Վերակառուցվել ու ծառալարդվել են հին քաղաքներ:

### ԽԱՌՆ ԱՆՏԱՌՈՒՄ

Գետակի ափին ապաստան ե գտել մի փոքրիկ գյուղ:

Գյուղի շուրջը տարածվում են գաշտեր, իսկ նրանցից հետո անտառներ... Ամառային շող որերին անտառը հրապուրում ե եր խիտ կանաչով, խոտանալով սակեր և հով: Անտառի յեղը ծածկվել է ջահել կեչիներով: Արեկի ճառաղայթներն անցնում են ձյուղերի միջով և պայծառ բծեր զցում խոտի խիտ, գույնդդույն զորդի վրա: Կապտին են տալիս զանդակիլները, կարմրին և տալիս մեխակը, առվույտը: Տեղ-տեղ հրապօւրիչ հայացքով նայում են մորու հատապտուղները:

Յեզրից հեռու անտառն առտիճանաբար խտանում է, կեչեները քչանում են: Մրանց խեղդում են բարձր, մութ յեղնե-

**Ները:** Նրանց մեջ աճում են լրի, բարդի ծառեր։ Սպիտակին  
են տալիս փոնչնու խոշոր ծաղիկները։ Խոտն այլևս այնպես խիս  
չե և ծաղիկներով խայտարդետ չե։ Հատապտուղներ քիչ կան։  
Բայց դրանց փոխարեն պատահում են սունկեր։ Հաճախ լովում  
ե, թե ինչպես ե կտցահարն իր կտուցով ծեծում հին յեղենու  
կեղեւը։ Յերբեմն ծառերի ճյուղերի մեջ յերեւում ե սկյուռի չեկ  
մուշտակը։ Ճռվողում են անտառային թռչունները։

Ահա մի մեծ բացուտ։ Շարքերով դարսված են կտրոված  
փայտերը, իսկ նրանց մեջ ցցված են թարմ կոճղեր։ Անտառն  
այստեղ հենց այս ձմեռն են կտրատել, իսկ բացուտն արդեն  
ծածկվել ե բարձր, հյութալի խոտով, կոճղերի շուրջը բռնել են  
մոռի թփերը։

Բացուտից հետո դարձյալ անտառ, բայց հահճոտ։ Ամառը  
նրանց միջով անհնարին ե անցնել։

### ԽՍՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՈՆԱՅԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Խառն անտառների զոնայի մակերեսութը, ինչպես քարտե-  
ղից յերեւում ե, դաշտավայր ե։ Մեջտեղով, հյուսիսից գեղի  
հարավ անցնում ե Միջին Ռուսական բարձրությունը։

Հարթության մակերեսութը միանդամայն հարթ, ուղիղ չե,  
այլ բլուս։  
Գետերը։ Քարտեղից յերեւում ե, վոր խառն անտառների զո-  
նայով հոսող գետերն սկիզբն են առնում Միջին Ռուսական բարձ-  
րությունից և հոսում տարբեր ուղղությամբ դեպի հետեւյալ  
յերեք ծովերը՝ Բալթիկ, Սև և Կասպից։

Այս հողվածը կարդալիս հետեւյեք քարտեղին։  
Քարտեղի վրա գտեք Վոլգա, Դոն, Դնեստր, Արևմտյան Դվինա գետերը։  
Յուց տվեք նրանց ամբողջ հոսանքը, սկսմծ ակունքից մինչև զետարե-  
ւոնը։

Խառն անտառների զոնայի կլիման ավելի տաք ե, քան տայ-  
դայի կլիման։ Արևմուտաքից, տաք Առլանտյան ովկիանոսի կող-  
մից փշող քամիները բերում են տաքություն և մեղմացնում են  
ձմեռային ստուամանիքները։ Զմեռն այստեղ տեսում ե մոտ 5

ամիս, բայց ավելի տաք ե, քան թե տայգայում։ Ամառն ավելի  
յերկարատե ե և տաք, քան տայգայում։ Հաճախ անձրւներ են  
գալիս։ Անձրւներ բերում մն Առլանտյան ովկիանոսի կողմից փշող  
քամիները։

Հողերը մոխրահողային են, ինչպես տայգայում։ Բայց  
նրանք այստեղ ավելի արգավանդ են։

Բուսականություն և կենդանական աշխարհ։ Կլիմայի մեղ-  
մության չնորհիվ այստեղ աճում են սաղարթավոր ծառերի զա-  
նազան տեսակներ՝ կեչի, կաղնի, թլուկի, հացի, լորի։ Փշատերեա-  
և սաղարթավոր ծառերն աճում են իրար հետ խառը մեջընդուշչա-  
ծորֆային ճահճներն ընդարձակ տարածություն են բռնում։

Շատ առաջ այստեղ գտնվում եյին մութ, անանցանելի ան-  
տառներ։ Այժմ նրանք համարյա բոլորովին կտրտված են։ Մեծ  
տարածությամբ անտառներ մնացել են միայն ամենաարևմտյան  
մասում, Պոլեսյայում։

Այնտեղ, վորտեղ անտառները պահպանվել են, ապրում են  
նույն անտառային գաղաններն ու թռչունները, ինչ վոր տայ-  
գայում։

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԴԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԻ  
ԽՍՌՆ ԱՆՏԱՌՆԵՐԻ ԶՈՆԱՅՈՒՄ.

Նայեցեք քարտեղին։ Խառն անտառների զոնայում նշանակ-  
ված են յերկու մեծ արդյունաբերական շրջան։ Մեկը Լենինդրա-  
դի մոտ, իսկ մյուսը՝ Մոսկվա, Կալինին, Իվանովո, Գորկի քա-  
ղաքների միջև։


Այս շրջաններում առաջ ել շատ գործարաններ ու Փարբե-  
կաներ կային։ Բայց արդյունաբերությունն այստեղ առանձնա-  
պես զարգացավ խորհրդային իշխանության որով։

Հիմնովին վերակառուցվեց Մոսկվայի և Լենինդրագի ար-  
դյունաբերությունը։ Այստեղ կառուցվեցին և սարքավորվեցին  
բազմաթիվ խոչըն գործարաններ։ Այս գործարաններում սկսե-  
ցին առաջին անգամ պատրաստել զանազան բարդ մեքենաներ,  
և ԱՀՄ-ի տարբեր տեղերում կառուցվող գործարաններն ու ե-  
լեկարակայանները սարքավորելու համար։

Աճեց արվամբորիւլային գործարան—ընթանառ Գորկի քաղաքում : Հնդարձակվեցին ու վերակառւցվեցին Մոսկվայի, Կալինինի և Իվանովյի մանվածքային գործարանները :

Խառն անտառների զոնայում արդյունաբերությունը դարձածում-ի մեծ թափով : Շատ վառելիք է աղետք, վորպեսդի նրա բաշխաթիվ գործարաններն ու Փարբիկաներն անընդհատ աշխատեն :

Սկսեցին արդյունահանել այն տորֆը, լորն այստեղ, անանցանելի ճահճների մեջ դարերով ընկած եր առանց շահագործ-



Նկ. 34. «Կրամբի ոկտյաբը» Ելեկտրոկայանը

ման : Իսկ վորպեսդի այդ տորֆի շահագործումն ավելի ձեռընտու լինէ, ուստեցին ելեկտրակայաններ չինել հենց տորֆային ճահճներում : Արդեն կառուցված են և տորֆով աշխատում են յերկու մեծ ելեկտրակայան—Լենինի անվան Շատուրայի ելեկտրակայանը, վոր Մոսկվայից 135 կիլոմետր գետի արևելք և դանվում և «Կրամբիր Հոկտեմբերը»—Լենինգրադի մոտ :

### ԼԵՆԻՆՑԱՆ ՇԱՏՈՒՐԱ

Քարտեզի վրա գտեք Շատուրայի Ելեկտրակայանը :

Այնտեղ, վորանդ այժմ կանգնած է Շատուրայի ելեկտրակայանը, անհիշելի ժամանակներից ձգվում եյին տորֆային անահանելի ճահճները :

Հաղարավոր Հեկտար տարածությամբ փովում եյին ճահճներներ և վախտ ցածլիկ անտառները : Տեղադրել ճահճների մեջ գտնվող կղզիների վրա պատսպարոված եյին խղճուկ ծառեր :

Ճահճները դյուդացիների համար աղքատություն և հիվանդացություններ եյին բերում : Մինչդեռ նրանք իրենց մեջ ճահճստություն եյին պարունակում—զա տորֆի հօկայտկան պաշարն եզ :

Յեկալ 1917 թ. Հոկտեմբերը : Բանվորներն իշխանությունն իրենց ձեռքը վերցրին : Սկսվեց արյունաեղ պատերազմ սպիռ տարկների հետ : Գեներալները գրավեցին այն տեղերը, վորտեղ ստացվում եր նարկթ և ածուխ : Մոսկվայի արդյունաբերական կենտրոնը մնաց առանց վառելիքի :

Գործարանների կրակարանները հանդչում եյին : Բնակարանները մնացել եյին առանց տաքացնելու : Ելեկտրական լաստերներն աղոտ լույս եյին արձակում :

Ինչ դնով ել լինի պետք եր վառելիք ճարել :

Հիշեցին Շատուրայի ճահճները :

Վ. ի. Լենինը կարգադրեց անմիջապես շահագործել տորֆը :

Աշխատանքը յեռաց . բանվորներն սկսեցին առուներ փորել և ճահճի ջուրն այդ առուներով հեռացնել, տորֆն արդյունահանել :

Այդ տորֆը յերկաթուղով փոխադրվեց Մոսկվա և արդյունաբերական այլ կենտրոններ :

Տորֆի արտահանությունը Շատուրայում հետզհետե ընդարձակվում եր : Բայց այդ տորֆը ձեռնտու չեր յերկաթուղով տեղափոխել—դրա համար շատ վագոններ եյին պետք :

Այն ժամանակ մի այսպիսի միտք ծագեց՝ ճահճի մոտ մեծ ելեկտրակայան կառուցել և ելեկտրական հոսանքը հաղորդիչներով ուղարկել ուր վոր սկսետք ե :

Անցավ մի քանի տարի : Յեկ Շատուրայի ճահճների վրա աճեց տորֆով աշխատող ամենամեծ ելեկտրակայանն ամբողջ աշխարհում :

15 տարի աշխատում ե Շատուրայի ելեկտրակայանը : Նրա

կրակարաններում այրվում և Շատուրայի տորֆը : Աշխատում են շոգեմեքենաները և գոլորչով շարժման մեջ դնում տուրբինները (թերով անլվներ), իսկ դրա հետ և ելեկտրական մեքենաները :

Պտտվում են ելեկտրական մեքենաները, և հոսանքը հաղորդիչներով վարում են դեպի զանազան կողմեր, տասնյակ և հարյուրափոր կիլոմետր :

### ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խառն անտառների զոնայում շատ հին ժամանակներից սկսած պրակում են յերկրագործությամբ :

Այս զոնայի հողերը փոքր ինչ ավելի արգավանդ են, քան տարյայում : Կլիման ավելի մեղմ է, յերկրագործության համար ավելի հարմար :

Հին ժամանակներից սկսած այսուղ մշակում են զարի, վարսակ, հաճար, վուշ, կանչի, կարտոֆիլ և ուրիշ բանջարեղեն : Վերջերս շատ տեղերում սկսել են մշակել նաև ցորեն :

Բայց խառն անտառների զոնայում գյուղատնտեսությունը յերեք չի կարողացել հողալ նույնիսկ գյուղացու կարիքները : Հողը կարիք ուներ լավ մշակման և պարարտացման, իսկ ցարական կառավարության և կարգածառերերի կողմից քայլարված գյուղացիները չելին կարողանում հողը կանոնավոր մշակել և լավ պարարտացնել : Շատերն անտառներ և անհրաժեշտ յերեսագործական գործիքներ ու մեքենաներ չունեցին, և այդ բոլորի հետ միասին գյուղացիները միշտ կախված եյին կուլակներից ու կալվածաերերից :

Մինչդեռ արդյունաբերական աճող կենտրոնների համար անդամթերքների պահանջն ավելի ու ավելի յե մեծանում, և գյուղատնտեսությունը կարող է հողալ այդ կարիքը :

Գյուղատնտեսությունը վճռական վերակառուցման և յենթարկում խառն անտառների զոնայում :

Կոլեկտիվ անտեսություններն ամրացել են : Ստեղծվել են խորհրդային անտեսություններ, մեքենա-տրակտորային կայան-

ներ : Խոչոր արդյունաբերական կենտրոնների չուրչը դարձացել են բանջարաբուծություն և կաթնատվություն :

### ԽԱՐԵՎ ԱՆՏԱՐՆԵՐԻ ԶՈՒՄԸ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Խառն անտառների զոնայում ապրում են դժվարորապես քերության և ռուսներ :

Այսուղ և գտնվում Բելօնության ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՑԻՒԹԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (ԲՍԽՀ) :

Քարտեղի վրա գտեք այդ հանրապետությունը :

Աշխատավոր բելոռուսներն աղքատիկ կյանք եյին վարում ցարի ժամանակ : Ճահիճների ու անտառների մեջ եյին ցրված բելոռուսական գյուղերը :

Անրերը հողերը ցածր բերք եյին տալիս : Այսուղ շատ քիչ եր զարդացած արդյունաբերությունը : Բնակչությունը խալար եր ու անդքաղետ : Սակավաթիվ դպրոցներում ուսուցանում եյին միայն ուսւներն լեզվով :

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավոր բելոռուսների կյանքը խիստ բարեկալվեց :

Բելոռուսիայում շատ մեծ ուշադրություն և դարձվում անացանելի ճահիճների զեմ պայքարելու գործի վրա, քանի վորաց գյուղատնտեսության դիմակոր չարիքն և հանդիսանում : Չորացվել են վիթխարի տարածությամբ ճահիճներ, վարոնց տեղն այժմ նոր վարելահողեր—արտօներ են փայտած :

Չորացված տորֆային ճահիճների վրա հիմնվել են ելեկտրոնկայաններ, վորոնք այժմ եներդիա յեն տալիս գյուղատնտեսության ու արդյունաբերությանը : Բարելավվում, կարդավորվում և գյուղատնտեսությունը :

Կառուցված են վայտի վերամշակման բաղմաթիվ գործարաններ :

Բելոռուսիայում արագորեն զարգանում են նաև կուլտուրական կյանքը : Այսուղ մացված և ընդհանուր ուսուցում : Բելոռուսական լեզվով հրատարակվում են բարձրաթիվ թերթեր ու ժուռանակներ : Ստեղծվել են մի քանի տասնյակ բարձրագույն ուսումնական հաստատություններ ու գիտահետազոտական ինստիտուտներ :

Նայեցեք քարտեղին: Դուք տեսնում եք, վոր խառն անտառ-ների զոնայով ամեն կողմից դեպի Մոսկվա յեն ուղղվում յեր-կաթողիներ: Տասնեմեկ յերկաթուղի միանալով իրար հետ կաղ-մում են Մոսկվայի յերկաթուղային հանգույցը: Նրանք Մոսկ-վան, իսկ դրա միջոցով նաև մոտակա արդյունաբերական կենտ-րոնները միացնում են Միության հեռավոր շրջանների հետ:

Խառն անտառների զոնայի արդյունաբերական կենտրոննե-րում արտադրած զանազան ապրանքների միջնավոր տոններ այդ ճանապարհներով հոսում են դեպի Միության տարբեր ան-կյունները: Այդ նույն ճանապարհներով հակառակ ուղղությամբ փոխադրվում են բազմազան հում նյութեր, ինչպես և վառե-մք:

Քարտեղի միջոցով պարզեցեք թե Մոսկվայից ապրանքները յերկաթու-ռով ուր կարելի յե փոխադրել:

Բայց մենք դեռևս բավարար չախով յերկաթուղիներ չու-նենք. ճանապարհների մեջ ամենից եժանը ջրային ճանապար-հըն ե:

Նայեցեք ԽՍՀՄ-ի քարտեղին: Խառն անտառների զոնայում սկսվում ե Յեվրոպայի ամենամեծ դետը: Դա Վոլգան է: Նա կաղմում ե ջրային մի յերկար ճանապարհ: Ավելի քան 3½ հա-զար կիլոմետր յերկարություն ունի նա:

Չախ կողմից Վոլգայի մեջ թափվում են մեծ դետեր, կըտ-րելով խիտ անտառները: Աջ կողմից Վոլգայի մեջ ե թափվում նկա գետը Մոսկվա վտակով, վորի վրա դանվում ե Մոսկվա քաղաքը:

Վորթան կտրում ե խառն անտառների համարյա ամբողջ զո-նան, հոսում ե կալինին, Գորկի, Կաղան քաղաքների մոտով և իր ջրերը տափաստանների միջով տանում ե դեպի Կասպից ծովը:

Բայց Մոսկվա քաղաքը, վոր խառն անտառների զոնայի ա-մենախոչոր արդյունաբերական կենտրոնն ե և ամբողջ Խորհր-դային Միության մայրաքաղաքը, այդ մեծ ջրային ճանապարհի

մի կողմն ե մնում: Վոլգայի մեծ չողենալերը Մոսկվա սակա-վաջուր գետով չեն կարողանում մոտենալ Մոսկվա քաղաքին:

Մինչդեռ Վոլգան բավականին մոտ ե հոսում:

Քարտեղի վրա ցույց տվեց այն տեղը, վորտեղ Վոլգան ամենից չառ-ե մոտենում Մոսկվային:

Խորհրդային կառավարությունը վորոշել ե ջրային ճանա-պարհը հասցնել Մոսկվա քաղաքը, Մոսկվա գետը նախարկելի դարձնել: Վոլգայի և Մոսկվայի միջև պետք ե փորձի մի ջրանցք: Վոլգայի ջուրը կթափվի Մոսկվա գետի մեջ և սա ջրա-ռատ կրանա:

Յեվ կարմիր մայրաքաղաքից կանցնեն ջրային ճանապարհ-ներ դեպի մեր ընդարձակ յերկրի տարբեր կողմերը՝ դեպի Կաս-պից, Բալթիկ և Սպիտակ ծովերը:

Ջրանցքում կտրուան մեծ չողենալերը: Նրանք Մոսկվա կրե-րեն միջնավոր տոնն բեռ՝ հաց, ալ, ձուկ և նավթ, քար և վայր:

Իսկ Մոսկվայից կտանեն ուրիշ բեռներ՝ մեքենաներ, զանա-զան դործվածքներ և դրքեր Միության բոլոր ժողովուրդների համար:

173 եջում գետեղված քարտեղի վրա ցույց տվեք Մոսկվայից դեպի Կասպից, Բալթիկ և Սպիտակ ծովերը տանող ջրային ճա-նապարհը:

Վարժուրյան. Կոնտուրային քարտեղի վրա հշանակեցեք խառն անտառ-ների դռախի:

Նշանակեցեք այն տեղը, վորտեղ պետք ե ջրանցք անցնի:

Գորկի, Կալինին, Խվանովի:

Նանակեցեք այն տեղը, վորտեղ պետք ե ջրանցք անցնի:

Աշխատանք արտադայան ժամանակ: Կալմեցեք ալբոմ զիառն անտառների գոտի» թեմայով:

#### 4. ԱՆՏԱՌԱՖԱՍՏԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱՌՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՍԱՆ-ՆԵՐԻ ԶՈՒԱ

Անտառներից հարավ հաղարավոր կիլոմետր տարածության վրա ձգվում ե սեւահողային տաթիւատանների զոնան,

Նա սկսվում է ԽՍՀՄ-ի արեմտյան սահմանի մոտ, անցնում  
և Միության ամբողջ յելլոպական մասով և մտնում Ասիայի  
խորքերը:

Անտառները միանդամից չեն փոխվում տափաստանի: Սկզբ-  
բում անտառների մեջ յերեան են գալիս անտառազուրկ տեղեր—  
անտառները փոխվում են անտառատափաստանների: Դեպի հա-  
րավ անտառազուրկ տարածությունները հետզհետեւ շատանում  
են, իսկ անտառները՝ քչանում: Վերջապես, անտառները բոլո-  
րովին անհետանում են և տեղի տալիս միավաղաղ տափաստան-  
ների:

ԽՍՀՄ-ի յելլոպական մասում սեահողային տափաստաննե-  
րը հասնում են մինչև Սև և Ազովի ծովերը:

### ԱՆՏԱՐԵՐԻ ԳՈՅՈՒՅՑ ԴԵՊԻ ՍԵՎԱՀՈՂ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԸ

Քարտեղի վրա դուք անտառատափաստանի զոտին:

Այս նկարագրությունը կարդալիս հետեւցեք «ընական զոհաներ» քար-  
տեղն:

Մենք Մոսկվայից Ռոստով ենք զնում:

Մոսկվան իր գործարանային ծխնելույզների անտառով ու  
հաղարավոր քարակոփ շնչելով մեր հետեւ և մնացել:

Վագոնի պատուհանի առաջով սլանում են անտառներ, դաշ-  
տեր, մարդագետիններ:

Տեղ-տեղ անտառը բոլորովին մոտենում է յերկաթուղուն:


Անցնում են մուգ կանաչագույն յեղենիները, սպիտակաբուն  
կեչիները, կարմրաբուն սոճիները, կաղամախիները, իսկ յեղե-  
րին՝ բազմապիսի թփուտներ ու ծաղիկներ:

Մի ժամանակ այստեղ ընդարձակ անտառներ են յեղել:  
Բայց հօմա այդ անտառները խիստ կտրամիել են:

Վորքան ավելի հարավ են զնում, այնքան նվազում են ան-  
տառները:

Անցնում ենք Ռիա գետը: Այստեղ ըլջակայքն ավելի բաց է:  
Վորոնեժի տակ անտառները բոլորովին չքանում են:

Շուրջդ, վորքան աչքդ կարթի անծայրածիր բաց տարա-



Նկ. 35. Վոլգա գետը

ծություններ են: Տեղ-տեղ միայն փոքրիկ անտառներ կան կուչ  
յեկած ձորերում ու զետերի մոտ:

Ամեն կողմ փուլած և ցորենի անծայր ու անսահման արտե-  
րի ալեհուզ ծովը:

Մենք զնում ենք Մոսկվայից Ռոստով: Մոսկվան իր գործա-  
րանային ծխնելույզների անտառով և հաղարավոր քարի շնչե-  
րով հետ մնաց:

Տեղ-տեղ յերեսում են արեածաղկի վառ վոսկեղույն բծերը,  
հասնող ձմերուկներով բոստաններ:

Իսկ նրանց չուրջը դարձյալ նույն հարթ, տեղ-տեղ թեթե-  
գակի բլրոտ արտերի տարածությունները:

Մինչև Ռոստով մեր զնացքն անցնում եր հացահատիկների  
ծովի միջով: Յերեսում և գործարան, հացի ելեվատոր, դյուշ...  
և զարձյալ ամեն ինչ թաղվում է անծայր արտերի մեջ:



Նկ. 36. Անտառատափաստան

Սևահողային տափաստանները ներկայումս համարյա ամբողջապես հերկված են և վերածված արտերի, այդիների և բանջարանցների:

Բոլորովին ուրիշ տեսք ունեյին նրանք 200 տարի առաջ: Այն ժամանակ չկային ցորենի արտեր, չկային բոստաններ ու արեածաղկի դաշտեր, չկային նույնիսկ զյուղեր: Բնդարձակ տարածության վրա ձգվում եին տափաստաններ, վորոնց դեռ մարդու ձեռքը չեր դիպել:

Ներկայումս խոսվան, դեռևս չհերկած տափաստաններ չառ քիչ տեղերում են մնացել:

### ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՑԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԻ

Մակերեսույթի կազմությունը: Նայեցեք Փիզիկական քարտեղին. այն տարածությունը, վոր բոնված և սևահողային տափաստաններով, համարյա ամբողջապես կանաչ գույն ունի:

Սևահողային տափաստանները—ցածր հարթություններ են, այսինքն՝ դաշտավայրեր են:

Մի քանի տեղերում, որինակ, արևմտյան սահմանի մոտ, իսկ արևելքում վոլգա գետի և Աւրալան լեռների մոտ, կանաչ գույնը միություն է դեղինի: Այդ նշանակում ե, վոր տափաստանների մակերեսույթն այսուեղ բարձրանում ե:

Դեղին բիծ գտնվում է նաև Ազովյան ծովից գետի հյուսիս: Սա սևահողային տափաստանների արևմտյան մասի ամենաբարձր տեղն է.—Դոնեցի լեռնապարը, այսուեղ գտնվում և ամբողջ աշխարհին հայտնի Դոնիբարը:

Սևահողային տափաստանի հարթությունն ամեն ուղղությամբ կտրտված է ձորերով և ձորակներով, բայց վա աշխարհագրական քարտեղի վրա չի յերկում, վորովհետև քարտեղը շատ վորքը մասշտաբ ունի:

Գետեր: Տափաստանային հարթության արևմտյան մասով գեղեցիկ դաշտումներով անցնում են մեծ գետեր՝ Դնեստր, Դնեսպը, Դոն, Դոնեց վտակով, Կուբան, Վոլգա, Ուրալ: Տափաստանային հարթությունն այսուեղ թեքված է հարավային ծովերի կողմը և այդ պատճառով հիշած բոլոր գետերը հոսում են գետի այդ ծովի:

Ուրալից գետի արևելք գտնվող տափաստաններում գետեր քիչ կան: Համարյա բոլորն ել թափվում են Որ գետի մեջ:

Քարտեղի վրա գտեք հիշյալ գետերը: Իմացեք, թե այդ գետերից յուրաքանչյուրը վորտեղ և սկսվում և վոր ծովն և թափվում:

Կլիմա: Սևահողային տափաստանները գտնվում են ԽՍՀՄ-ի հարավային մասում: Այդ պատճառով այսուեղ ավելի տաք ե, քան թե Միության շատ տեղերում: Սևահողային տափաստաններում ամառը շատ չող և լինում և յերկար—5 ամիս: Նա ներում և արդեն մայիսին: Ամառն ողը չոր և լինում: անձրեսկավում և արդեն մայիսին: Ամառն ողը չոր և լինում: Յերեքն փչում են չոր և տաք քամիներ: Նրանք դալիս են թուրանի հարթավայրեց:

Կարձատե աշնանը հետևում է ձմեռը: Ձմեռն այսուեղ յերարատե չե և ավելի մեղմ ե, քան թե անտառային գոտում, կարայ սառնամանիքները յերբեմն հասնում են մինչև 20°-ի: Հարայց սառնամանիքները յերբեմն հասնում են մինչև 20°-ի: Հարայց վչում են հյուսիս-արևելյան ցուրտ քամիները ձյունի վորածին վահանակ կազմությունը:

Երբեկ առաջացնելով, վորոնք ձյունով ծածկում են գյուղեր, ճառապարհներ, գնացքները կանգնեցնում են ճանապարհին:

Գարունը չուտ դալիս ե և շուտ ել անցնում: Ձյունոտ ձմեռ-վանից հետո, հողի և ողի մեջ գարնանը շատ խոնավություն է դուրվում: Արեգակը տաքացնում է ողը և հողը: Կարճ ժամանակամիջոցում ամբողջ բնությունն արթնանում է:

Վորքան դեպի արեւելք ենք գնում, սևահողային տափաս-տաններն այնքան ավելի շատ են հեռանում ծովերից: Քամի-ներն ավելի ու ավելի քիչ խոնավություն են բերում: Կլիման ավելի ու ավելի յե չորանում: Ջմեռվա և ամառվա տարբերությունն ավելի զգալի յե գառնում:

### ԽՈՊԱՆ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՈՒՍԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՀՆ

Գարունը տարրվա ամենալավ յեղանակին ե տափաստանում: Ջմեռային ցուրտ բուքերից ու փոթորիկներից հետո մարտին սկսվում ե յեղանակը տաքանալ: Ձյունն արագությամբ հալվում է, և խոնավությամբ հազեցած հողը ծածկվում է կանաչող խո-տերի խայտարկեած գորդով: Ամենից առաջ ծաղկում են ձեծա-դիկը, կակաչը: Նրանք անցյալ տարի իրենց սոխարմատների և վերաբանների մեջ հավաքել են սննդարար նյութերի պաշար: Հետո յերեսում են զանազան խոտեր:


Փափուկ, խոտե գորդի մեջ խժվժում) են բգեղներ, ծղրիդ-ներ: Նրանք ստիպված չեն մնունդ վորոնել: Այդ մնունդն առա-տորեն գտնվում ե նրանց շուրջը—դա տափաստանի բույսերն են:

Հաճախ պատահում են գիտնասկյուններ, արջամկներ և ու-րիշ կրծողներ: Սրանք նույնպես բույսերով են կերակրվում, հե-տեսպես և նրանց համար տուատ մնունդն արդեն պատրաստ է:

Հարավից այստեղ են դալիս հաղարավոր տեսակ—տեսակ թուչուններ: Ամբողջ որը գարնանային ողը լցված է թուչունների աղմուկով: Յեսլ թուչունների այդ ամբողջ բաղմությունն ապրում է տափաստանի միջանների և բույսերի հաշվին:

Բայց ահա դալիս ե ամառը: Արևն անխնա այրում է, չողն սկսվում է: Հողը չորանում է: Գարնանային բույսերը ծաղկա-

թափի են լինում և թառամում: Նրանք արդեն կարողացան իրենց վերաբմատներում և սոխարմատներում սննդի առատ պաշար հալաքել հաջորդ տարվա համար: Նրանց այժմ փոխարինում են այնպիսի բույսեր, վորոնք կարողանում են տանել չոգը, չոր յե-ղանակը և խոնավության սակալությունը հողում:



Նկ. 37. Տափաստանում կոմբայններով հալաբում են հացահատիկը

Տափաստանն ամառվա պես ծածկված է հրաշալի գորդով, բայց այժմ արդեն ուրիշ գորդ է, վորն այնպես վառ չե, ինչ-ոք դարնան գորդը: Տափաստանից չվում են գարնանն այստեղ պես դարնան գորդը: Տափաստանում մնում են մեծ արոսները, յեկած թուչունները: Տափաստանում մեծ արոսները, արտոյշները և տափաստանային արծիվները:

Գալիս ե ամառվա յերկրորդ կեսը: Շոգերը սաստկանում են: Ողում մի կաթիլ խոնավություն չկա: Տափաստանն անձանաչելի

յեղառնում: Չորանում, վոչչանում են այն բոլոր բույսերը, վորոնք հրաշալի ծաղկե գորգով ծածկում ենին տափաստանը:

Թառամեցին նրանց ծաղիկները, սերմերը հասունացան և նրանք ալարտեցին իրենց կյանքի շրջանը:

Մնացին միայն շոգին ու յերաշտին լավ դիմացող բույսերը — վետրախոտը, բարձվենյակը և զանազան մոլախոտեր:



Նկ. 38. Փետրախոտ




Նկ. 39. Բարձվենյակ

Այժմ տափաստանը մուգ-դեղնավուն գույն ունի:

Սա տափաստանի բուսականության վերջին հերթափոխությունն է: Թվում է, թե տափաստանը մեռած է: Բայց ցերեկվա լուսւթյունը խարսուիկ է:

Մինչեւ արևածաղը տափաստանում մեծ կենդանություն և տիրում: Մերթ այստեղ, մերթ այնտեղ վեր են թռչում կաքաղների յերամները: Խոտերի միջից լսվում է միջատների անվարջ յերաժշտությունը: Ամեն քայլափոխում սուլում են գետնա-

ոկյուռները: Տափաստանի վրայով ճախրում ե տափաստանային արծիվը, վորոնելով իր վորուը:



Նկ. 40. Մեծ արու


Բայց ահա շոգը թուլանում է: Ակսում են փշել ցուրտ-քամբներ: Գալիս ե աշունը—սերմերի ցրելու ժամանակը: Քամու ուղղությամբ գլորվում ե և իր սերմերը ցրում յերնջնակը: Լոռում են թռչուններն ու միջատները, որպաստում են ձմեռային քուն մտնել նաև մի քանի կրծողներ:

Հողը: Հաղարավոր կիլոմետր տարածության վրա ձեղող այս ամբողջ տափաստանը ծածկված ե սեահողի հաստ շերտով:


Ամբողջ աշխարհում վոչ մի յերկիր արդավանդ սեահողի այսպիսի ընդարձակ տարածություն չունի:

Դարեր շարունակ տարեց-տարի հողը ծածկվում էր տափաստանային խիտ խոտերով: Ամեն տարի աճում, թառամում ու փտում ելին այդ խոտերը: Այսպես շատ դարերի ընթացքում հողի մեջ հավաքվում ե բուսահող, առաջանում ե սեահողի հաստ շերտ:

Սեահողը սեահողային տափաստանների հիմնական հարսաւությունն է:



Նկ. 41. Գետնասկյուռ



Նկ. 42. Ցմալս

Յեթե չկա կորսասարեր յերաշտ, ապա տափաստանը տալիս ե հրաշալի խոտ, առաստ հացահատիկներ, դանաղան պառուղներ և քանջարեղեն:

Առաջադրություն. Սեահողային տափաստանների կլիման համեմատեցեք տայլայի կլիմայի հետ:

Համեմատեցեք սեահողային տափաստանների բուսականությունը տայլայի բուսականության հետ:

Պատմեցեք, թե ինչպես ե տարվա ընթացքում փոփոխվում բուսականությունը սեահողային տափաստաններում. ինչո՞ւ յէ նա փոխվում:


Սեահողային տափաստանների հողը համեմատեցեք տայլայի հողի հետ ինչո՞ւ սեահողային տափաստանների հողի մեջ չափ բուսահող կա:

### ԱՆՏԱԲԱՏԱՓԱՄԱՏԱՆԻ ՅԵՎ ՍԵՎԱՀՈՂԱՅԻՆ ՏԱՓԱՄԱՏԱՆԵՐԻ ԲՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անտառափաստանի և սեահողային տափաստանների բնակչությունը խիտ է: Այդ բնակչության մի մասը յերկրագնդածությամբ և զբաղվում:

Տափաստանի գյուղերը մեծ են, բայց հաճախ հեռվից չեն յերկում, վորովհետեւ գտնվում են ձորակներում, վորտեղ հեշտ և ջուր ստանալ, գետերի և գետակների ափերին: Կավով ծեփած սղիտակ խրճիթները ձգվում են յերկար շարքերով:

Բնակչության մյուս մասն աշխատում ե զործարաններում և դանաղան հմնարկություններում:



Նկ. 43. Գյուղ տափաստանում:

Այստեղ, ինչպես և խառն անտառների զոնայում չափ կան մեծ քաղաքներ, գործարաններ և Փարբիկաներ: Ամեն ուղղությամբ անցնում են յերկաթուղիներ:

Անտառափաստանի և սեահողային տափաստանների զոնայում գլխավորապես ապրում են ուկրաինացիներ և ռուսներ:

Վատ եյին ապրում բոլոր աշխատավորները ցարական Ռուսաստանում: Բայց ոուսներից ավելի ևս վատ ապրում եյին աշխատավոր ուկրաինացիները: Նրանք իրավունք չունեյին նույնիսկ ազատորեն խոսելու իրենց մայրենի լեզվով: Հիմնարկներում բոլորը պարտավոր եյին ոուսերեն խոսելու: Ուկրաինացիների յերեխանները պարտավոր եյին սովորելու ոուսական գողոցներում: Ուկրաինական լեզվով զրքեր համարյա բոլորովին գոյություն չունեյին:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո աշխատավոր ուկրաինացիների կյանքն արմատապես փոխվեց: Կազմվեց Ռուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Արտգորեն զարգանում ե Ուկրաինայի անտեսությունը և կուլտուրական կյանքը:

Գտեք քարտեզի վրա Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՀՅՈՂԱՅԻՆ  
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

Սևահողային տափաստանները ԽՍՀՄ-ի հացի շտեմարանն են :  
Սևահողային տափաստանները—դա տասնյակ հաղարավոր հեկ-



Նկ. 44. Ցորեն, յեղիպտացորեն, բազուկ, արևածալիկ,  
ծխախոտ, բամբակ

տար վարելահողեր, բոստաններ, այլիներ և բանջարանոցներ են :  
Սևահողային տափաստանների գլխավոր գյուղատնտեսական կուլտուրաներն են՝ ցորենը, յեղիպտացորենը, ճակնդեղը, արևածալիկը, ծխախոտը, բամբակը :

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՎԱՐՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՎԱՀՅՈՂԱՅԻՆ  
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ ՄԻՆՉ ՀՈԿՏԵՍԲԵՐՅԱՆ  
ՃԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը սևահողային տափաստանների ամենալավ և արդավանդ հողերը խոշոր կարվածաերերին և կուլակներին եյին պատկանում :

Միջակ և չքավոր գյուղացիներն ունեյին փոքրիկ հողաբաժիններ, քիչ անասուն, հաճախ զուրկ եյին լինում ամենակարեվոր յերկրագործական դործիքներից, չունեյին արտօտավայրեր և անասուններ ջրելու տեղեր : Այդ պատճառով ել նրանք միշտ սորէական վիճակի մեջ եյին գտնվում կուլակների և կարվածատերերի ձեռքին :

Մանր գյուղացիությունը տնտեսությունը վարում եր նախնական ձևերով և քայլայլում եր :

ԻՆՉՊԵՍ Ե ՎԵՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՄ ՍԵՎԱՀՅՈՂԱՅԻՆ  
ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺՎ

Սևահողային տափաստանների գյուղացիական տնտեսությունները վարում են իրենց տնտեսությունը կոլեկտիվ կերպով :

Հիմնել են և այժմ հիմնվում են հարյուրավոր հացահատիկային և ուրիշ գյուղատնտեսական խորհրդային տնտեսություններ : Խորհրդային տնտեսություններն իսկական գյուղատնտեսական ֆարբիկաներ են : Խորհրդային տնտեսություններում համարյա ամբողջ աշխատանքը մեքենաներով են կատարում :

Հիմնել են հարյուրավոր մեքենա-տրակտորային կույաններ : Մեքենա-տրակտորային կայանները և խորհրդային անտեսություններն իրենց տրակտորներով և որինակելի տնտեսությամբ ողնում են կոլտնտեսականներին՝ կանոնավոր վարել կոլեկտիվ տնտեսությունը :

Շարունակ պայքար ե տարվում յերաշտի և վնասառու կենդանիների դեմ :

ՏԱՓԱՍՏԱՆՈՒՄ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Քարտեղի վրա գտեք Աղեսան :

Մենք գնում ենք տափաստանով, Աղեսայից 100 կիլոմետր հեռու :

Ինչպես ե փոխվել տափաստանը վերջին տարիներում : Ամեն տեղ անց են կացրել նոր ճանապարհներ : Ճանապարհների յերկու կողմը, նրանց ուղղահայաց կերպով և իրարից վորոշ հեռավորության վրա ձգվում են կանաչ, նեղ հողի կտորներ : Դրանք թիերի տնկարաններ են : Նրանք վարելահողերը պաշտպանում են քամուց, պահում են ձյունը և խոնավությունը :

Ճանապարհին մենք շարունակ հանդիպում ենք բեռնակիր ավտոմոբիլների և տրակտորների : Տրակտորներն իրենց հետեւց են տալիս զութաններ և տափաններ, տեղափոխում են բեն-

զինով և նալիթով լի ծանր ցիստերներ, սայլեր, վորոնց վրա նստած են բանվորներ: Ճանապարհի յերկարությամբ անցնում են մի քանի շարք հեռախոսաշարեր:

Ահա հեռվում յերկում ե մի ավան: Դա մեքենա-տրակտորային կայանն է: Շարքերով կանգնած են աղյուսից շինած յերկար շինքեր—դարաժներ: Նրանց մեջ «ձմեռում են» հարյուրավոր տրակտորներ, կալսող մեքենաներ և տրակտորին կցվող դործիքներ: Նրանցից գենը գտնվում են տներ կայանի տրակտորիստների, բանվորների և ծառայողների համար: Մեջտեղը ճաշարանը և ակումբն է: Մենք կայան չենք մտնում: Այժմ այնտեղ դատարկ է. զնում ենք հարեան կոլեկտիվ տնտեսության դաշտերը, վորտեղ ներկայումն աշխատում են կայանի տրակտորները և մեքենաները:

Արդեն հեռվից տեսնում ենք փոշու տմովեր և լսում ենք մեքենաների ազմուկ: Մոտենում ենք աշխատողներին: Դաշտում կալսում են:

Աշխատում են յերեք կալսող մեքենաներ, վորոնք շարժման մեջ են դրվում տրակտորների միջոցով:

Այստեղ են կոլեկտիվ տնտեսության համարյա բոլոր հասակավոր տղամարդկանց ու կանայք: Կալսող մեքենայի շուրջը մարդիկ խումբ-խումբ աշխատում են: Վոմանք բարձրացել են գեղի գլուխը և խուրձերը քանդում են ու դցում մեքենայի մեջ: Մյուսները պարկերը ողահում են մեքենայի տակ, վորտեղից թեթև շաջունով թափվում են մաքսուր ցորենի հատիկները: Ուրիշներն անվերջ շարքով պարկերը տեղափոխում են կալի մյուս ծայրը: Այստեղ հատիկները տեսակավորում են:

Կալսող մեքենաների հսկայական ցնցիչ մասերով անընդհատ թափում և հարդը: Կանայք հարդը հեռացնում են մեքենայից, տղամարդկանց ճարպկորեն ընդունում են այդ հարդը և դարսում քիչ հեռու կանգնած մամուլի վրա: Մի բոպեյից հետո հարդը մամուլից դուրս և նետվում մեծ վոսկերույն հակերի ձևով:

Ժամանակ առ ժամանակ մոտենում են բեռնակիր ալտոմուրիները, բարձում հացահատիկով լցված պարկերը և տեղափոխում ելեվատոր:

Աշխատանքը կատարվում է այնպիս, ինչպես Փարբիկայում:

Յանոթանալով կոլեկտիվ տնտեսության կալսեր աշխատանքների հետ, մենք ուղևորվում են գեղի ելեվատոր:

Մինչև ելեվատոր 5 կիլոմետր է, և այս ամբողջ տարածության վրա իրար հետեւից ձգվում են հացահատիկով բարձած ավտոմորիներ և սայմեր:

### ՊԱՅՏԱՐ ՅԵՐԱՇՏԻ ԴԵՄ

Յարական Ռուսաստանի ուկանողային տափաստաններուն յերաշտից ամեն տարի տասնյակ հազարավոր հեկտար բերք եր փշանում:

Տափաստանների արեելյան մասում բերքը փչանում էր չոր և տաք քամիներից: Այս տեղերում հաճախ փչում ե տաք քամի, ինչպես շիկացած հոնցից: Դրանից ցորենի հատիկները թունում ե չորանում են: Կախվում են ձմերուկների և սեխերի տերեներն ու սերմնաբողբոջները, կարծես յեռացող ջուր են ածել նրանց վրա. թոշնում և ծառերից գետին են ընկնում պատուիները:

Խորհրդային իշխանությունը մեծ պայքար և մզում զյուզատնուսության այդ մեծ չարիքի դեմ: Տարածվում են յերաշտին զիմացող կուլտուրաներ (բույսեր):

Մզվում և պայքար հողի կանոնավոր վարի համար—այնպիսի վարի, վորը պահպանում և խոնավությունը հողի մեջ:

Պայքար և մզվում մոլախոտերի գեմ, վորոնք մեծ քանակությամբ խոնավություն են վերցնում հողից և այսպիսով չօրացնում են հողը:

Կաղմակերպվում են «Ճյունաբշավներ»—լանազան միջոցառումներ ճյունը գաշտում կուտակելու համար:

Ավելի չոր տեղերում կիրառում են վոսկովում—անց են կացնում ջրանցքներ, վորոնցով ջուր են բերում մոտակա գետերից կամ ուրիշ ալվազաններից:

Անջուր են ստորին Զավուժեյի հողերը: Այնուզ չկան գետեր և այլ ջրամբարներ:

Հաճախակի լինում են յերաշտներ, չոր տաք քամիներ, վոր չու փոթորիկներ:

Դկա ջուր—և Հարուստ սեահողերը չնչին բերք են տալիս : Անանձին տարիները հացի բերքը փշանում է և տրտերը մնում էն խանձված, դատարկ :

Արդուլանդ սեահողի միլիոնավոր հեկտարները մնում են անողուտ : Մինչդեռ նրանք կարող եյին տալ միլիոնավոր ցենտներ ցորեն : Միայն թե ջուր լինի :

«Զավոլժյեյի սեահողային տափաստանները պետք ե հաց տան ԽՍՀՄ-ի աշխատավորներին»—այսպես վորոշեցին կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունը : Վոլգայի վրա Կամիչին քաղաքի մոտ պետք ե կառուցվի բառվար և հզոր հիդրոելեկտրական կայան : Պատվարը և երկտրական ջրմուղ կայտները վոլգայի ջուրը կրարձրացնեն և վոլգայի ջուրը ջրանցքներով կհոսի Զավոլժյեյի արտերը :

Սառըին Զավոլժյեյի սեահողերը ջուր կատանան և առատ բերք կատան : Կիոնիվի նաև սոսորին Զավոլժյեյի աշխարհադրական քարտեզը—«գետերն» ու «գետակները» կկտրեն նրան զանազան ուղղությամբ, կերեան «Լճեր» և «լճակներ» :

Քարտեզի վրա զտեք Կամիչին քաղաքը :

## ՈՒՏԱԿԱՐ ՀԱՆԱԾԾՈՆԵՐԸ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեահողային տափաստանները միայն արդավանդ հողերով չեն հարուստ : Նրա ընդերքում թաղնված են կարմոր ողտակար չանածոներ—մանավանդ շատ կա քարածուխ և յերկաթահանք :

Քարածիս հսկայական խավեր են դանվում Դոնեցի լեռներում :


Դտեք Դոնեցի լեռները քարտեզի վրա :

Այս ամբողջ տարածությունը, վորտեղ քարածուխ և գոտնը՝ կոչվում է Դոնեցի քարածխային ավազան (Դոնբաս) :

Դոնեցի քարածխային ավազանը — համամիութենական չնոց է :

Դոնբասից գեղի արհմուտք, Դնեպրի մյուս կողմը, Կրիվոյ-

Ռոգ քաղաքի մոտ, ինչպես և Ղրիմի թերակղզու վրա, Կերչ քաղաքի մոտ գտնվում են յերկաթահանքներ : Ղրիմի թերակղզու վրա ստացվում է նաև աղ :



Նկ. 45. Մակենի գործարան

Քարտեզի վրա զտեք յերկաթահանքի և աղի նշան տեղերը : Դտեք Կրիվոյ Ռոգը և Կերչը :

Դոնբասը, Կրիվոյ-Ռոգը և Կերչը—խոչո՞ր արդյունաբերական շրջաններն են :

Այստեղ կան տասնյակներով ու հարյուրներով ածխահորեր, յերկաթի հանքահորեր և մետաղագործական գործարաններ :

## ԴՈՆԲԱՍՆ ԱԲՍՉ ՅԵՎ ՀԻՄԱ

Դոնբասը միշտ այնպիսին չի յեղել, ինչպես այժմ է : Հինժամանակ այստեղ տարածվում եյին անմարդաբնակ, ամառն առելից խանձվող տափաստաններ :

Միայն վոչխարի բաղմաթիվ հոտեր եյին արածում այստեղ, խել տեղ-տեղ ել պատահում եյին հացահատիկի արտեր :

Յեկը յերկրի ընդերքում անողուտ ընկած եյին քարածիսի հսկայական պաշարներ :

Բայց ահա անցյալ դարի կեսին սկսեցին յերկաթուղիներ չինել, արդյունաբերությունն սկսեց արագորեն զարգանալ : Հարկատոր եր վասելիք և յերկաթ : Կաղիտալիսաները չուղով իմացան Դոնբասի քարածիսի և հանքային հարստությունների մասին : Սկսեցին Դոնբասում հողեր գնել ածխահորեր ու մետա-

դագործական գերծարաններ չինել: Տափաստանը ծածկվեց ած-  
խահորերով: Տանյակ հաղարներով աղքատացած զյուլացիներ  
յեկան այստեղ և դարձան հանքափորեր և մետաղագործարան-  
ների բանվորներ: Աճեցին գործարանային շենքերը: Զանագան  
տեղերում վառվեցին հնոցներ: Զանագան ուղղությամբ ձգվեցին  
յերկաթուղիներ: Նրանց վրայով սկսեցին շարժվել հանքով և ա-  
ծուխով բարձած գնացքներ:

Խղճուկ խրճիթները շրջապատեցին հանքահորերն ու գործա-  
րանները: Նրանց մեջ աղբում եյին բանվորները:

Արական 13 ժամ նրանք աշխատում եյին խոնալ հորերում:  
Ամբողջ աշխատանքը կատարում եյին ձեռքով, առանց մա-  
քենաների:

Իրենց ծանք աշխատանքի համար հանքահորերն ստանում  
եյին կողեկներ, իսկ կապիտալիստ տերերը նրանց աշխատա-  
քով հարստանում եյին:

Այժմ Հին Դոնքասը չի կարելի ճանաչել:

Նրա նախկին կապիտալիստ-ակրերից հետք տնկում չի մնա-  
ցել:

Դոնքասի բնական հարստությունները, հանքահորերն ու  
գործարանները դարձել են Խորհրդային Սոցիալիստական Հան-  
րապետության սեփականությունը:

Շինվել են տասնյակներով նոր ածխահորեր, վերակառուց-  
վել, ընդարձակվել և կառուցվել են մետաղագործական նոր գոր-  
ծարաններ:

Բոլորովին նոր հիմքերի վրա յե զրկում աշխատանքը հան-  
քահորերում:



Նկ. 46. Աշխատանքն ածխահանքում ցարիզմի ժամանակ

Հանքահորերի մեջ իջնցվել են մեծ քանակությամբ հատող  
մեքենաներ: Այժմ համարյա ամբողջ աշխատանքը մեքենաների  
միջոցով և կատարվում: Հանքափորերն սկսել են աշխատել վոչ  
թե ցրված, ջոկ-ջոկ, այլ կաղմակերպված, բրիդաղներով:


Փոխվել և և Դոնքասի բանվորների կյանքը:

Նրանց համար կառուցվել են լուսավոր, առողջ աներ: Ամեն  
աել ճաշարաններ, Փարբիկա-խոհանոցներ, մանկապարտեղներ,  
մոռուրներ: Ծները շրջապատված են ծառերով և այդիներով: Անց  
են կացվում ջրմուղներ, կոյուղի, շինվում են բաղանիքներ:

### ԴՆԵՊՐԻ ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԱՅԱՆԻ (ԴՆԵՊՐԱԳԵՂԵԿՈՒ)

Քարտեղի վրա ցույց տվեք Դնեպրոդենը:

Հավայական քանակությամբ եներդիա յե պետք Դոնքասի  
և Կրիվոսիյելի հանքահորերում և գործարաններում հաղարա-  
վոր մեքենաներ շարժելու համար: Ավելի ևս մեծ եներդիա պետք  
կլինի այն ժամանակ, յերբ զործի մեջ կղրվեն նոր զործարան-  
ներ և հանքահորեր, վորոնք ներկայումս կառուցվում են և վա-  
րուշված ե կառուցել: Այդքան եներդիան վո՞րտեղից պետք ե  
վերցնել:



Նկ. 47. Աշխատանքն ածխահանքում այժմ

Պարզիեց, վոր չառ մոտ, հենց բնության մեջ բոլորովին ձրի եներգիայի ահաղին պաշարներ են դանալում: Դա Դնեպրի հոսող ջրերի եներգիան է: Այսուղ գուսւմ-գոչումով, անհիշելի ժամանակներից քարերի միջով հոսում է Դնեպրը:


Մեծ աշխատանք կարող եյին կատարել նրա ջրերը, յեթե հարավոր միներ այդ ջրերը մեծ բարձրությունից թափել մի տեղ: Կառավարության հանձնարարությամբ ինժեներները մի քանի արի զբաղված եյին այն հարցով, թե ինչպես կարելի յև ողտագուծել Դնեպրի ջրերը, և վերջը յեկան այն յեղբակացության, վոր պետք ե Դնեպրի վրա կառուցել բարձր պատվար և հիգրո-էլեկտրակայան:

Հինգ տարի հազարավոր բանվորներ և ինժեներներ համառ կույլ եյին մղում Դնեպրի դեմ:

Մեծ դժվարություններ հաղթահարվեցին պատվարը շինելիս: Ստիլված եյին մաս-մաս գետի առաջն առնել փայտե պատճեշ-ներով, նրանց միջի ջուրը դուրս քաշել և աշխատել այսպիսի պատճենների մեջ, շարունակ յերկուող կրելով, վոր ջրի հեղեղ-ները ներս կիսումքեն և կվոչնչացնեն թե՛ ամրող աշխատանքը և թե՛ աշխատողներին:

Դնեպրի առաջն առան մեծ պատվարով և այդ պատվարի մոտ կառուցեցին հիգրո-էլեկտրական կայան:

Դնեպրը դեմ առավ պատվարին և անցավ յերկաթե լայն խողովակների մեջ, վորտեղ դրված եյին ելեկտրական կայանի տուրբինները:



Զուրին ահուելի ուժով ներս խուժեց յերկաթե խողովակների մեջ, զարկեց առուրբինի թեւերին և պատեց նրանց. ելեկտրական մեքենաներն ակսեցին աշխատել և ելեկտրական հոսանքը ելեկտրակայանից հաղորդվէ չների միջով չնաց դեպի ամեն կողմ:

Դնեպրովեսի ելեկտրական հոսանքը կաշխատի 18 միլիոն հասակավոր մարդու վոխարին: Դնեպրը չի սահմանափակվի միայն նրանով, վոր չարժման մեջ կղնի Դոնբասի և Կրիվորուժի հանքահորերի և գործարանների մեջնաները: Դնեպրի մոտ աճում են նոր գործարաններ՝ թուշաձուլական, պողպատաձուլական, ալյումինի, մեքենաշինարարական, քիմիական: Նրանք նույնական Դնեպրովեսի միջոցով են աշխատելու:

Ջրի տակ թագնվեցին Դնեպրի ահավոր քարակույտերը: Դնեպրն իր ամրող յերկարությամբ նավարկելի դարձավ:

Դնեպրից կփորեն ջրանցքներ դեպի Դնեպրի ափերի անջուր և արևակեղ տափաստանները: Այդ ջրանցքներով բաց կթողնեն ջուր և մեռած տափաստանները կկենդանանան ու կտան բերք:

Կաշխատի Դնեպրովեսը—լրիվ հոսանքը կանցնի խորհրդային և կոլեկտով անտեսությունները և կոլեկտով ու խորհրդային անտեսությունների դաշտերում կաշխատին ելեկտրական դութաններ:

Վարժուրյուններ: Կոնտուրային քարտեզի վրա սևահողային տափաստանների զնան չընալծեք:

Կոնտուրային քարտեզի վրա զրեցեք այն զետերի անունները, վորուժ կտրում են սևահողային տափաստանները:

Քարտեզի վրա նշանակեցնեք Դոնբասը, Կրիվոյ-Ռուդ և Կերչ քաղաքները:

Քարտեզի վրա նշանակեցնեք Դնեպրովեսը, կամիչինի պատվարը:

## 5. ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ՉՈՆԱ

Կասպից ծովից դեպի հյուսիս Վոլգայի ստորին հոսանքը յերկու կողմերով և ապա դեպի արևելք միջի Զինաստանի սահմանը տարածվում և չոր տափաստանների զնան:

«Բնակու զոտիներ» քարտեզի վրա գտնեք չոր տափաստանները:

## ՉՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒՄ

(Ճանապարհորդի նամակից)

Յերկու ամիս մնացի չոր տափաստաններում: Իմ շուրջը, Առբան աչքու կտրում եր, ձգվում եր անսահման, միապատվար

Հարթություն։ Տափաստանը յերկար չմնաց իր դարձնանային գույնողույն զարգարանքի մեջ։ Թառամեցին նրա վառ ծաղիկները, առաջին խել չոգ որերը չորացրին կանաչ խոտերը։ Միայն բարձվենյակն ու մոլախոտերը կարողացան դիմանալ արեկ կիրակ ճառագայթների տակ։ Տափաստանն ստացել եր զեղին-դորչ գույն և ծածկվել եր փոշով։ Ուժեղ քամիներից փոշու աճ-բողջ ոյուներ բարձրանում եյին դեպի վեր և շարժվում այս ու այն կողմ։

Կենդանիները թագնվել են չողից։ Միայն մողեսներն եյին նշմարվում բարձվենյակի ցողունների մեջ։

Յերեմն ամպերը կուտակլում եյին, կայծակը փայլասոտ-կում եր, ամպը զոռում եր, նույնիսկ սկսում եյին թափել ահձ-քերի առաջին խոչոր կաթիլները։ Բայց քամին ցրում եր ամպերը և տափաստանն առաջլա պես մնում եր չոր, փոշու։

Այստեղ-այստեղ յերեսում եյին աղուտների սպիտակ բծեր։ Աղը բարակ կեղեռվ ծածկում եր գետինը և թվում եր, թե ձյուն է յեկել։ Տեղ-անել արեկ տակ փայլիլում եյին լճերը։ Տափաստանն ամայի յեր և անմարդարնակ։ Յերեմն-յերեմն հեռ-վում յերեսում եյին կազակների վրաններ, իսկ նրանց շուրջը ձիերի յերամակներ և վոչխարների հոտեր։ Մեկ-մեկ ել յերեսում եյին հետախուզողների սպիտակ վրաններ և դորչ վիշկաներ։


## ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակերեսույթի կազմությունը։ Նայեցեք քարտեղին, չոր տափաստանի մակերեսույթին ամեն տեղ միատեսակ չե։

Չոր տափաստանների արեմտյան կեսը ցածրադիր հարթություն ե, վորը ցածրանում և դեպի կասպից ծովը։ արեւելյան կեսը՝ բարձրագիր հարթություն ե, վորի վրա բարձրանում են այնքան ել վոչ բարձր լեռներ։

Չոր տափաստանների հարթությունները մի ժամանակ ծովի հաստակ եյին։ այդ մասին վկայում են բազմաթիվ աղի լճերը, աղուտները, գետնի մեջ սպատահող խեցիները։

Կիմա։ Չոր տափաստաններում ամառն ավելի տաք և և չօր, քան թե սեահողային տափաստաններում։ Ատլանտյան ովկանասի տաք և խոնավ քամիները համարյա չեն կարողացանում արդի մեջ կամ թափ-վում են փոքրիկ աղի լճերի մեջ։



Նկ. 49. Չոր տափաստանում

Հասնել այստեղ, և այդ պատճառով ամառները համարյա թե անձրև չի դալիս։ Հաճախ միջում են չոր և տաք քամիներ։ Շո-դուց գետինը չորանում և և ճաքճառում։

Չմեռն այստեղ կարծատե և, ինչպես սեահողային տափաս-տաններում, բայց ավելի խիստ է։ Չմեռը հաճախ մինում և ձյունի փոթորիկ։ Չմեռվա վերջը յերեմն դետինը ծածկում և սացե բարակ շերտով։

Գետեր։ Չոր տափաստաններում գետեր չեն կան։ Նրանցից ամենախոչըներն են՝ Վոլգայի սոսրին հոսանքը, Ռուբալը և Եմ-քան։ Ամառը գետերը սաստիկ բարակում են։ Ամավա վերջը, նույնիսկ այնպիսի մեծ գետում, ինչպիսին Ռեքան և, նավար-կությունը բավական դժվարանում է, իսկ մանր գետերը բոլո-րովին ցամաքում են։ Չոր տափաստանների գետերի մեծ մասը ծով չի հասնում, նրանք կորչում են ավազների մեջ կամ թափ-վում են փոքրիկ աղի լճերի մեջ։

Քարտեղի վրա զտեք հիշած գետերը։



Նկ. 50. Բարձվենյակ



Նկ. 51. Աղաբույս

Վաղ գարնանը, հենց վոր ձյունը հալվում և հողը ծծում է խոնավություն, արագորեն աճում են սոխարմատ և վերամատ ունեցող բույսեր՝ կարմիր ու գեղին կակաչները, ձնադղիկները և ուրիշները: Կարճ ժամանակում չոր տափաստանները ծածկվում են նաև կանաչ խոտերով:

Բայց շուտով անցնում են գալուսը և գալստ չոր ու տաք ամառը: Կակաչները թառամում են, խոտերը չորանում: Նրանց փոխարինում են չորասեր բույսեր՝ ալեսոր հոտավետ բարձվենյակները: Նրանք ծածկված են մաղմղուկներով և այդ պատճառով քիչ խոնավություն են գոլորշացնում: Բազմանում են նաև

թուսականություն: Չոր տափաստանների բուսականությունը, ինչպես սևահողային տափաստաններում, գարնանը, ամռանը և աշնանը վախվում է:

Բայց այստեղ զլիսավորաբես արյնպիսի բույսեր են աճում, վորոնք յերաշտից չեն վախենում:


ուղանքում վառչությունը խորը և զանազան մոլախոտեր, վորոնք նույնպես են վախենում յերաշտից:

Չոր տափաստանների բույսերն ունեն յերկար արմատներ և վորոնք խորանում են զետնի մեջ և այնտեղից ծծում խոնավություն:

Նրանք գտնվում են իրարից հեռու: Նրանց արանքում յերես վում և խանձված, շողից ճաքճքված զետնիը:

Այստեղ, վորաեղ հողի մեջ շատ աղ կա, պատահում են առանձին բույսեր—աղաբույսեր:

Հողեր: Յերկարատես, շատ չող և չոր ամառվա և նոսր և սականության չորհիվ, հողի մեջ չի կարող այնքան շատ բուսահող գոյանալ, ինչպես սևահողային տափաստաններում: Չոր տափաստաններում հողերը մեծ մասամբ լինում են դորչ և փոքր քանակությամբ բուսահող են պարունակում: Պատահում են նաև աղուտային հողեր: Մրանց մեջ մեծ քանակությամբ ծծված առ զեր են լինում:



Նկ. 52. Սայզակ

Կենդանական աշխարհ: Չոր տափաստաններում խոշոր կենդանիներ քիչ կան: Պատահում են արագավաղ սայդակներ: Զուր և սնունդ վորոնելիս նրանք մեծ տարածություններ են անցնում: Միայն արագ վագքն և փրկում նրանց գալերից:

Չոր տափաստաններում պատահում են և այնպիսի կենդանիներ, վորոնք աղբում են հողի տակ:

Այսաեղ չատ կան մողեսներ, ոճեր, իսկ միջատներից ծղրիդներ, մորեխներ:

Չոր տափաստանների կենդանիների մեծ ժաման ունի խանձված տափաստանի գույնը և այդ պատճառով նրանք տափաստանի վրա հաղիվ են նկատվում:

Առաջադրություն: Չոր տափաստանների կլիման համեմատեցեք սեահողային տափաստանների կլիմայի հետ:

Պատճեցեք ինչպես և փոփովում չոր տափաստանների բուսականությունը զարնանից մինչև աշուն:

Չոր տափաստանների հոգերը համեմատեցեք սեահողային տափաստանների հողերի հետ: Ինչո՞ւ չոր տափաստաններում քիչ բուսահող կա:

Պատճեցեք, ի՞նչ առանձնահատկություններ ունեն չոր տափաստանների բուսերն ու կենդանիները:

## ԶՈՐ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Լայնարձակ չոր տափաստաններում հին ժամանակներից սկսած տորում են զագախներ և զալմուխներ: Նրանք զրադշում են զիբավորապես անասնապահությամբ—պահում են զոշխարների, ձիերի և ուղտերի մեծ հոսեր: Չոր տափաստանների բուսականությունն աղքատ և, բայց նա կարող և կերակրել այնպիսի առկավապես կենդանիների մեծ հոսեր, ինչպիսին են վուշարը և ուղտը:

Յեվ քոչում են ամառը զաղախներն ու զալմուխները մի արտօտողից մի ուրիշը: Էնտրում են վորեհ հարմար տեղ անառուններն արտօտացնելու համար, կանգնեցնում են թաղիքե վրաները և ամառային առւլը (բնակավայրը) պատրաստ ե:

Զմեռում են մշտական բնակարաններում: Այդ բնակարանները նրանք չինում են կալից, վորէ հետ գոմազը են խառնում:

## ԴԱՎԱԿԱՆՆԵՐԻ ԿՅԱԿՆՔԻՑ

Քոչը: Անառունները կերան և վոտնատակ արին առւլի շուրջն յեղած խոռը: Պետք ե ուրիշ տեղ քոչել:

Առավոտից առւլում կենդանություն ե: Կանայք քանդում են

վրանը, հավաքում են զորդերը, անկողինը և ամանները: Տղամարդիկները բարձում են սայլը, ուղտերը:

Ամեն ինչ պատրաստ ե: Ճանապարհ են ընկնում:

Յեղան սայլերին նստած գնում են կանայք ու յերեխանները:

Նրանց հետեւ վեհ քայլվածքով գնում են ուղտերը: Նրանց սապաններին բարձած են վրանների մտուրը: Աւղտերի հետեւ վեհ գնում են ձիերը և կովերը: Իսկ ամենից վերջը վոչխարների և այծերի հոսերը: Մայում են վոչխարները, զուռում են ուղտերը, բառաչում են կովերը, խրինջում են ձիերը: Լոգում են յերեխանների զիլ ձայնները:

Ամբողջ քարավանի առջելից ձիուն նստած գնում ե արայը: Մնացած աղամարդիկներին նույնական ձիերին նստած փակում են յերթը:

Բայց ահա արեւ թեքլում և զեպի արեմուտք: Ամպերը դասնում են վոսկեզույն-վարդագույն: Շուտով կմթնի: Արայը տալիս և աղջանչան, և քարավանը կանգ և առնում զիշերելու:

Առավոտը, արեածագին քարավանը կրկին ճանապարհ է ընկնում, իսկ իրեկնաղեմին կրկին կանգ և առնում հանդստանալու համար:

Այսպես չորս որ շարժվում և քարավանը զեպի այն կողմը, վարտեղ խոտն ամելի հյութալի յե, վարտեղ կա անուշահամ շուր և վարտեղ անսուններին ամելի լավ կարելի յե կերակրել:

Վերջապես, հինգերորդ որը հեռվում փայլվում և լիճը: Զրի համը տեսան—լավ և, համեղ: Յեվ շրջակայքի խոտն ել խիտ և, կանաչ: Վորոշում են այստեղ կանգ առնել:

Կանգնեցնում են վրանները և առվլը պատրաստ ե:

Յեվ ահա առւլի շուրջն ամեն ուղղությամբ ցրվում են ձիերը, կովերը, այծերն ու վոչխարները: Տափաստանը նրանցից դասնում և խայտարզեա:

Մի յերկու տասնյակ մեծ, կատաղի գամփուեր պահպանում են հոսը:

Վրանների առաջ վառվում են խարույկները և նրանց վրա ինչ-փոք րան և յեփում:

Առվլց մարդու յերեսին խփում և ծուխը կումիսի հոսը:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱԳՐՈՒՄ ԶՅՈ ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐԻ ԲՆԱԿԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չոր տափաստանների հսկայական տարածությունները կարող են կերակրել հարյուրավոր միլիոն անասուններ :

Բայց յեզանակն այստեղ հաճախ անբարենպաստ է : Յերաշտից խոտը չորանում է : Մարկարածյուն ձմեռներին լինում է սասուկ : Գետինը ծածկվում է ասոցի հաստ շերտով, վորը չեն կարող կոռարտել նույնիսկ ձիու մերակները : Այն ժամանակ սկսվում է «ջուտը», սննդի պակասությունից անասունների մասսայական կոռորվելը : Բացի այդ, հաճախ անասունները հիվանդանում են խնախտով, սիրիքախտով և ուրիշ հիվանդություններով :

Խավար, հետամնաց քոչվորներն ամբողջապես կախված եյին բնությունից : Նրանք վոչ մի քիջոց չեյին գործադրում անառունների մասսայական կոռորածի առաջն առնելու համար—այն սոսկալի աղետի, վոր ընկնում եր նրանց գլխին :

Անասունները հիվանդանալու ժամանակ նրանք դիմում են կախարդին, վորի բժիշկությունն ավելի ևս տարածում եր հիվանդությունը և անասունների կոռորածը :

Ցարական կառավարությունը բոլորովին հոգ չեր տանում առավաստանի քոչվորների տնտեսության մասին :

Չոր տափաստանում զժվար ե ջուր ճարել : Պետք ե խոր ջրհորներ փորել : Տափաստանի ամենալավ ջրհորները պատկանում եյին բայերին (Հարուստներին) :

Բայերն ոգտվում եյին չքավորների տղիտությունից : Կերի պակասությունը, անասունների կոռորածը նրանց նոր հարստություններ եյին բերում—ավելի շատ չքավորներ եյին դառնում նրանց բատրակները :

Այս տափաստանների բնակչությանը քայլքայում եր և ինքը՝ ցարական կառավարությունը : Նա խլում եր տափաստանային քոչվորներից արոտատեղերն ու գալ ելահողերը և տալիս ոռու գաղթականներին :

Ի՞նչ ե ԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅՅԻՆ ԻՇԻԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԿԱՆ-  
ՏԱՆԱՅՅԻՆ ՔՈՉՎՈՐՆԵՐԻ ԿԵԱՆՔԸ ԲԱՐՎՈՐԵԼՈՒ ՅԵՎ ՏԱՓԱՍ-  
ՏԱՆԱՅՅԻՆ ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ,

Խորհրդային իշխանությունը վճռականորեն վերակառու-  
ցում է քոչվորների անտեսությունը և կյանքը : Նա ամենից ա-  
ռաջ պայքար է տանում անասունների քանակը մեծացնելու հա-  
մար, վորովհետև դրանից է կախված քոչվորի ամրող բարեկե-  
ցությունը :

Խորհրդային իշխանությունն այլատում է քոչվորներին  
նստակյաց դարձնել : Նա ամեն կերպ ոզնություն և հասցնում  
քոչվորներին :

Կաղմվում են ընկերություններ խոտը միասին հարելու, խոտ  
ցանելու համար, կառուցվում են ընդհանուր զոմեր, շինում են  
ջրհորներ, ջրամբարներ : Հիմնում են անասնաբուժական կե-  
տեր :

Քոչվորների կուլտուրական մակարդակը բարձրացնելու հա-  
մար հիմնում են «կարմիր վրաններ», դպրոցներ : Կառուցում են  
հիվանդանոցներ :

Չոր տափաստանները յերկրագործության համար անհարմար  
են, բայց զրա փոխարեն նրանք կարող են կերակրել հարյուրա-  
գոր միլիոն գլուխ անասուն :

Տափաստանային անասնապահական տնտեսությունը լավ  
վարելու դեպքում հսկայական քանակությամբ միս կարող են  
տալ տափաստանները :

Ցեղ ահա չոր տափաստաններում ծալվալվում է խորհրդային  
տնտեսությունը, կառուցվում են անասնաբուժական խորհրդա-  
յին անտեսություններ :

Այժմ արդեն բազմաթիվ անասնաբուժական խորհրդային  
տնտեսություններ կան այնտեղ :


ԱԴՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Մեծ քանակությամբ հանածու հարստություն մինչև վերջին  
ժամանակներս անոգուստ ընկած եր չոր տափաստանների ընդեր-  
քում :

Չոր տափաստանները կենդանություն առան այնտեղ, վորակեղ սոցիալիստական հանրապետություն կառուցողների համատաշխատանքի շնորհիվ բացիկեցին տափաստանների ընդերքը:

Կարազանդայի համբարից անընդհատ հեղեղով յերկրի մակերեսութիւն վրա թափաւմ ե սև, պսպղում ածութիւն: Կասպից ծովի յեղերքին, նավթահորերից գիշեր-ցերեկ խողովակների միջակ հոսում է Եմբայի հավը: Բալխաշ լճի ափին կառուցվում ե պղնձածուլական գործարան, վոր իր մեծությամբ առաջինն է մինելու ամբողջ աշխարհում:

Քարտեզի վրա գտեք Կարազանդան, Եմբայի նավթահանքերը և Բալխաչ լճի ափի պղնձահանքերի տեղը:



Նկ. 53. Չոր տափաստանում գործարան և կառուցվում

Բայց զա միայն սկիզբն է: Պղնձի, ցինկի, կապարի հանգերի և ուրիշ արժեքավոր հանածոների ահազին պաշարներ են պանդած չոր տափաստանների ընդերքում:


Երանք շատառվ դառնալու յին զունավոր մետաղների արտադրության դիմավոր բազան:

Այսպիս աստիճանաբար փոխվում են չոր տափաստանները, վրա հետ փոխվում ե և զաղախների կյանքը: Քոչվոր զաղախները զանում են կառուցողներ, հանքափորեր, նավթահանքա-

յին բանվորներ, հեռանում են քոչից և սկսում ազլիւ արդյունաբերական բանվորների կուլտուրական կյանքով:

Նավթ ծովի հատակից կասպից ծովի ձկնորսները վազուց նկատել եյին, վոր Եմբայի գետաբերանից վոչ հեռու ջուրը շողշողում է ծխածանի բոլոր գույշներով:

Սկսեցին հետազոտել ծովի ափերն ու հատակը: Պարզվեց, վոր բավական խոր, ծովի հատակի տակ գտնվում են նավթահարուստ հողաշերտեր:



Նկ. 54.

Ճեղ Խորհրդային իշխանությունը վորոչից ծովից խլել արդենալիթը:

Ծովի մեջ կանգնեցրին մի հասա քարե պատ-դամբա: Այդ պատով անջատեցին ծովի մի մասը: Ամբողջ յերկու տարի գիշեր-ցերեկ աշխատում եյին ջրհան մեքենաները: Վերջապես հատակը բացվեց:

Ցամաքացրած ծովի հատակի վրա կառուցեցին տասնյակներով նավթային վիշեաներ և սկսեցին նավթ հանել: Շուտում այս-

տեղ նավթի ուժեղ շատրվան խփեց : Շատրվանը փակեցին խռ-  
զալսելներով և նավթն սկսեց հոսել ուղղակի նավթային բակի  
մեջ :

Բանվորները և ինժեներները մեծ քանակությամբ նավթ խլե-  
ցին բնությունից սոցիալիստական տնտեսության համար :

Նավթի վիճակների անտառն այժմ կանգնած և այնտեղ, վոր-  
տեղ մի քանի տարի տուած ծովի հատակ եր :

### ԶԿՆՈՐՄԱՄԱՆՆԵՐԸ

Չոր տափաստանների գոնայի արեմտյան մասը գտնվում է  
Կառավից ծովի ափերին, Վոլգա գետի ստորին հոսանքի յերկա-  
րությամբ և Եմրա գետի ավազանում :

Այստեղ ձկան մեծ հարստություններ կան :

(Քարտեզի վրա ցույց տվեք գոնայի արդ մասը) :

Վոլգայի գետաբերանում դանվում է Աստրախան քաղաքը :

Դա ձկնորսության ամենակարենր կենարոնն է : Ծովափի  
մոտ կանգնած են հարյուրավոր ձկնորսական առագաստավոր  
նավեր : Ձկնորսական սեղոնում զիշեր-ցերեկ նավերից դատար-  
կում են ձուկը :

Մինչ հեղափոխությունն Աստրախանում ձկնորանների աշխա-  
տանքով հարստանում ելին խոչըր վաճառականները :


Նոր Աստրախանում տասնյակ հազարներով ձկնորս-կուտըն-  
տեսականներ կան : Երանցից շատերը նախկին քոչվոր-դաւմուխ-  
ներն են :

Ներկայումս այստեղ կառուցված են պահածոների մեծ գոր-  
ծարաններ, սաացարաններ, գործարաններ, վորտեղ շինվում են  
ձկնորսական նավեր :

Քարտեզի վրա դտեք Աստրախան քաղաքը :

### ՀԱՅՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ԶՈՐ ՏՍԻՒՄՆԵՐՈՒՄ

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը միայն մեկ յերկա-  
թուղի յեր կտրում չոր տափաստանները :



Կ. 55. Թուրքիստան-Սիբիր յերկարուղու քարտեզը

Նա Որենիուրդ քաղաքից զնում եր դեպի հարավ-արևելք  
Տաշքենդ քաղաքի ուղղությամբ:

Քարտեզի վրա ցույց տվեք այդ յերկաթուղին:

Չոր տափաստանների ընդարձակ տարածության մեջ մասը  
բոլորովին կարգած եր ԽՍՀՄ-ի կուլտուրական կենտրոններից:

Աւզաը անդախիսության միակ միջոցն եր այդ տափաստաններում:

Վերջին տարիներում խորհրդային իշխանությունը կառուցեց  
մի յերկար յերկաթուղի, վոր կորում և չոր տափաստանների  
արեւլյան ժամանակա-թա Յուրիեսան-Սիբիրական (Թուրքսիր)  
ճանապարհն ե: Այս ճանապարհի շնորհիվ արագորեն զարգանեմ  
և յերկրի անտեսությունը:

Գարժություններ: Կոնսուրային քարտեզի վրա չոր տափաստանների գույնը՝  
առ չուրջը զիծ քաշեցեք:

Նշանակեցեք գլխակոր ողտակոր հանածոների հանման աեղերը:

Նշանակեցեք այն աեղերը, վորտեղ առկում են զարգաները և զարդուիւնը:

Նշանակեցեք Կարագոնդա, Աստրախան քաղաքները: Թուրքեստան-Սիբիր-  
բական յերկաթուղին բնորդեցեք և վրան զրեք անունը:

Աշխատանք արտադասանակ: Կազմեցեք ալլում «Չոր տափաստանների շատրված» թեմայով:

## 6. ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԶՈՒԱ

Կասպից ծովից արևելք, չոր տափաստանների զոնայից Հարավ գտնվում և անապատների զոնան:


Հարավային և հարավ-արևելյան անապատների զոնան չըջադապալած և լեռներով:

«Բնական գոտիներ» քարտեզի վրա զտեք անապատների զոնան:

### ԱՆԱՊԱՏՈՒՄ

(Ճանապարհորդի պատմվածք)

Փերուն ավագի դեղնավուն թլուրները տարածվում են գեղագիտական կողմ: Յերբեմն թվում եր, թե չուրջը տարածվում է  
անձայրածիր ծով քարացած ալիքներով:



Նկ. 56. Անապատում

Տեղ-տեղ ավազաթմբերը ծածկված եյին ինչ-վոր մանր ծառերով և թփերով, վորոնց վրա տերեւ չկար: Նոսր աճում եյին կոչտ և փշոտ խոտեր:

Արեւ ծագելուն պես չոգն սկսվում եր: Կեսորին ավազն այնքան եր տաքանում, վոր բորիկ վոտքերով անհնարին եր քայլել: Նույնիսկ տափաստանի չոգին սովոր ձիերը հրաժարվեցին կերից և թմբել, կանգնել եյին խեղիք, այրազ չոգից ուժապառ լիներով: Ըստ յերեսոյթին միայն ուղարեն եյին, վոր չոգից չեյին տառապում:

Առավոտյան ժամը 10-ին մոտ բարձրանում եր չոր, այլուղ քամի: Նա քշում եր տաք ավազի ամրող ամպեր:

Ավազի վարագույրով ծածկվում եր արեւի յերեսը: Հեռվում վոչինչ չեր յերեսում:

Տաք ավազն անխնա ծեծում եր մեր յերեսներն ու ձեռքերը, լցվում եր աչքերի, ականջների մեջ և կաշվի մեջ քոր առաջացնում: Ատամներիս տակ ավազը կրծում եր:

Յերեկոյան դեմ արեւը, վորպես ծանր շիկացած կունդ թաղ-

Նըմեց հորիզոնի տակ կարմիր լույսով անապատը հեղեղելով:

Քարվանը վեց որ եր, ինչ ձանապարհ եր զնում: Ծանթ ձանապարհ և սննդի պակասությունից նույնիսկ ուղտերը հոգնեցին: Նրանք զնում ելին տիտր, ուժասպառ, հաղիվ փոխելով վոռքերը:

ձանապարհն հանդիպեցինք ջրհորի: Բայց նրա մեջ այնքան քիչ ջուր կար, վոր նույնիսկ խմելու քառականացաւ:

Քարվանին վտանգ եր սպառնում:

Քարվանն ուղեցող թուրքմեններից մեկը ցանկություն հայունեց զնալ առաջ և զնել ձանապարհը: Յերեկոյան վերադարձավ նա և հետը բերեց թարմ յեղեղի մի ճյուղ:

Բոլորն զգացին, վոր շուտով նրանց տանջանքները կվերջանան:

Հետեւալ որը քարվանը հասավ Ամու-Դարյա դետը:

Դա մի լայն, ջրառատ գետ եր: Նրա ափերը չածկված եին ճոխ, կանաչ բուսականությամբ:

### ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԲՆԱՒԹՅՈՒՆՆԵՐ

Մահերեւյրի կազմությունը: Հետեւցեք քարտեզով: Անապատների զոնան գտնվում է Թուրքանի ընդարձակ գաշտավայրում: Մի ժամանակ Թուրքանի դաշտավայրը ներկայացնում էր ծալի հատակ: Դեպի հարավ և հարավ-արևելք նա աստիճանաբար բարձրանում է, և հարավ-արևելյան ծայրամասերում վերջանում բարձր լեռներով: Այստեղ գտնվում է Պամիր լեռնաշխարհը: Պամիրից դեպի հյուսիս-արևելք ձգվում են ԽՍՀՄ-ի ամենաբարձր լեռները՝ Տյան-Շանը:

Կիմա: ԽՍՀՄ-ի հեռավոր խորքերն ե անցել անապատների զոնան: Խոնավ քամիներն այստեղ չեն հասնում:

Անապատների զոնայում ավելի չոր և տաք, քան թե չոր տափաստաններում: Պատահում են և այնպիսի տեղեր, վորտեղ ամառվա ընթացքում մի կաթիլ անձրև չի գալիս: Յերբեմն անձրև գալիս և, բայց շիկացած ավազներին չըփուած, դոլորշիանում է: Յերեկն ստվերի մեջ չոգը հասնում է մինչև 50°: Ալսոր, քարերը, մետաղե սուարկաներն այնքան են տաքանում, վոր այբում են մարգու ձեռքերը:

Յերկինքն այստեղ մեծ մասամբ անամպ ե վճռում: Այդ պատճառով ել առարկաներն ամառային ցերեկները սաստիկ տաքանում են, իսկ գիշերներն արագ սառչում: Անապատում ցերեկը լինում ե չոգ, իսկ գիշերը դով:

Ամառը տեսում է հինգ-լից ամիս: Զմեռն, ընդհակառակը, կարճ և և ցուրտ: Լինում են 20°-ի և նույնիսկ ավելի սաստիկ սառնամանիքներ:

Գետեր: Շրջապատող լեռներից քիչ գետեր չեն թափվում թուրքանի գաշտավայրի մեջ: Բայց նրանց մեծ մասը կորչում է ավազների մեջ կամ ցամաքում և, ինչպես չոր տափաստաններում: Միայն յերկու մեծ գետ են կարողանում կտրել կարակառ և կրզբլ-կռում անապատները և հասնել մինչև Արայան ծովը: Դրանք են Ամու-Դարյա և Սիր-Դարյա գետերը: Յերկուան ել սկզբում են բարձր լեռների սառույցների տակից: Ամու-Դարյան սկզբը ե առնում Պամիրի լեռներում, իսկ Սիր-Դարյան Տյան-Շանի լեռներում:

Քարտեզի վրա գտեք հիշած գետերն ու անապատները:

Ամենաչոր ժամանակ, յերբ չոր տափաստանի գետերը բարակում կամ ցամաքում են, Ամու-Դարյան և Սիր-Դարյան վարարում են: Դա նրանից ե, վոր այդ ժամանակ ամառային արեգակի ճառագայթներից բարձր լեռների սառույցը հալվում է:

Անապատներում պատահում են նաև լճեր, բայց հաճախ առանց ջրի: Նրանց միջի ջուրը գոլորշխացել և փոսերի մեջ մնացել և աղի լացնող սպիտակ շերտը: Հեռվից արդ շերտը նոր յեկած ձյունի յե նմանվում:

Բուսականություն: Ավազու անապատներում ես կան բույսեր. բայց նրանք այստեղ աճում են ավելի նոսր, քան թե չոր տափաստաններում: Նրանք նույնպես կարողանում են գիմանալ շողին և խոնավության բացակայությանը:


Ալաղները շարունակ վտանգ են սպառնում անապատի բույսերին: Բայց նրանցից շատերի սերմերն այնքան թեթև են, վոր քամու ժամանակ նրանք ավազից առաջ են թռչում և ավազները չեն կարող նրանց ծածկել հաստ շերտով: Շատ թփեր բուրբովին աերեւ չունեն. նրանց ճյուղերն սողիզ են և բարակ, այդ պատճ

ճառով արագը կարողանում է նրանց միջով ազատորեն անցնել և թիերի մոտ չի կուտակվում :

Ավագոս անապտուներում օպտահում են նաև ծառեր—սաբառութիւր : Նրանք հասնում են 6—8 մետր բարձրություն և մի քանի տեղերում կտղմում են պուրակներ :



Կ. 57. Սաբառ



Կ. 58.

Մեծ գետերի ափերին բոլորովին ուրիշ բուսականություն եւ Ավագներն այստեղ վտանգ չեն սպառնում, բավականաչափ ել

խոնավություն կա : Ափերի յերկարությամբ ճղվում են յեղեղնի և խիտ, չյութալի սաղարթ ունեցող ծառերի մացառուաներ :

Հողեր : Ավագոս անապահներում հող չկա, տերեագուրկ նոր բուսականությունը բուսահող համարյա չի տալիս : Միայն ցածրադիր տեղերում պատահում են աղուտային հողեր :

Գետահովիտներում, ընդհակառակը, շատ արգավանդ հողեր են պատահում : Նրանք առաջացել են այն տիպմից, վոր զետն ամեն տարի թողնում և վարարման ժամանակ :

Կենդիանական աշխարհ : Առաջին հայացքից անապատում կենդանիներ չկան : Բայց ուշադրությամբ դիտեցեք ավագը : Ահա մի քանի քարեր կենդանություն առան և անապմուկ առաջ են շարժվում : Բայց դրանք իսկապես քարեր չեն, այլ ավագի մեջ թաղված մողեների գլուխներ :

Անապատներում, ինչպես և չոր տափաստաններում մողեներ և ոճեր շատ կան : Վտանդի ժամանակ նրանք թաղվում են ավագի մեջ : Մողեների մեջ պատահում են և այնպիսի հականեր, զորոնց յերկարությունը լինում է մեկ մետրից մինչև յերկու մետր : Անապատներում ապրում են նաև թռչուններ : Խոչոր կենդանիներից/անապատի ծայրամասերում պատահում է անտիւոպներ, զորոնք զգույշ և շատ յերկշոտ կենդանիներ են : Մի փոքրիկ վտանդի գեղաքում նրանք անհետանում են քամու արագությամբ :

Անապատի համարյա բոլոր կենդանիներն ունեն գեղնավուն զույն և այդ պատճառով անապատի ավագների մեջ հաղիք են յերեսում :

Մեծ գետերի սփերին, վորտեղ մացառուաներ կան, պատահում են վարազներ և վագլիք :

Անապատն արժեքավոր ընտանի կենդանու—ուղտի հայրենիքըն ե : Իր լայն, կոշտուկներ ունեցող թաթերի շնորհիվ նա հետառությամբ քայլում է ավագների մեջ, մինչդեռ ձիու վոտքերը լիրվում են :

Ուղուց կարող է կերակրվել չոր, կոչտ և փշոտ խոտերով : Բայց նա կարող է առանց սննդի և ջրի մի քանի որ գիմանալ : Այդ ժամանակամիջոցում նա կարող է մի քանի հարյուր կիլոմետր տեղափոխել և ճանապարհորդին և բեռը :

ԱՐԳԱՎԵԼԱՆԴ ՀՈՎՏՈՒՄ

Մերկ անսովատում յերկար ճանապարհորդելուց հետո մենք աշխատում ենք իրավություն և լայնություն ունեցող հարթ տարածություն։ Երա վրա չարբով կանգնած եյին 26 թուրքմենական վրան։ Քիչ հեռու ջրհորների մոտ ջուր եյին տալիս ուղղի ձագերին և զաներին։

Սա մի թուրքմենական առւլ եր։

Մենք կանգ առանք հանգստանալու և յերկու որ անցկացրինք այսուհեղ։

Ամսու եր, անապատի բնակիչների համար տարվա ամենածարն յեղանակը։ Անտանելի չողը հանգիստ չեր տալիս մեզ վոչ ցերեկը, վոչ եւ գիշերը։ Վրաններում կյանքը համարյա մեռած եր։ Երջակայքի ամբողջ բուսականությունը խանձվել եր և հոմիլիները հոտերի հետ քաշվել եյին հետափոր արտատեղեր, ուրիշ ջրհորների մոտ։


Յերկու որից հետո մեր քարվանը հասալ հետացող հոտին։ Անցնելով ավաղաթմբրի շուրջը, մենք հանկարծ հեռվից նկատեցինք ինչ-վոր շարժում։ Դա վոչխարների հոտն եր։ Գնում եյին վոչխարները, իրենց կճղակներով քանդելով կարակումյան փոշիանում ավաղը։ Երանք հաղարից ավելի եյին։ Աղոտ յերկում եյին նրանց յեղջուրները։ Արեկ տակ փայլում եյին նրանց ու, մախագույն և գարշնադույն կարակուլրան մորթիները։

Հոտի կողքերով և հետեից վազում եյին մեծ պահապան չները։ Իսկ առջերից դնում եր նիշար ծերունի հովիվը սև թուրքմենական փափախը գլխին, յերկար, ծայրը էնո զավաղանը ձեռքին, հրացանն ուսին։

Մանր և պատախանատու թուրքմենական հովի աշխատանքը։ Ամբողջ որը քայլում են նա անապատում արեկի կիզող ճառաղայթների տակ։ Աղքատ և անապատի բուսականությունը, և նա ամեն որ ստիպված է ահազին տարածություն անցնել, վորպեսզի հոտը կերակրի։ Յերեմն փչում ե այբող բուրք ու բորանը, և հոտը ծածկում է ավազով։ Լավ է, յեթե զա յերկար չի տեսում։ Բայց պատահում են և այնպիսի դեպքեր, յերբ բորանից հարյուրավոր վոչխարներ են ստակում։

Թուրքմեններն ամեն տարի միլիոններով թանգարժեք կարակուլյան մորթիներ են պատրաստում։


Քարտեզի վրա կտեք այդ հովիար։



Նկ. 61. Ֆերգանի հովտում

Նու գտնվում ե Տաշկենտ քաղաքից գեղի հարավ-արևելք, Սիր-Դարյա գետի հոսանքի յերկարությամբ։

Վայրը միանգամբ վոխվեց։ Անցնում եյինք պաղատառ խիտ արյուների, կանաչ արտերի մոտով։ Հաճախ պատահում եյինք եշով կամ վոտքով դնացող մարդկանց։



ՆՊ. 62. Քամբակի չանաքը մեքենայով

Սակայն անապատի մոռթիկությունն իրեն գեռևս զգալ եր տալիս: Մերթ աջ, մերթ ձախ կողմում յերեսոմ եյին մերկ տեղեր: Տեղ-տեղ դաշտերը ծածկված եյին ավազներով, վոր քամին բերել եր անապատից:

Բայց չուտով անապատի վերջին հետքերը կորան: Ավտոմոբիլը սլացավ այդիների և արտերի խիստ կանաչի միջով:

Ամեն քայլսփոխում մենք ստիլված եյինք լինում անցնել վոռոգման ջրանցքների վրայով:

Ամենուրեք ցրված եյին ուզբեկների դյուզեր: Ապիտակին եյին տալիս նրանց կավե փոքրիկ տներն իրենց տափակ տանիքներով: Բակերը շրջապատված եյին կավե բարձր պատերով: Տների մոտ կանչչին եյին տալիս պտղատու այդիները, հոտավետ սեխերի բախչաները և խաղողի այդիները: Յերբեմն նկատվում եյին կապույտ առվյուտի, յերբեմն ել բրնձի ցանքսեր: Յեկ-

այս բոլորը թաղված եր բամբակի բնագարձակ դաշտերի մեջ: Ֆերգանի հովտում առատ արե, ջերմություն և լույս կա, Հողն ել լավ վոռոգված և բազմաթիվ ջրանցքների միջոցով: Բամբակն այստեղ մեծ բերք և տալիս:

Ֆերգանի հովիտը բամբակի մշակության ամենագլխավոր վայրերից մեկն ե Խորհրդային Միության մեջ: Ուզբեկական կուկատիվ և խորհրդային տնտեսությունները Խորհրդային հանրապետությանն ամեն տարի միլիոնավոր կիլոգրամ բարձր վրակի բամբակ են տալիս:

ԻՆՉՊԵՍ ԵՐ ԱԳՐՈՒՄ ԱՆԱՊԱՏԱՑԻՆ ԶԱՆԱՅԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԻՆՉ ՀՈԿՏԵՄԲԵՐՑԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական կառավարությունը դենքի ուժով գրավեց անապատների զոնայում գոնվոզ հողերը:

Յեկ անապատային զոնայի ժողովուրդները մոտ 70 տարի ապրեցին ցարական գեներալների իշխանության տակ:

Ցարական չինովնիկներն անապատների ժողովուրդներից խլում եյին լավագույն հողերը, չնչին գներով հավաքում եյին բամբակ և անասուններ, ստիլում եյին մեծամեծ հարկեր վճարել:

Ամեն տեղ կանգնած եյին ոռուսական դորքեր:

Անապատների զոնայի աշխատավորներն ապրում եյին թե՛ ցարական գեներալների, թե՛ սեփական խանների (թագավորների), բայերի (հարուստների) և թե՛ մոլաների (տերտերների) լծի տակ:

Զուրն անապատների զոնայի բնակչության կյանքի համար միշտ մեծ նշանակություն ե ունեցել:

Բայց այդ ջուրը պատկանում եր խաններին և բայերին: Վորքան շատ եր ջուրը, այնքան մեծ եր և իշխանությունը:

Ջրի համար, ինչպես իշխանության համար, խանները չարունակ պատերազմում եյին իրար հետ: Այս պատերազմի ժամանակ վոչնչանում եյին ամբողջ ծաղկած քաղաքներ և ծածկվում անպատի ավաղներով:

Ջրանցքներ չինելու համար քշում բերում եյին տասնյակ հազարներով աշխատավորներ:

Անապատների զոհայի ժողովուրդները մութ և սնահավատ էին : Գյուղատնտեսությունը վարում եյին նախնական ձևերով :

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ԲՈՐԵԼԱՎՎՈՒՄ ԲՆԱԿՉՅԻԹՅԱՆ ԿՑԱՆՔԸ ԽՈՐՀՅՈՒՅՑԻՆ  
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՎ

Անապատային զոհայում շատ արգավանդ հողեր զուր կորչում են ջրի սրակասության սրածառով : Այդ պատճառով ել Խորհրդային իշխանությունն ամենից առաջ ուշադրություն դարձրեց վոռովման վրա :

Սկսեցին նորոգել քայլայված ջրանցքները և պատվարները . զիմացկուն նյութերից՝ ցեմենտից և յերկաթից կառուցեցին բարձաթիվ նոր ջրանցքներ : Սկսեցին զուր մղել վոչ թէ շերեփներ ունեցող հին ձեի անխիների, այլ նոր մեքենաների միջոցով :

Բայերից խլեցին հողերը : Զուրը դադարեց մասնավոր սեփականություն համարվել : Այժմ բոլորն ել առանց վորեն վճարի սպավում են ջրից : Եա հավասարապես բաշխվում և վարելահողերի և արդիների մէջ :

Վոռովման ջրանցքների ցանցն ավելի ու ավելի մեծանում է : Անապատն ավելի ու ավելի յե քաշվում, հեռանում, աղատելով նոր արգավանդ հողեր ցանքերի համար :

Դյուլատնտեսությունը վերակառուցվում է :

Այսող, փորտեղ դյուլացիները ջոկ-ջոկ իրենց նախնական ռորդիքներով փորփրում եյին զետինը, այժմ հաղարավոր տրակտորներ մշակում են կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների բամբակի դաշտերը :

Կոլեկտիվ տնտեսություններ կազմում են նաև քոչլոր վոչ-խարարույժները, ստեղծվում են վոչխարարութական մեծ խորհրդային տնտեսություններ :

Անապատի ընդարձակ հողամասերում ցանում են կերի խոտեր, և քոչվորներն սկսում են նստակյաց կյանք վարել : Անապատային զոհայում առաջին անգամ կառուցվեցին զործարաններ և Փարբիկաներ :

Հոկտեմբերյան հեղափոխությունն անապատային զոհայում առարող ժողովուրդների համար բացեց լայն ճանապարհ դեպի կուլտուրական շխարարությունը :

Անապատների զոհայում կազմվեցին ինքնուրույն աղջային հանրապետություններ — Թուրքմենստան՝ Աշխարադ մայրաքաղաքով և Ուզբեկստան՝ Տաշկենու մայրաքաղաքով :

Քարտեղի վրա զտեք այդ հանրապետությունները և նրանց մայրաքաղաքները:

Հաղարավոր դպրոցներում սովորում են թուրքմենների և ուղեկների յերեխաններ իրենց մայրենի լեզվով : Տասնյակներուղ բարձրագույն դպրոցներ այդ նոր միութենական հանրապետություններին տալիս են սեփական զիտանականներ և ինժեներներ : Կառուցվում են ակումբներ, դրագարաններ, կինո, թատրոններ : Յորական ճնշումից աղատված թուրքմեններն ու ուղեկները մասնակից են դառնում սոցիալիստական կուլտուրային :

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆ  
ԱՆԱՊԱՏՆԵՐԻ ԶՈՆԱՅՈՒՄ

Արագորեն զարգանում և թուրանի դաշտավայրի արդյունաբերությունը : Կառուցվել են բամբակաղտիչ, մետաքսի, մանածագործական Փարբիկաներ, դյուլատնտեսական մեքենաների դործարաններ, և կատարակայաններ :

Կասպից ծովի տիֆին զարգանում և ձկնորսական արդյունաբերությունը : Հենց այսակեղ ել զանված և նավթ :

Մեծ հարստություններ յերևան բերվեցին կասպից ծովի կարարուգագ ծոցի մոտ : Այսակեղ ստացվում են զանապան աղեր :

Կարա-կում անապատի կենտրոնում գտնված են ծծմբի մեծ դրաշարներ և հիմնված ե ծծմբի դործարան :

Անում են քաղաքներ : Յերեկվա քոչվորները դառնում են բանվոր :

Վարժությունների կանուքի քարտեղի վրա նշանակեցիք՝ Արայիան ծովը, Արաւան ծովը թափող գետերը, կարարուգագ ծոցը, կարակում անապատը ինչպես և Տաշկեն, Աշխարադ քաղաքները :

Արտադայան Աշխատանքների կազմեցիք ալլում Անապատների զոհայի թեատրով :

5 — Աշխարհագրության IV. 5.

Բարձրության հետ կլիման փոխվում է : Նույնիսկ ամառը շեռներում զով է : Այստեղ հաճախ անձրևներ գալիս են այն ժամանակ, յերբ ծովափին լինում է չոգ և չոր:

Գետերը: Դրիմի հարավային ծովափին քիչ գետեր կան: Նրանք սկսվում են լեռներում կամ առաջանում են աղբյուրներից: Դարնամը, ճյունը հալվելու ժամանակ, իսկ ամառը, սարերում առաջացող հեղեղներից հետո,—գետերը կատաղում են և ափերից դուրս գալիս: Նրանց մեծ մասն ամառը ցամաքում է :


Բուսականությունը: Դրիմի հարավային ծովափում մշտադաշտար բույսեր շատ կան: Նրանց տերևները կոչում են և ծածկված հաստ թաղանթով: Այսպիսի բույսեր վոչ ամառային չոպից են վալենում, վոչ ել ձմեռային ցրտերից: Նրանք ամբողջ տարին պահպանում են իրենց սաղարթը: Այդպիսի բույսերից են քաղեղը, վոր փաթաթվում են ծառերին: Նա իր ճանկերի միջոցով բարձրանում և ծառերի գաղաթները և իր կոշտ, մութ-կանաչ տերևներով ծածկում նրանց :

Բայց Դրիմի հարավային ծովափին վայրենի բուսականություն քիչ կա: Բույսերի մեծ մասն աճեցրել են մարդիկ: Այստեղ հաջողությամբ աճում են մանավանդ մի քանի մշտադաշտը բույսեր, վորոնք բերվել են ուրիշ մերձարևագարձային շրջաններից, դրանցից աչքի յեն ընկնում դափնին (ունի հոտավետ և կոշտ տերևներ, վորոնք գործ են ածկում կերակրի մեջ, վորոնես համեմունք), ձիթենու ծառ, վորի պտուղներից ընտիր յուղ և ստացվում, կիսարիսը (փշտերե ծառեր են) տնկում են պարկերում զարդարանքի համար: Այդիներում հաճախ տնկում են դիմանդրեր և մազենիլիաներ:

Խոտարույսերը ծովափին փոխվում են տարբա յեզանակների համեմատ: Վաղ գարնանը, արևից տաքացաղ լանջերին ծաղկում են ձնձաղիկներ և մանուշակներ:

Այսուհետեւ վառ կանաչով ու ծաղիկներով ծածկվում են ամբողջ ծովափը: Ամառվա չողերին կանաչ խոտերը գեղնում, չորանում են: Նրանց փոխարինում են նոռը, կոշտ խոտերը, վորոնք ծածկված են լինում փշերով: Այժմ սուր կերպով աչքի յեն ընկնում մերկացած հողամասեր, քարակույտեր և խիճ:

Միայն այնտեղ, վորտեղ գետակ և հոսում կամ առու յեքըչում, ամբողջ տարին լինում են խոտեր, վառ ծաղիկներ:



Նկ. 65. Թաթարական գյուղ

Բարձրանալով լեռները մենք տեսնում ենք, վոր յեղանակը հետղետեւ զովանում է և նույնիսկ անձրևներ են գալիս: Դրա հետ փոխվում է և բուսականությունը: Լեռնալանջերում գեռյերեւում են կենտ-կենտ Դրիմի սոնիներ, այնուհետև սոնու ամբողջ անտառներ:

Սիելի բարձր, վորտեղ շատ անձրևներ են գալիս, յերեսում են նաև սաղարթավոր ծառեր՝ Կաղնի, հացի, հանարի և շատ քփուտեր:

Դրիմի լեռների մի քանի տեղերում գեռ պահպանվել են յերկու հարյուրամյա կաղնու անտառներ:

Դրիմի լեռների գաղաթները տափակ են. Նրանք ծածկված են լեռնային մարգագետինների կամաչ գորգով:

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը Դրիմի անտառներն անխնա վոչնչացվում եյին: Դրա չնորհիս հողի մեջ խոնավությունը պակասեց, մի քանի գետեր ցամաքեցին:

Անտառները լեռնալանջերում պահպան են անձրևի ջրերը,

պաշտպանում են գետերն ու առուները ցամաքելուց, անտառները շատ ջուր են գոլորչիացնում և դրանով մեծացնում են ամսաժամությունը։ Այդ պատճառով անտառների պահպանումը կարեւոր նշանակություն ունի Նրիմի ծովափի չոր կլիմայի համար։

Այժմ Նրիմում պահպանվում են անտառները։ Մի քանի անտառամասեր դարձված են արգելավայրեր։ Այստեղ արգելված է ծառ կտրել, ծաղիկ պոկել, կրակ վառել, վորսորդություն անել, նույնիսկ քարերը տեղահան անել և կողեզիաներ հավաքել։

Կենդանական աշխարհ։ Նրիմի կենդանական աշխարհն աղբատ է, նաև սաստիկ վոչնչացման է յենթարկվել մարդու կողմից։

Այստեղ շատ մողեսներ ու ոձեր կան, բայց նրանց հեշտ չի նկատել։ Նրանց գույնը նման է շրջապատող այն ժայռերի և քարերի գույնին, վորոնց վրա նրանք տաքանում են։ Մարդու մոտենալու ժամանակ մողեսները վայրկենապես թաղնվում են ձեղքերում։

Տաք արև որերին ողբ լցված է լինուած խոշոր միջատների զիլ ճթճթոյալ։ Ամբողջ որը լավում են այդ ձայները ծառերից։ Թվում են, թե հնչում ե ամեն մի ճյուղ, ամեն մի տերեւ։

Սարերի վրա պատահում են և ուրիշ կենդանիներ։ Յերբեմն պատահում են յեղջերուներ և վայրի այծեր։ Անմտաշելի ժայռերում բուն են գրել արծիվները։


### ՂՐԻՄԻ ԾՈՎԱՓԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նրիմի հիմնական բնակչությունը թաթարներն են։ Թաթարական դյուզերը ցրված են գետահովիտներում և Նրիմի լեռների լանջերին։

Այստեղ ամեն ինչ քարից ե՝ աները, գոմերը, փողոցները, բակի պատերը։

Թաթարական դյուզում փոքրիկ տները—«սակլյաները» դաստիարակած են աստիճաններով։ Տան հետեւ պատը յերբեմն հենց խճը ժայռն և կազմում։ Մնացած պատերը շինված են լինում քարից և կալից։ Կտուրները լինում են տափակ հող։ Տանիք-

ների վրա քնուած են և միրդ չորացնում։ Կտուրը բակի և փաղոցի վեր և կառարում քիչ բարձր դանվող տան համար։ Գյուղի ծայրը դուրս գալու համար պետք է մի կտուրից մյուսն անցնել քարե նեղ սանդղուխքներով։



Նկ. 66. Խաղաղաբաղ

ԻՆՉՊԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ՂՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՑԻՆ ԾՈՎԱՓԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎԱՎՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՑԱՆՔՆԵՐԸ

Արև որերի շատությունը հնարավորություն և տալիս ծովափին ամեցնելու արժեքավոր կուլտուրական բույսեր։

Այդիներում հասնում են դեղնա, ծիրան, նուշ, գիրապտուղ, ընկույզ։ Ընդարձակ տարածություններ բանված են իսպոդի այգիներով և թանկարժեք տեխնիկական բույսերով։

Վորապեսզի այդ բույսերը չոգ ժամանակ չչորանան, ջուր և հարկավոր ջրելու համար։ Այստեղ, վորտեղ ծովափին ջուր կա, իրար հետեւ չարվում են պտղատու և խաղողի այգիներ, պարկեր։ Վորտեղ ջուր չկա, այստեղ չոգ ժամանակ ամեն ինչ թառածում և վոչնչանում է։

Զուրը ծովափում մեծ հարստություն ե:


Չքալոր թաթարները խորհրդայնացումից առաջ շատ վաս և յին ապրում: Դրիմի հարավային ծովափի ամենալավ հողերը պատկանում եյին կալվածատարերին և թաղավորի պալատականներին: Այստեղ կալվածք ուներ և ինքը թաղավորը:

Չքալորներին եժան չեր նստում նաև ջուրը: Նրանք շարունակ կարիքի մեջ եյին և կախված եյին հարուստներից:

Չքալոր թաթարները համարյա բացառապես անդրագետ եին:

Դրիմի ծովափի աշխատավորներն այժմ նոր կյանքով են ապրում: Հողերը, խաղողի և մրգի այգիները գարձել են սոցիալիստական սեփականություն: Անհատական տնտեսության փոխարեն ամեն տեղ կազմակերպված են կոլեկտիվ տնտեսություն, վորոնք պայքարում են տնտեսության բարձրացման և կոլտնտեսականի կյանքի բարելավման համար:

Բացված են տատնյակներով դպրոցներ, վորտեղ դասավանդումները տարիում են թաթարական լեզվով: Բացված են նաև շատ դպագարաններ, դասընթացներ հասակավորների համար:



Ակ. 07.

ԴՐԻՄԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՆՈՎԱՓԻ ԽԱՂՈՂԻ ԱՅԴԻՆԵՐԸ

Խաղողը ծովափի կարեոր բույսերից մեկն ե:

Շատ կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններ զբաղվում են գինավորապես խաղողի մշակությամբ:

Նկարի վրա ցույց է տրված խաղողի քաղը խորհրդային տնտեսություններից մեկում: Խաղողի այգին փոշել և լեռան հարավային լանջներում այստեղ շատ արև կա և խաղողի քաղցր տեսակները չուտ են հասնում: Խաղողի քաղը զնում և հաջող: Հասած վողկույզները պետք է ժամանակին կարել: Տասնյակ-ներով բանավորներ զբագված են խաղողի քաղով: Խաղողով լցված կողովները դարսում են բեռնակիր ավտոմոբիլի վրա: Լավ խճուղու վրայով խաղողը տեղափոխում են խորհրդային տնտեսության սպահեստը: Այստեղից խաղողի մի մասը կուղարկեն սանատորիաներ՝ հիվանդների և հանգստացողների համար. մի մասը կտեղափոխեն հյուսիս, հեռավոր պրոլետարական քաղաքները. մի մասից ել զինի կապարաստեն:

ԴՐԻՄԻ ԽՍՀՄ-Ի ԿԵՆՍԱՐԱՆՆ Ե

Զոր և տաք կլիման, ծովային մաքուր ողբ, խաղողը և մըրգերը շատ հիվանդների յեն դրավում դեմի Դրիմի հարավային ծովափը: Դրիմն ողտակար և մանավանդ թոքախտավորների համար:

Բայց մինչ հեղափոխությունը Դրիմի հարավային ծովափի բնության առողջարար ուժերն աշխատավորների համար մատչելի չեյին: Ցարի և պալատականների պալատներն ու հարուստների ամառանոցներն այժմ դարձել են աշխատավորների համար հանգստի տներ և սանատորիաներ: Ցարական ամենալավ պալատում շինել են կոլտնտեսականների համար սանատորիա:

ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՑԵԶԵՐՔԸ

Կովկասի Սևծովյան յեզերքը գտնվում է Դրիմի ծովափից դեպի արեւելք:

Քարտեղի վրա ցույց տվեք Կովկասի Սևծովյան յեզերքը: Ծովեզերքի ընդհանուր տեսքը:


68-րդ Ակարով ցույց և աված Կովկասի Սևծովյան յիշերքը  
նոյեմբեր ամսին:

Մովափը հեղեղված և արևով: Ուղարքան տաք և, վոր նո-  
յեմբերին մարդիկ ժան են դալիս թեթև հագուստով, իսկ վո-  
րանք լողանում են ծովում: Մովափինյա լանջին տնկած են ման-  
գարինի և նարնջի ծառերի այգիներ:

Վոսկեգույն նարինջներն ու մանդարիններն արդեն հասել են  
և պարզ յերեսում են տերեների մութ կանաչի մեջ: Շուտով  
կոկովի բերքահավաքը և ստացած բերքը կուղարկվի ԽՍՀՄ-ի  
զանազան քաղաքները:

Այդու կողքով անցնում ե մի հրաշալի խճուղի: Սլանում և  
ավտոմոբիլը, վորի մեջ նստած են հիվանդներ: Նրանք դնում են  
ուսրի լանջին տեղակորված սանատորիան: Սանատորիայի առաջ  
դցված և պարկ:

Սանատորիայից յերեսում ե դետի հովիտը և կամուրջը: Այս-



Նկ. 68. Գոմեշները ծանրություն են փոխադրում  
տեղ աճում են թանգարժեք կուլտուրական բույսեր: Մշակված  
հողամասերը չըջաւագագած են անտառներով: Խիտ և դժվարան-  
ցանելի անտառները ծածկում են ծովերգերքը և լեռնալանջերը:

Մովեկերքը դեղեցիկ թեքվածքներով անցնում ե Հեռուները  
Ափերի մոտ ծփում և տաք, յերբեք չսառչող ծովը: Մովե-  
կերքի վրա բարձրանում են լեռներ, վորոնք պաշտպանում են  
այդ ծովեկերքը հյութիսային ցուրտ քամիներից: Նրանց առան-  
ձին զաղաթները ծածկված են ձյունով:

### ԲՆՈՒԹՅՈՒՆԸ

Մակերևույթի կազմությունը: Կովկասի Սևծովյան ավերն  
ամեն տեղ նույն լայնությունը չունեն (հետեւեղ քարտեզի մի-  
ջոցով):

Հյուսիսարևմտյան մասում Կովկասյան լեռները հասնում  
են համարյա մինչև ծովեկերքը: Դեպի հարավ-արևելք լեռները  
հեռանում են ծովից և այստեղ, գետահովտի յերկարությամբ  
ստացվում ե մի ցածրադիր հարթություն, վոր կոչվում ե Կոլ-  
խիդյան դաշտավայր:

Ամբողջ ծովեկերքը դարձած և դեպի տաք ծովի կողմը:  
Նրա վրա բարձրանում են Կովկասյան լեռները, վորոնք 2—3  
անգամ բարձր են Ղրիմի լեռներից: Շատ զաղաթներ ծածկված  
են հավերժական ձյունով և սառուցյներով:

Կիխմա: Մովեկերքի կիխման խոնակ և մերձարևադարձային:

Մայի կողմից փչող արևմտյան քամիները դեպի ծովափին են  
քերում մեծ քանակությամբ խոնավություն: Այս խոնավու-  
թյունն առատորեն թափվում է լեռնալանջերում:

Կովկասյան ծովեկերքին մենուը նույնպես ձյունու և ցուրտ  
չի լինում, ինչպես Ղրիմի հարավային ծովափերին: Ամառը  
նույնպես յերկարան է և շոգ: Բայց տեղումներն այստեղ ա-  
վելի առատ են: Անձրեները գալիս են ամբողջ տարին: Շատ  
անձրեներ լինում են մանավանդ ամառը: Յերեւմն մեկ որվա մեջ  
այստեղ այնքան անձրև և գալիս, վորքան ԽՍՀ Միության ուրիշ  
տեղերում մի տարվա մեջ: Բաթումի շրջակայքը ԽՍՀՄ-ի ամե-  
նախոնավ տեղն է:

Գետերը: Կովկասյան լեռներից շատ գետեր են հոսում դե-  
պի ծովափը: Նրանց մեծ մասը հոսում է լեռների ձյունի սա-  
ռուցյների տակից: Նրսոնք կատաղորեն ցած են հոսում լեռնե-  
րից, իրենց հետ տեղափոխելով մեծ քահակությամբ քարեր, ա-

վազ և տիղմ: Հարթության վրա նրանց հոսանքը դանդաղում ե, և ջրերը թողնում են այտեղ սարերից բերած քարերը, ավազը և տղմը: Ամառը լեռներում յեկող կատաղի անձրևներից գետերը վարչում են և ափերից դուրս դալով ծածկում ցածրադիր տեղերը:

Բուսականություն: ԽՍՀՄ-ի մեջ վոչ մի տեղ այնպիսի փարթամ բուսականություն չկա, ինչպես մեր յերկրի այս տաք և խոնավ անկյունում: Թե՛ ծովափը և թե՛ լեռնալանջերը ծածկված են անտառների ամբողջական կանաչ զանգվածներով: Ծովափնյա բնակչությունը շարունակ պայքարում է այս կատաղի բուսականության գեմ: 1—2 տարվա մեջ աչքաթող արած վարելահողը ծածկվում է յերկու մետր բարձրություն ունեցող ձարխոսով կամ հինգ-վեց մետր բարձրություն ունեցող անտառով:

Ծովափնյա անտառները բաղկացած են բազմազան ծառերից. նրանց մեջ պատահում են նաև պտղատու ծառեր՝ տանձենի, սալորենի, խաղողի վորթ: Քիչ չեն նաև մշտադալար բույսեր՝ դափնին, դափնակինասենին, ծառերը փաթաթված են պատառուկներով: Նրանցից վոմանք ունեն սուր-սուր փշեր: Այսպիսի խճճված անտառների միջով առանց կացնի կամ լավ խանչալի շարժվել չել կարելի, ամեն մի շարժում անելիս փշերը բռնում են մարդու շորը և խրվում մարմնի մեջ:

Խիտ ու դժվարանցանելի յեն մանավանդ կոլխիդայի դաշտավայրի կիսահեղեղված անտառները: Մի քանի տեղերում մետայն անտառը հետ և քաշվում, վորպեսզի տեղ տա ճահճուտներին, վորտեղ մարդ կարող է խեղդվել կամ հիվանդանալ կովկասյան մաշող տենդով:


Դեպի վեր, լեռնալանջերում կլիման փոխվում է, փախվում և է բուսականությունը: Անտառներում անհետանում են մշտադալար բույսերը և լիանները (պատառուկները): Յերեսում ևն ծառերի ուրիշ տեսակներ: Ավելի բարձր դալիս են լեռնային ժարդադարինները, իսկ հետո հավերժական ձյունը և սառուցյը:

Հողեր: Անգրկովկասի Սևծովյան յեղերքին պատահում են առանձին տեսակի կարմիր հողեր «կարմրահողեր»: Դրանք ուժենալով հողերն են այնպիսի թանգարժեք բույսերի համար, ինչպիսին են թեյը, կիտրոնը, նարինջը, մանդարինը:

Կենդանական աշխարհ: Կենդանական աշխարհը նույնական փոխվում է բարձրության և բուսական աշխարհի հետ: Սևծովյան յեղերքի մոտ լեռներում պահպանվել են բազմաթիվ խոչընդունակներ, վորոնք յերկրագնդի ուրիշ տեղերում հազվագյուտ են: Առաջ թաղավորը և իր մերձավորները զալիս եյին այստեղ վորսի: Իսկ այժմ կենտղործկոմի վորոշման համաձայն այստեղ սահմանված է մի արգելավայրը 350 հազար հեկտար տարածությամբ: Այս արգելավայրի նպատակն է պահպանել կովկասյան բնությունն իր բուսական և կենդանական աշխարհներով:

Այստեղ ապրում են յեղերուներ, լինձառյուծներ, հովազներ: Բարձր լեռներում պատահում են լեռնային վոչխարներք ժայռերի և անմատչելի ծերպերում բուն են դրել արծիվները:

Սևծովյան յեղերքի տաք կլիման ոգտագործվել է կապիկները:



Նկ. 69. Թեյի տնկարանում

բազմացնելու համար, վորոնք պետք են գիտական նպատակների համար: Ծովափին հիմնել են կապիկների բուծարան:

Վորպես աշխատավոր անասուններ ծովափին պահում են գրմեչներ: Սրանք ուժեղ կենդանիներ են, վորոնք կարտղանում են ծանր բեռներ փոխադրել նույնիսկ լեռներում: Գոմեչները

կարող են ապրել միայն տաք կլիմա ունեցող յերկրներում : Նրանք ծածկված են հաստ, համարյա բրդից զուրկ կաշվով :

Առաջադրություն 1. Դրէմի հարավային ծովափի կլիման համեմատեցիք Կովկասի Սևծովյան ափերի հետ :

2. Ինչո՞ւ Կովկասի Սևծովյան յազերքն ավելի խոնավ է :

3. Ինչո՞ւ Կովկասյան ծովեզերքի բուսականությունն ավելի հարուստ և յիշմի բուսականությունից :

### ՄԱՎԵԶԵՐՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵԼ ՆՐԱ ԶԲԱԴՄՈՒՆՔԻ

Կովկասի Սևծովյան յեզերքին ապրում են Կովկասյան ժողովուրդներ՝ արխազներ, անարացիներ և վրացիներ :

Մովելերքի մեծ մասը բունել են արխազները և աջարացիները :

Արխազների գլխավոր զբաղմունքը յերկրագործությունն է : Նրանք ցանում են յեզիստացորեն, մշակում են նաև խաղող : Բայց խաղողի մշակությունը լավ հմտքերի վրա չի դրված . խաղողի վարթը սովորաբար աճում է ազտա, փաթթաթվելով ծառերին : Ազգաազների զրոյերը ցրված են առանձին-առանձին աների ձեռք . յուրաքանչյուր առան շրջապատված և խաղողի և մրգի այդիներով և յեզիստացորենի արտերով : Տները հյուսված են ճիշտաներից կամ շինված են տախատակներից, որդապատված են զատաշլամբներով և դրված են սյուների վրա :

Այստեղ կարելի յե ապրել և առանց տաք տների : Աջարացիք ապրում են ծովեզերքի հարավային և Հարավ-արևելյան մասում, ընդհանուր սումամբ ունեն նույն կենցազը, ինչ-որ արևագցիք :

### ԻՆՉԵՍ Ե ԶԱՐԳԱՆՈՒՄ ԿՈՎԿԱՍԻ ՍԵՎԾՄՎՅԱՆ ՅԵԶԵՐՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԵՎ ԲԱՐԵԼԱՎՎՈՒՄ ՆՐԱ ԿՑԱՆՔԻ

Մանր եր Կովկասի և Սևծովյան յեզերքի ժողովուրդների կյանքը ցարական Ռուսաստանում :

Ցարական կառավարությունը զենքի ուժով տիրեց կովկասյան ժողովուրդներին և զրավեց ամենալավ հողերը :

Արխազներն ավելի համար դիմագրություն ցույց տվին Կովկասին ափապետելու ժամանակի : Յառհյակ տարիներ նրանք կը ունեմ եյին ցարական կառավարության դեմ :

Վերջապես, ըջապատմագելով ցարական մեծ բանակների յերկաթե աղակով, արխազներն ստիպված յեղան անձնատուր լինել : Շատերը նրանցից մեռան դենքը ձեռքերին, իսկ մի քանի հաղարմարդ ել գաղթեց թյուրքիա :

Ավերիքած՝ հողերը ցարական կառավարության կողմից առանցորդն ըստանվում եյին սպաներին և չինովնիկներին :

Բնակչության գտնան շահագործման միջոցով այստեղ սկսեցին մշակել ծխախոտ, թեյ, կիտրոն և մանղարին :

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Կովկասի Սևծովյան յեզերքի բնակչության կյանքը նոր թափ ստացավ :

Ամբողջ ծովեզերքին ցրված են կոլեկտունը և խորհրդային անտեսություններ, փորտեղ մշակում են թանգարժեք կուլտուրական բույսեր՝ թեյ, կիտրոններ, նարինջ, մանղարին, զանազան տեխնիկական և դեղաբուռ բույսեց :

Գետերի հովիտներում կառուցում են գործարաններ : Անց են կացնում նոր խճուղիներ և յերկաթաւղիներ գիպի ծովեզերքի բուրքերը :

Ամենահեռավոր զյուղերում պայքարում են անգրագիտության գեմ, կառուցում են հրվանդանոցներ, դպրոցներ, վորտեղ գասապությունը տարվում և պազարնակչության մայրենի լեզվով :

Ծովեզերքի պալատներն ու ամառանոցները զարձրել են սահմանադրիսներ : Կառուցված են նոր սանատորիաներ և հիմնադրանոցներ :

Կովկասյան ծովեզերքը, նովուստիյակից մինչև Բաթում, ԽՍՀՄ-ի ծաղկած անկյունն է :

Ամբողջ ծովեզերքով անցնում ե խճուղի : Դեղեցիկ զալարումներով նա մերիթ իջնում է զեպի ծովը, մերթ բարձրանում լեռները, կամ կամուրջներով անցնում է բարձրթիվ լեռնային գետերի վրայով : Ամբողջ ճանապարհի յերկարությամբ ձգված են մրգի և խաղողի այդիներ, ծխախոտի պլանտացիոններ, արմա-

վենիների և կիպարիսների պարկեր, զեղեցիկ սանառորիաներ և հանգստի տներ:


Կուտակցությունը վորոշել և կոլխիդի դաշտավայրն իր ճահճներով, տենդով և անանցանելի անտառներով դարձնել ծաղկած այդի:

### ԿՈԼԽԻԴԻ ՃԱՀՃԻՑՆԵՐԸ ԾԱՂԿԱԾ ԱՅԳԻ ԿԴԱՌՆԱՆ

Կոլխիդի հարթությունը գտնվում է Բաթումից դեպի Հյուսիս-արևելք:

Քարտեզի վրա դաշտ կոլխիդի դաշտավայրը: Նա գտնվում է Բաթում քաղաքից դեպի Հյուսիս-արևելք:

Դեռևս քիչ առաջ կոլխիդի դաշտավայրը ծածկված եր ճահճուտներով և անանցանելի անտառներով, վոչ ճանապարհներ կային, վոչ հարմար արահետներ: Մարդիկ իրար հետ հաղոր-



Նկ. 70.

դակցություն ելին պահպանում դետերի միջոցով: Նոր բնակչությունը բնակություն եր հաստատել ավելի բարձր աեղերում: Փոքրիկ հողամասերը բոնված ելին յեղիպատրունով և խաղողով: Բնակիչները հիվանդանում ելին տենդով: Նրանք շարունակ պայքար ելին մզում անտառների դեմ, վորոնք առաջ ելին շարժվում դեպի վարելահողերը, և գետերի դեմ, վորոնք վարարման ժամանակ սպասնում ելին վոչնչացնել ցանքսերը:

Այժմ կոլխիդան արագորեն փոխվում է: Անանցանելի ճահճները չորացվում են առուների խիստ ցանցի ոգնությամբ: Անց են կացնում նոր ճանապարհներ: Կտրտում են քիչ արժեք ունեցող անանցանելի անտառները:

Այժմ արդեն ճահճներից խլված ե մի քանի հազար հեկտար հող: Յեզ այստեղ, վորաեղ քիչ առաջ ճահճուտներ ելին, այժմ աճում են արմավենիներ, մշակում են թանգարժեք բույսեր, յերեան են գալիս նարնջի, կիտրոնի և մանդարինի ծառերի այգիներ, ավելի ու ավելի յեն ընդարձակվում թեյի տնկարանների տարածությունները: Յերևան են գալիս թանգարժեք տեխնիկական բույսերի տնկարաններ:

Զինական յեղիթնի կամ բամիի տնկարանները տալիս են բարձր վորակի մետաքսանման թելիկներ:

Տունօպայի ծառի տնկարանները տալիս են ձեթ՝ լավ տեսակի լաք պատրաստելու համար:

Կառչուկարեր բույսերի տնկարանները սրանց Հյութից պատրաստվում ե ոետին:

### ԹԵՑԻ ՏՆԿԱՐԱՆՈՒՄ

Գնացքն արագորեն ոլանում եր աղմկոտ Բաթումից դեպի Զակված: Մեր մոտով մեկը մյուսի հետեւց անցնում ելին ծաղիկների մեջ թաղված տներ, թփերի և բարձր ծառերի խիստ մացառուուններ, վամթաթված վշու պատաստուկներով: Ծառերի կոշտ, մութ կանաչ տերևները վայլում ելին անձրևի տակ:


Աննկատելի կերպով անցանք 13 կիլոմետր Հյուսիս-արևելյան ուղղությամբ: Գնացքը կանդ առաջ Զակվայում: Դուրս յեկանք վագոնից: Արմավենիների ծառուղին տանում ե դեպի բամբուռի, մանգարինի և թեյի տնկարանները:

Մենք ուզերվեցինք դեպի թեյի տնկարանը։ Վայրը ըլլուս  
եր։ Էլուրների լանջերին կանոնավոր շարքերով տնկած եյին թեյի  
թփեր։ Երանք իրենց մութ կանաչով սուր կերպով ջոկվում եյին  
կարմիր հողի վրա։ Մի քանի հարյուր մարդ պսկոտում են թեյի  
վերին տերենները և դարսում կողովների մեջ։

Թեյի տերեններով լի կողովները բնոնակիր ամսումոքիլնե-  
րով անդախուսում են թեյի Փարբիկան։

Ֆարբիկայում թեյի կանաչ տերեններից ստանում են այն  
թեյը, վոր մենք գցում ենք թեյամանի մեջ գույն ստանալու հա-  
մար։

Թեյի տնկարանները կովկասյան ծովափին ներկայումս առա-  
նյակ հաղար հեկտար տարածություն են բանում։ Մեծ քանա-  
կությամբ թեյ արտադրում են կողեկտիվ տնտեսությունները,  
վորոնք միացրել են տասնյակ հաղար գյուղացիական տնտեսու-



Ալ. 71. Կիրճ

թյունները, և խորհրդացին անտեսությունները։ Կոլեկտիվ տըն-  
տեսություններին ոգնություն հասցնելու համար հիմնվել են հա-  
տուկ թեյի մեքենատարակտորային կայաններ։ Խորհրդացին  
տնտեսություններում զործադրվում են բազմապիսի մեքենաներ։

### Բ Ա. Թ Ո Ւ Մ

Կովկասի Սևծովյան ափին գտնվում և համամիութենական  
նշանակություն ունեցող նավահանգիստ՝ Բաթումը։ Այստեղից  
արտասահման են փոխադրվում նավթ, միրզ, մետաքս։ Բաթու-  
մը արդյունաբերական և թանդարժեք մերձարեալարձային բոյ-  
ուրի՝ թեյի, նարնջի, մանղարինի, կիրոնի և ուրիշ տեխնիկա-  
կան բույսերի կենարան է։

Վարժությունների կազմության քարտեզի վրա նշանակեցներ Բաթում և Նո-  
վորոսիյակ քաղաքները։

Աշխատանիք արտադայան մամանակ։ Կազմեցեք ալուս և ԱՀՄ-ի մերձ-  
ութեալարձային դռության թեմայով։

### 8. Լ Ե Ռ Ն Ե Ր

Մեր Միությանը, ինչպես զիտեք, Հսկայական Հարթու-  
թյունների յերկիր և։ Լեռները գտնվում են միայն ծայրամասե-  
րում։

ԽՍՀՄ-ի ֆիզիկական քարտեզի վրա գտնեք Խիրինյան, Աւրալյան, Կով-  
կասյան, Ղրիմի, Ալտայան, Տյան-Շան լեռները և Պամիր լեռնաշխարհը։

Լեռները գտնվում են տարբեր զոնաներում։ Աւրալյան լեռ-  
ներն ունենալում են հեռավոր հյուսիսում՝ տունդրացի գոնայում,  
տայզայի և սևահողացին տափաստաններով ծղվում են զեզի  
հարավ և վերջանում չոր տափաստաններում։

Կովկասյան և Ղրիմի լեռները գտնվում են մերձարեալար-  
ձային և տափաստանների զոնաների միջև։

Տյան-Շանի լեռները և Պամիր լեռնաշխարհը գտնվում են ա-  
նողասանների զոնայի ծայրամասում։

Վոր զոնայում եղ զանվելիս լինեն այդ լեռները, նրանց  
բնությունն, ինչպես զիտեք, բարձրության հետ փոխվում ե-

վորքան ավելի բարձր են լեռները, ձմեռն այնքան ավելի ցուրտ ե լինում. բարձր լեռների գաղաթները ծածկված են հավերժական ճյուղով և սառույցով:

Կլիմայի փոխելու հետ փոխվում է և բուսականությունը և կենդանական աշխարհը:

ԽՍՀՄ-ի լեռները տարբեր բարձրություն ունեն: Նրանցից ամենաբարձրը Տյան-Շամի լեռներն են. Պամիրում գտնվում է ԽՍՀՄ-ի ամենաբարձր գաղաթը՝ Մամինի գաղաթը, վորի բարձրությունն է 7½ կիլոմետր:

Քարտեզի վրա զանք Ստալինի գտաբեր:

ԽՍՀՄ-ի Ֆեզէկական քարտեզին կցած ազյուտակի և նկարի մէջոցով իմացեք՝ 1) ինչպես են կոչվում հիշած լեռների ամենաբարձր գաղաթները, 2) նրանք վո՞րտեղ են զանգում:

---

Լեռները ձգվում են մեկը մյուսի հետեւից և կազմում են լեռնաշխաներ: Բարձր լեռների գաղաթները բարձրանում են ամպերից ել վեր: Արևի ճառագայթների տակ շլացնող փայլով պապղում և հավերժական ձյունը: Այսպիսի բարձրության վրա վոչ վոք չէ ապրում: Միայն արծիվներն են թռչում լեռնազագաթների մոտով:

Ձյունի զանգվածների ճնշման տակ ձյունապատ գաղաթներից դանդաղորեն հոսում են սառույցները: Հեռվից նրանք սառցագետերի յեն նմանվում: Դրանք սառցագալաշտերն են: Հոկայտական ուժով նրանք հզկում են ժայռերը, պոկում են քարեր և ժայռերի կարոներ են իրենց հետ ցած տանում:

Գահապիթվելով ժայռերից, նրանք կոտրտվում են, փշվում. և կազմում սառցակոշտեր, սառցասյուներ, սառցաժայռեր:

Սառցալաշտը դանդաղորեն ավելի ու ավելի յե ցածրանում: Բոլորովին վերջում նրա տակից բղխում և լեռնային գետակը և հոսում գեղի ցած: Աղմուկավ և զզրդոցով գլորում ե քարտկույտեր: Այսպիսի հեղեղները ժայռերի մեջ փորում են սեպաձև լանջերով խոր կիրճեր:

Այդպիսի կիրճերի միջով հաճախ կտուազի հեղեղներ են հոսամ: Ամեն մի սառցալաշտից մի այդպիսի հեղեղ և առաջ զա-

լիս: Յեկ այդ բոլոր հեղեղները գահավիթվում են գեղի ցած, դեպի հովիտները:

Թվում ե, թե լեռնաշղթաներն անմատչելի յեն, բայց մարդիկ այստեղ նույնպես լնակություն են հաստատել:

Լեռնցիների գյուղերը ցրված են լոռնալանջերում և հովիտներում: Նրանք բարձր լեռներով բաժանվում են իրարից:

Լեռների գաղաթների միջև ողատահում են ցածր տեղեր, վորտեղով լեռնցիներն անցնում են լեռնաշղթան: Այդպիսի տեղերը կոչվում են լեռնանցքներ: Լեռնանցքների վրայով անցնում են ճանապարհներ, վորով գյուղերը կասպվում են իրար հետ:

### ԿՐՎԿԱՍԻ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Լեռների ստորաներում: Մի խումբ ճանապարհորդներ վորոշեցին բարձրանալ կովկասի ամենամեծ սառցալաշտերից մեկը: Նրանք հավաքվեցին Նալչկում, վորը գտնվում է կովկասյան լեռների ստորոտում:

Ամառային մի չոր որ եր: Վարդը ծաղկում եր, դաշտում լցվում եյին յեղիպտացորենի հատիկները, բոստաններում հասնում եյին սեխն ու ձմերուկը: Այդիներից կողովներով շուկա եյին գուրս բերում խաղող, ծիրան, խնձոր, տահճ:

Լեռնալանջերը ծածկված եյին հաճարի խիտ անտառներով: Հաճարի անտառներից բարձր սեխն եյին տալիս փշատերեւ անտառները: Ավելի բարձր կանաչին եյին տալիս ալպյան մարգագետինները, և սուր կերպով բարձրանում եյին անմատչելի ժայռերի պատերը: Իսկ բարձրունքներում կապույտ յերկնակամարի վրա յերեսում եյին լեռների ձյունապատ գաղաթները: Տարորինակ եր թվում, վոր տարվա այս չոր յեղանակին լեռները ծածկված են ձյունով:

Դեպի արոտավայրերը: Յերկու որվա ճանապարհ անցանք: Հաճարի անտառները մնացին ներքեւում: Յեղենու անտառներն սկսեցին նոսրանալ: Լեռնային արահետը, վորով մենք առաջ եյինք գնում, սաստիկ վողողված եր: Ցածում, մեր տակն աղմը կում եր անտեսանելի հեղեղը: Մեր գլանավերել գեղի վեր եյին ձգվում ահուելի ժայռեր: Նույնպիսի սեպաձև ժայռեր գտնվում եյին նաև հեղեղի մյուս տփին: Տեղ-տեղ արահետը լրեց վորով-

վել ու քանզվիլ եր։ Մեր եշերը, բարձած շորերով, վրաններով և ուսեմիջով, հազիվ եյին քաշ տալիս իրենց վարչերը և շուտ-շուտ սայթաքում եյին։ Մեր առաջնորդները շարունակ բռնում եյին նրանց, վոր նրանք անդունդը չգործվեն։

Նեղ արահետով զվարապտուային բարձրության վրա յերկար վերելքը մեղ սասափի հսկնեցրեց։

Արաւակայրերում։ Վերջապես մենք մտանք մի վառ կանաչ հովիտ, վորի մեջ հոսում եր կատաղի, պղաոր ինդեղը։ Հարժար արահետը զալարվում եր խիտ խոտով ծածկված մարդագետին-ների միջով։ Վոտքներին տակ թաց եր, առուները քչքչում եյին։ Դա խոտհարքերի արհետական վոռովումն եր։ Արհետական վոռովման շնորհիվ և միայն, վոր այսաեղ աճում են վառ, խոչոր, հոտավետ ծաղիկներ ունեցող հյութալի խոտեր։ Ահա և վերջին ծառերը—ցածլիկ սոնիները և կեչիները։

Նրանցից հետո սկսվում են լեռնային մարդագետինները։ Բաց լանջերում անասելի այրում եր արել։ Գետինը ծածկված եր ցածլիկ, բայց հյութալի խստով։ Առաների միջից նայում եյին համարյա ցողուններից զուրկ, մեծ և վառ ծաղիկներ։

Հանկարծ մեր առաջ, կարծես զետնի տակից, զուրս յեկայի հովիվ-պապը։ Շուտով լսվեց մայուն և վոչխարները հետաքըր-քըրությամբ ըլխապահեցին մեզ։ Մերոնին մեղ տարավ իր բնակարանը։ Լեռներից ընկած հսկայական քարը դեմ առնելով ուռիշ քարերի՝ առաջացրել եր բնակարանի պատեր և առաստաղ։ Սյա այրի ներսը փոված եյին փոխարի մորթիներ, փայտե զույլերը լիքն եյին մածնով և պանրով։ Այստեղ պապն ամբողջ որերով սպասում ե արածող հոտի վերադառնալուն զառնարածների հետ և մեծ վարպետությամբ փայտե զգալիներ և շինում։ Մենք այստեղ գիշերեցինք, վորպեսզի նոր ուժով շարունակենք մեր վերելք։

Սաոցաղաշու։ Դեռ լույսը չբացված զարթնեցինք։ Մառախուղը նոսրացալ և մեր աչքի առաջ բացվեց սաոցաղաշուր։ Սաոցաղաշտի ծայրի սաոցե այրի միջից զուրս եր վազում կատաղի զետ։

Սաոցաղաշտի վրա անցնելու համար մենք զեռ պետք և անցնեյինք այն ենդեղը, վոր զուրս եր զալիս կողքի սաոցաղաշտի

տակից։ Հեղեղը քարերն իրար զարկելով աղմկում եր, կարծես պատրաստվում եր զորեկ ու տանել այն մարդուն, վոր կհանողըներ ջրի մեջ մանել։ Մեր ուղեկիցներն եշերին քշեցին ջրի մեջ։ Զուրը մինչև բեռներն եղ հասնում։ Խեղճ կենդանիները դողում եյին, հազիվ վոտքի վրա պահելով իրենց։ Եշերից մեկն ընկապ և հոսանքը կատաներ նրան, յեթե ուղեկիցը նրան պարանով չպահեր։ Մենք ձեռք-ձեռքի աված հետեւում եյինք քարվանին։ Մեր վոտքերը նույնիսկ կոշիկների, բրդե հաստ գուլպաների մեջ սառչում եյին, ամեն քայլափոխում մեր վոտքի տակից զուրս եյին պրծնում վողորկ քարեր։ Վոռնոցը և դպրոցը խլացրել եյին մեղ։ Յերբ մենք մյուս ափը զուրս յեկանք, մեր վոտքերը լարվածությունից և կրած անհանգստությունից զողում եյին։ բավական եր, վոր մեզնից վորենք մեկը սայթաքեր ու ընկներ, ջուրն անմիջապես նրան կվլորեր ու նախքան ոգնության համելը կղարկեր քարերին ու կսորից հետո մենք հասանք մի կանաչ տափարակի, վորտեղ կարելի յեր վրան զարկել։ Գետինը ծածկված եր կանաչ խոտով, քարի տակով հսում եր պարզ ու սառնորակ առուն, իսկ չըջակայքում իշխում եր ձյունապատ զաղաթներից կախկապատ սաոցաղաշտերի սաոցե լուսիւնը։ Հետեւյալ առավուտը պարզ եր, և մենք վորոշեցինք զնալ գեպի սաոցաղաշտի սկիզբը։

Սաոցաղաշտի մակերեւույթի վրա ցրված եյին մեծ ու փոքր քարեր։ Քրքչալով հոսում եյին բազմաթիվ առօններ, վորոնք աղմկելով թափվում եյին սաոցաղաշտի մեջ զանգվոզ խոր ճեղքերի կամ սատցի ջրհորների մեջ։

Ցուրտ քամին հարկադրեց տաք հազնվել։ Սառույցը և շրջապատող ճյունապատ զաղաթները վայլում ելին այնքան վառ, մեր շուրջը հեղեղված եր լույսի և կայծերի այնպիսի ծովով, վոր մենք սահմանակած յեղանք մութ ակնոցներ կրել։

Յերեք ժամ հետո մենք զանվում եյինք ճյունի պատի մոտ և հիացած կանգ առանք։ Ճանապարհի բոլոր դժվարությունները մոռացանք։ Սաոցով և ճյունով շղթայված անմատչելի քարե պատից անդադար զղբում եյին սասցե և ճյան կույտեր։

Իսկ վոտքերիս տակ փովում եր հսկայական սաոցաղաշտը։ Ամբողջ սաոցաղաշտը կտրտված եր անհաշիվ ճեղքերով ու փո-

սերով . այստեղ - այնտեղ կանգնած եյին կապույտ սյուներ , վորոնք սառցադաշտի շարժումից յերբեմն ընկնում եյին և փշք-վում :

Ամպերի մեջ : Հիացած մեր առաջ բացվող պատկերի գեղեցկությամբ , մենք դեռ յերկար կմնայինք այստեղ , բայց ցածից դեպի մեղ եր դալիս և մի քանի բոլորից հետո մեզ ամբողջապես չըջապատեց սպիտակ մառախուղը . միանդամից ցրտեց : Մենք հաղիվ եյինք իրար տեսնում սառցաջաշտի մակերեսի վրա :

Մնալը վտանգավոր եր : Կարելի յեր ճեղքերի մեջ գլորվել : Մենք սկսեցինք խարխափելով սառցաջաշտից ցած իջնել : Հանկարծ ամպերը նոսրացան , պատովեցին , և մենք ուղղակի , բարձր ափին , մեզնից ցած տեսանք վրաններ և մեր ուղեկիցներին : Վառվում եր կրակը , յեփում եր վոչխարի միսը :

Լեռնային գյուղ կովկասում : Իրիկնամուտ եր : Լեռնային արոտատեղերից իջնում եյին տղամարդիկ և կանայք : Նրանք իրենց ուսերի վրա տանում եյին տկեր , լցված մածնով , այրանով :

Արահետից բացվեց գյուղի տեսարանը : Առւլը նմանվում եր քարակույտերի , վորոնք չըջապատող ժայռերի պես նույնակա գորշ-դեղնալուն եյին : Առւլի մեջտեղ բարձրանում եր կիսա-վեր հին աշտարակը :

Ավելի հաճախ եյինք հանդիպում դարու վոքրիկ արտերի : Ամեն տեղ , վորտեղ քարերի արանքում պատահում եյին թեկուզ հողի բարակ շերտով ծածկված փոքրիկ տարածություններ , փորփրված և ցանված եր : Ահա և առւլը : Փողոցներն այնքան նեղ են , վոր յերկու բարձած եշ դժվարությամբ կարող են իրար ճանապարհ առաջ : Ցածլիկ սակլյաները չինված եյին տարբեր մեծություն ունեցող քարերից : Պատերի միջից դեպի վողոց եյին նայում փոքրիկ , առանց ապակու պատուհանները : Տափակ կտուրների վրա քամուց որորվում եր խոտը : Այստեղ մորթի փափախ գլխներին ծալապատիկ նստում են լեռնականները : Կանայք մեծ շալերը գլխներին բրդից թել են մանում . իլիկներն անդադար պտտվում եր նրանց մատների արանքում : Մի տան մոտ

կանայք լմում եյին թաղիք և յափնջի , վորից լեռնականները յեր-թեք չեն բաժանվում :


### ԽՆՉԳԵՍ ԵՆ ԱԳՐՈՒՄ ԼԵՌՆՑԻՔ

Կովկասյան զանազան ժողովուրդների գյուղերը ցրված են լեռնալանջերում և գետահովիտներում : Անանցանելի ձյուները և անմատչելի ժայռերը բաժանում են մի ժողովուրդ մի ուրիշից : Յուրաքանչյուր փոքրիկ ժողովուրդ շատ դարերի ընթացքում ապրել ե իր առանձին կյանքով : Հենց հեղափոխությունից առաջ նրանց կյանքը նույնն եր , ինչ վոր մի քանի դար առաջ :

Հեղափոխությունն ամենահետամնաց կովկասյան ժողովուրդներին արթնացրեց կյանքի համար :

### ՍՎԱՆԵԹԻԱՅՈՒՄ

Լեռների խորքում ընկած ե մի փոքրիկ յերկիր — Սվանեթիան : Նա ամբողջ աշխարհից կտրված է անմատչելի լեռներով :




Նկ. 72. Գյուղ Սվանեթիայում

Միայն մի նեղ վտանգալոր արահետ և անցնում սեպաճև ժայռի վրայով, կատաղի ինդուր գետից բարձր: Այս արահետով սվան-ներն ամառները կարողանում են կապվել մնացած աշխարհի հետ, իսկ ձմեռը հաղորդակցությունը բոլորովին կարվում է:

Այս փոքրիկ ժողովուրդը, վոր բաղկացած և ընդամենը 11 հազար մարդուց, մինչև հեղափոխությունը պահպանում եր եր հին կենցաղը և նախնական տնտեսությունը:

Սվանները մեծ ջանասիրությամբ մշակում են իրենց փոքրիկ հողամասերը: Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը գեռես մնում ելին նախնական դործիքներ, զութանի փոխարեն մի փայտի կառը գեղի ցած ծոված արմատով, վորին հազցրած եր խոփոտափանի փոխարեն—մի գերան, վորի վրա ցցված ելին ճյուղեր: Կալսող մեքնայի փոխարեն—կամ (տախտակ, վրան քարեր), վոր յեղները խուրձերի վրայով քաշ ելին տալիս: Սվաննեթիան չդիտեր, թե անին ինչ բան ե. խուրձը և խոտը սահնակներով ելին կրում, իսկ մարտեկի բեռներն անց ելին կացնում լեռներով վոտքով կամ ձիով: Բացի ձիու և վորսորդական արահետներից, Սվաննեթիայում ուրիշ ճանապարհ չկար:



Ակ. 73.

Սվանները սնոտիապաշտ եյին: Սրբազան պուրակները, ուրբազան ծառերը և աղբյուրները, սրբազան կենդանիները, չար և քարի վոգիները, լուսնին պաշտելը, աշխատանքից առաջ զոհ բերելը—այս բոլոր հնության մնացողները մեծ վնաս եյին հասցնում սվանների տնտեսությանը: Բայց ամենավատը դա արյան վրեժն է, վոր դեռևս այստեղ—այնտեղ մնացել է: Վիրավորանքի կամ սպանության համար բոլոր աղպականները վրեժ են լուծում վիրավորողի աղպականներից չատ սերունդների ընթացքում: Նրանք կարող ելին մահից աղատվել միայն այն դեպքում, յեթե թողնելին իրենց հայրենիքը:

Այդպես եյին ապրում ամբողջ աշխարհից կարված սվանները մինչ հեղափոխությունը:

Այժմ բուռն շինարարությունը յուրաքանչյուր տարի, յուրաքանչյուր ամես փառում և Սվաննեթիայի կատնքը: Սվաննեթիան աղատվելով իշխաններից, հարձակումներից և ավերումներից, այժմ շտապում և հասնել կուլտուրական ժողովուրդներին:

Աշտարակների և ծխուռված, առանց լույսի, առանց ողի, հին տների կողքին բարձրանում են վառարաններով և պատուհաններով նոր լուսավոր տներ: Սվաննեթիայի կենտրոնում վառվեցին ելեկտրական լապտերները, չինված և մեծ բաղանիք: Բայց ած են կոռպերատիվ, հասարակական ճաշարան:

Ամբողջ յերկիրը ծածկվել է գլոբոցների, հիմնագանցների, անասնաբուժական կետերի ցանցով: Յեկ քիչ սվաններ չեն սովորում մեր տեխնիկումներում և համարաբաններում:

Ինդուր գետի յերկարությամբ Սեծովյան յեղերքից սկսած կառուցված և իմուղի, վորավ կերթեկեն ավատմօրիլներ:

### ՏԵՏԵՍԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐՎԱՑՄՈՒՄ

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի ժողովուրդները միացան և կաղմեցին Անդրկովկասյան Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Ֆեդերացիա (ԱԽՖՀ):

Ամբողջ կովկասում ծավալվել է շինարարությունը: Անց են

կացվում ճանապարհներ : Այժմ նույնիսկ ամենախուզ առևլները կապված են Միության զանազան գյուղերի և քաղաքների հետ :

Սեեղծվում ե նոր տնտեսություն :

Լեռնային կատաղի գետերը, վոր սուաջ քշում, տանում եյին կամուրջները, քանդում եյին ափերը և գյուղերը, այժմ սկսում են աշխատել մարդկանց ոգտին : Արդեն կառուցվում են բաղմաթիվ հիգրոկայաններ :

Այս կայանների կառուցումը տնտեսական մեծ նշանակություն ունի : Հիգրոկայաններն եներգիա յեն տալիս ամբողջ շրջանի արդյունաբերությանը : Առաջանում են նոր արտադրություններ : Զքափոր լեռնիցք դառնում են արդյունաբերական բանվորներ : Զարդանում ե տնայնագործությունը : Ելեկորական լույսը տարածվում է լեռնային առևլներում :

Լեռների ծոցում շատ հարստություններ են թաղնված : Այնտեղ գտնվում են զանազան հանքեր, քարածուխ, թանկագին քարեր և վերջապես նավթ :

Դարերով ընկած են այս հարստությունները, հեռու մարդկանց աչքից : Պետք եր հետախուզական մեծ աշխատանք թափել և ուսումնասիրել լեռների կազմությունը, վորակեսղի այդ հարըստությունները յերեան բերվեն :

Լեռները կենդանացան : Խուլ, անմատչելի կիրճերում, ձյան սահմանում և սաղաղաշտերի մոտ, ամբողջ Կովկասում աշխատում են ինժեներների և գիտնականների հետախուզական խմբերը : Նրանք ծակում են քարը, փորում հորեր և հանում լեռնային տեսակների նմուշներ : Յերբ զանվում ե ոգտակար հանային գործուստ վորեե խալ, անմիջապես կառուցում են հոծոների հարուստ վորեե խալ, անմիջապես կառուցում են հորեր և գործարաններ :

Շատ հանքեր են դտնվել Կովկասում, Ալտայում և Պամիրում : Բայց զեռ քիչ են ուսումնասիրված լեռները : Նրանց ծոցում զեռ շատ հարստություններ են թագնված :


ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԵՐ

Հյուսիսային Սառուցյալ ովկիանոսից դեպի հարավ՝ 2500 կիլոմետր տարածության վրա ձգվում ե վոչ բարձր Ուրալյան

լեռնաշղթան : Ուրալյան լեռները կազմում են յերկու աշխարհամասերի՝ Յեվրոպայի և Ասիայի սահմանները :

ՅԵՐԿԱԹՈՒՂՋՈՎ, ՈՒՐԱԼՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱՅԻ ՎՐԱՅՈՎ

Ուժա կայարանում փոքր ինչ կանգ առնելուց հետո, զնացքն սկսում է դանդաղորեն բարձրանալ լեռները : Հովտում աղմկում ե լեռնային գետը : Նրա վրա կախվել են սեպանձե ժայռերը : Լեռնալանջերը ծածկված են անտառներով : Պարզ ու վորոշ աչքի յեն




Նկ. 74.

Ընդհում յեզենիների սուր կաստարները : Տեղտեղ պատուհում են բացատները, վորոնք ծածկված են լեռների գագաթներից թափվում քարերով :

Ուրալյան լեռները սաստիկ քայլայլել են : Սառնամանիքներից, ջրից ու քամուց նրանց գագաթները ճաքճռվել են և փշրվել, թափվել : Ուրալյան լեռներում չկան վոչ բարձր գագաթներ, վոչ խոր կիրճեր :

Ահա լեռան յետել յերեսում ե դործարան : Գնացքը դանդուդքը իր ընթացքը, ձգվում է թեք լանջի յերկարությամբ, զծում կիսաշրջան : Մենք բարձրանում ենք լեռնանցքը :

Ներքեսում յերեսում են դործարանի և մեր նոր թողարծ կայարանի կրակները : Շողեքարչն աղմուկով դուրս ե շպրտում զո-




Նկ. 75. Նոր գործարան Ռեբալում


լորշու քուլաներ : Անտառը լուսավորվում է ջողեքարշի բացով : Արդեն զիշեր և, բայց ուղևորները դեռ չեն քնել : Մենք լեռնանց քում ենք գտնվում, Յելբուզայի և Ասիայի սահմանում :

Մի քանի րոպե ևս և գնացքն ոկտում և արագորեն ցած իջնել : Գնացքը հետզհետե արագացնում է իր լիթացքը, անցնելով ժայռերի, անտառու լանջերի մոտով, իր հետեւ թողնելով Ռեբալյան լեռների վոչ բարձր գագաթները : Մեր առաջ այժմ լացվում են տափաստաններ, արտեր : Ռեբալն արգեն հետ և մնացել :

Ռեբալյան լեռներն իրենց հարստություններով վազնոց արդեն հայտնի յեն : Ռեբալի ընտերքում գտնվում են մեծ քանակությամբ վուկի, պղինձ և յերկաթի հանքեր :



Նկ. 76. Մագմիտոգորսկի գործարանի դումնամերը



Նկ. 77. Ստալինսկի քաղաքը

Ուրալյան լեռների հարավային մասում Ուրալ դեակի վերին հոսանքի մոտ գտնվում է Մազնիտնայա լեռը։ Նա համարյա ամբողջապես բաղկացած և ամենահարուստ յերկաթահանքից։ Հանքն այստեղ գտնվում է ուղղակի յերկրի մակերեսույթի վրա։

Հեղափոխությունից առաջ Մազնիտնայա լեռան հանքերը ձեռքով եյին մշակում, և միայն լեռան մակերեսույթից հանքը ձիերով եյին տեղափոխում։ Մազնիտնայա լեռան մերկ լանջերը ծածկված եյին բարձլենյակով։

Այժմ Մազնիտնայա լեռան մոտ, յերկու տարվա ընթացքում աճեց մի նոր քաղաք—Մազնիտոգորսկը։ Կառուցվեց գիգանտ մետաղագործարան, կառուցվել են աշխարհում ամենամեծ դոմնաները։ Լեռան լանջին մշակում են յերկաթահանքը։

Լսկում են խլացնող պայթյուններ և տառնյակ հաղարավոր տոնն հանքը խլվում է յերկրի ընդերքից։ Հզոր եքսկավատորները բարձրացնում են հանքը և լցնում գնացքը գործարան ուղարկելու համար։ Այստեղ աշխատում են հաղարավոր բանվորներ։

Գործարանում ամեն ինչ մեքենայացված և այստեղ աշխատում են արդեն ամենալավ մեքենաներն ելեկտրականության ողնությամբ։

